9(55)
Ի-89

ԱԿԱՆ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ

ԻՐԱՆ

ԵՐԵՎԱՆ 1946

Թարգմանությունը կատարված է «Սովետական Էնցիկլոպեդիա» Պետական Գիտական ինստիտուտի հրատարակած „Страны Ближнего и Среднего Востока տեղեկատուից։

Ռուս. թարգմ.՝ Տ. ԴԱՎԹՅԱՆ
Պատ. խմբ.՝ գրականագ. Ս. ԲԵՐԲԵՐՅԱՆ

ԻՐԱՆ—IRAN

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրանը մի պետություն է հարավ-արևմտյան Ասիայում։ Սահմանակից է հյուսիսում ՍՍՌՄ-ին, հյուսիս-արևմուտքում՝ Թյուրքիային, արևմուտքում՝ Իրաքին, արևելքում՝ Ավղանստանին, հարավ-արևելքում՝ Հնդկաստանին։ Ողողվում է հյուսիսից Կասպից ծովով, հարավից և հարավ-արևմուտքից՝ Արաբական ծովի, Օմանյան և Պարսից ծոցերի ջրերով։ Ցամաքային սահմանների երկարությունն է 5,050 կմ., ծովային սահմանների երկարությունը՝ 2,700 կմ.։ Ցամաքային սահմանի մեծ մասը ձգվում է բարձր լեռնաշարքերի վրայով։ Սովետական Միությանն հետ Իրանը սահմանակից է 2.500 կմ. տարածության վրա, որից 750 կմ-ը՝ Կասպից ծովով։ Իրանի տերիտորիան ձգված է հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք։ Տարածությունը հյուսիս-արևմուտքից մինչև հարավ-արևելք (երկարությունը)—2.200 կմ. է, հարավ-արևմուտքից մինչև հյուսիս-արևելք (լայնությունը)՝ 1,200 կմ.։

Աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուս. լայնութ. 25° 20′—39° 40′ և արևել. երկարութ. 44°—63°։

Տերիտորիան (հազ. քառ. կիլոմետրերով) 1.644
Բնակչությունը (միլիոններով, 1938 թ. տվյալներ) . . . 15
Բնակչության միջին խտությունը 1 քառ. կմ.-ի վրա . . 9

II. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ռելեֆ։ Իրանը գրավում է Իրանական լեռնաշխարհի արևմտյան մասը։ Երկրի 4/5-ը զբաղված է բարձրություններով, գագաթները տեղավորված են միայն Կասպից ծովի և Պարսից ծոցի հյուսիս-արևմտյան ափերին և կարուն գետի հովտում։ Երկրի կենտրոնում ընկած է հյուսիսից, արևմուտքից և հարավից լեռնաշարքերով շրջապատված մի ընդարձակ սարահարթ։

Հյուսիսային ծայրամասի լեռներն սկսվում են Մուղանի տափաստանից (ՍՍՌՄ հետ ունեցած սահմանում) և ձգվում են հարավ-արևելյան ուղղությամբ՝ Կասպից ծովի ափերով Թալիշյան (կամ Թալիշինյան) լեռներ անունով, որոնք կազմում են Էլբուրս լեռնային սիստեմի արևմտյան տեղամասը։ Սեֆիդրուդ գետից մինչև 55°-ը ձգվում է բուն ինքն Էլբուրսը (ավելի ճիշտ՝ պարսկական Էլբորզ)—մի լեռնային երկիր, որը բաղկացած է շեղ պատվարներով իրար հետ կապված, մի շարք համարյա թե զուգահեռ լեռնաշարքերից (մինչև 3,000—4,000 մ. բարձրությամբ), որոնք տարածվում են հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք։ Էլբուրսի լեռնաշարքերը շատ տեղերում հատված են գետերի նեղ կիրճերով, սակայն Էլբուրսի ամբողջ սիստեմի միջով ճեղքում—անցնում է միայն Սեֆիդրուդ գետը, իսկ մյուս գետերի հովիտները հարավից փակվում են ավելի կամ պակաս բարձրություն ունեցող լեռնանցքներով։ Էլբուրսի գագաթը՝ Դեմավենդը—հավերժական ձնով ծածկված հանգած մի հրաբուխ է, որի լանջերը հարուստ են հանքային և տաք աղբյուրներով. հարավային լանջում գտնվող Դուդե-Բուհ կոնուսը դեռ մինչև այժմ էլ շարունակում է արտաբերել ծծմբաջրածնի գոլորշիներ։ Արևել.-երկ. 55°-ից դեպի արևելք Էլբուրսը միանում է Թուրքմենա-Խորասանյան լեռներին, որոնք բաղկացած են մի շարք լեռնաշարքերից։ Դրանցից ամենահյուսիսայինը՝ Կոպետ-դաղն անցնում է Իրանի և ՍՍՌՄ-ի սահմանով։ Թուրքմենա-Խորասանյան լեռներն արևելքում տարածվում են մինչև Գերիրուդ, ավելի ճիշտ Խերիրուդ (իր ստորին հոսանքում՝ Թեջեն) գետը. այդ լեռների արտանակությունն Ավղանստանում՝ Պարապամիզի և Հինդուկուշի լեռներն են։ Ավելի հարավ ընկած են աղեղնաձև ձգված Ալադաղ, Զաղաթայ, Միրաբի (Նիշապուրյան), Քեբատ և այլ լեռնաշարքերը՝ 1.000-ից մինչև 3.000 մ. բարձրությամբ։ Լեռների միջև գտնվում են Քուչան-Մեշխեդի արգավանդ հովիտը (Քեշեֆրուդ գետով) և խիտ բնակեցված Զուռաբաղի հովիտը։ Թուրքմենա-Խորասանյան լեռների վրայով Իրան կարելի է մուտք գործել արևելքից Թեջեն (Խերիրուդ) և Քեշեֆրուդ գետերի հովիտներով։ Հարավի ծայրամասային լեռնագեղը բաղկացած է Զագրոսի կամ Զագրոշի լեռներից (մինչև 3.000—4.000 մ. բարձրությամբ), որոնք Փոքր Զաբ գետի (Տիգրիսի վտակ) ակունքներից ձգվում են մինչև Իրանական Բելուջիստանը։ Զագրոսը (մինչև 200 կմ. լայնությամբ) դեպի Պարսից ծոցի ափերն է իջնում զուգահեռ ելուստներով։ Պարսից ծոցի ափին գտնվող լեռների ամենից քիչ բարձր գոտին կրում է Դեշտիստան («հարթավայրային երկիր») անունը, լեռների խորքում գտնվող գոտին կոչվում է Թենգզիր («լեռնանցքների երկիր»), իսկ լեռների հուսիսային լանջերի շրջանում գտնվող գոտին՝ Սերհեդ («ծայրամաս») կամ Սերդսիր («ցուրտ երկիր»)։ Զագրոսի լեռնանցքերն ունեն 500—2.000 մ. բարձրություն, իսկ նրա քարքարոտ, զառիթափ գագաթները հասնում են մինչև 5 հազ. մ. բարձրության։ Զագրոսի վրայով ծովափից դեպի երկրի խորքը շատ դժվար է մուտք գործել և հնարավոր է միայն այդ լեռները հատող Տրանսիրանյան միակ երկաթուղով, ինչպես նաև այնպիսի լեռնակածաններով, որոնցով շարժվել կարող են միայն ջորիների քարավանները։ Լեռների միջև գտնվում են մի շարք հովիտներ (դրանց մեջ՝ հայտնի Շիրազի հովիտը), որտեղ կուտակված է նստակյաց բնակչությունը։ Հյուսիս-արևմուտքում Իրանի սահմաններն է մտնում Հայկական լեռնաշխարհը, սրա հետ զուգվում են իրանական ծայրամասային լեռների հյուսիսային և հարավային աղեղները՝ կազմելով լեռնային այսպես կոչված «կուտակման» մի շրջան։ Լեռնային այդ հանգույցում աչքի են ընկնում Թենգուրեկ գագաթը և Սերեյան (Սավելան) հրաբուխը նույնանույն լեռնաշարքում ու Սեհենդ հրաբուխը, որոնք իրարից բաժանված են Հայկական լեռնաշխարհի լեռնաշարքերի միջև ընկած Ուրմիա (Ռեզաիյե) լիճը թափվող Թելխրուդ (Աջիչայ) գետի հովիտով։ Հայկական լեռնաշխարհից հարավ անցնում են Քուրդիստանի լեռները։ Արևմուտքից դեպի Իրան տանող հարմար անցամուտքն ընկած է այդ լեռների ու Զագրոսի միջև և հայտնի է «Զագրոսի դարպասներ» անունով։ Թյուրքիային սահմանամերձ լեռնաշարքը (որը որոշակի անվանում չունի) հատվում է մի շարք լեռնանցքներով՝ Քոթուրյան (1.397 մ.), Խանեսուր և այլ լեռնանցքներով։ Ուրմիա լճից հարավ սահմանամերձ լեռնաշարքից դեպի արևելք՝ մինչև Զենջան քաղաքն է ճյուղավորվում Քուխե-Սուլթան-Ահմեդ լեռնաշարքը։ Իրանի հյուսիս-արևմուտքում՝ Արաքս գետից հարավ ձգվում է Կարա-դաղ կամ Կարաջադաղ (պարսկական ժամանակակից անունը՝ Էրեսբարան է) լեռնաշարքը, որը կապվում է Սավելանի լեռնաշարքից հարավ-արևելք ընկած Սերդար-Դաղ լեռների հետ։ Երկրի հարավ-արևելյան մասում՝ Ավղանստանի և Բելուջիստանի սահմանների երկայնքով անցնում են տարբեր անուն-

ներ ունեցող մի շարք լեռներ, դրանց մեջ՝ Քուխե-Կաին և Քուխե-Թեվտան գագաթով Քուխե-Պելենդ լեռները։ Ներքին Իրանը ծալքավոր կազմություն ունի։ Քոխրուդ լեռնաշարքը հատում է Իրանի ներքին լեռնաշխարհը հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելքի ուղղությամբ. Քերմանի մոտ Քոխրուդից բաժանվում է Քուխբեխան լեռնաշարքը, որը առաջինին զուգահեռ, բայց մի փոքր դեպի հյուսիս է ձգվում։ Ներքին Իրանն ընդհանրապես թողնում է մի հարթ բարձրավանդակի կամ հարթավայրի տպավորություն, որի վրա բարձրանում են միայն լեռնաշղթաների կատարները. այդ կատարների միջև ընկած տարածությունները լցված են հողաքայքայման արտադրանքներով, հավասարված են և իրենցից ներկայացնում են ընդարձակ սանարդներ, այնպես որ թվում է, թե լեռնաշարքերը մինչև իրենց գագաթները թաղված են իրենցից թափված հողերի մեջ։ Ամենից ավելի ցածրադիր մասերը (300—900 մ.) զբաղված են աղի լճերով և ճահիճներով կամ քեվիրներով (կավային այնպիսի տարածություններ, որոնք ունեն չորացած լճերից հետո մնացած ձյունի նման սպիտակ աղի ծածկույթ)։ Ներքին Իրանի մեծ մասն ստացել է Մեծ Աղի անապատ՝ Քեվիրե-Նեմեք կամ Դեշտե-Քեվիր անունը (350 հազ. քառ. կմ.)։ Աղուտ այդ անապատը մի ոչ մեծ լեռնապարով բաժանված է իրենից հարավ ընկած ավազոտ Դեշտե-Լուտ անապատից (կամ Լոտա անապատից), որը լի է երերուն ավազներով։ Կենտրոնական Իրանն իրենից ներկայացնում է ջրահոսուքներից զուրկ մի սվաղան, որովհետև ջրապակաս գետերը չեն կարող ճեղքել լեռնաշարքերը և մասամբ էլ չորանում են երաշտի ժամանակ կամ կորչում են ավազներում ու աղուտային ճահիճներում։ Ոռոգված վայրերում՝ անապատների մեջ առաջանում են ոչ մեծ օազիսներ։ Էլբուրսի հյուսիսային ստորոտում ընկած է Մերձկասպյան ցածրավայրը, որը ծովի մակերևույթից ցածր է 26 մ.։ Նրա լայնությունը 3-ից մինչև 105 կմ. է։ Լեռնային հեղեղատների բերած հողն արգավանդ է։ Տեղումների առատության հետևանքով կան շատ ճահիճներ, իսկ մերձափնյա գոտում՝ ծովալճակներ։ Այդ ցածրավայրում գտնվող Գիլյան և Մազանդարան շրջանները կանգնած ջրերի պատճառով ծայրատիճան վատառողջ են (մալարիա)։ Հարավ-արևմուտքում Իրանին է պատկանում Մեսոպոտամյան ցածրավայրի մի մասը (Կարուն գետի հովտում). սա արգավանդ է, բայց ավելի քիչ է ոռոգված, քան Մերձկասպյանը։ Արևելքում գտնվող Սիստան կամ Սեիստան հարթությունն արդեն մի անցում է հանդիսանում դեպի ներքին անապատները. այդ հարթությունը վատ է ոռոգված և նվազ արգավանդ է։

Աղյուսակ 1—Ամենաբարձր գագաթները

Անունը	Լեռնային սիստեմները	Բարձրությունը (մետրերով)
Դեմավենդ	Էլբուրս	5.670
Քուխե Դենա	Զագրոս	5.180
Սերդ-ի-Քուխ	»	5.000
Սեբելան (Սավելան)	Հայկական լեռնաշխ.	4.820 (4.812)
Քուխե-Հեզար	Քոխրուդ	4.420 (4.020)
Քուխե-Կալե	»	4.220
Քուխե-Թեվտան	Պելենդ լեռնաշխարհ	3.973
Քուխե-Բոլ	Զագրոս	3.967 (4.320)
Ալիջուկ	»	3.725 (4.200)
Թենդուրեկ	Հայկ. լեռնաշխարհ	3.546
Սեհենդ	» »	3.545 (3.596)
Բինալուդ պիկը	Նիշապուրյան լեռներ	3.350

Կլիման Իրանում սուբարոպիկական է՝ տեղումների անհամաչափ և ոչ բավարար քանակով (250—350 մմ. մեկ տարում)։ Ծայրամասերի լեռները փակում են խոնավ քամիների մուտքը դեպի ներքին Իրան և Իրանի այդ մասն աչքի է ընկնում խիստ ցամաքային անապատային կլիմայով՝ շոգ ամառով (ջերմաստիճանը հասնում է մինչև 50°), ցուրտ ձմեռով (սառնամանիքները՝ մինչև —25°), ջերմաստիճանի օրական խիստ տատանումներով (մինչև 30°) և աղքատիկ տեղումներով (տարեկան 125—130 մմ.), որոնք թափվում են ոչ ամեն տարի (երկրագնդի վրա ամենաչորային, անանձրև վայրերից մեկը՝ Դեշտե-Լուտ անապատն է)։ Կենտրոնական շրջանից բացի իրենց կլիմայական առանձնահատկություններով առանձնանում են սուբարոպիկական երկու շերտերը. մեկը՝ Կասպից ծովի ափերին, մյուսը՝ Պարսից ծոցի ափերին, և լեռնային կլիմայի շրջանները։ Մերձկասպյան ցածրավայրին բնորոշ են տեղումների մեծ քանակը՝ տարեկան մինչև 1.300 մմ (Ռեշտ) ամառվա մաքսիմումով և տարվա բավականին բարձր միջին ջերմաստիճանը (18°)։ Ձմեռվա միջին ջերմաստիճանն է 11°, ամառվանը՝ 26°։ Պարսկական ծո-

ցի տոթակեզ և չորային ափերը գտնվում են Արաբիայի անապատների ազդեցության տակ։ Տեղումներն ընդամենը 350 մմ. է մեկ տարում (Բուշիր)։ Կենտրոնական անապատների և ծովափերի միջև միջակա դիրք են գրավում Իրանի այն շրջանները, որոնք ունեն տեղումների մինչև 280 մմ. քանակություն, շոգ (մինչև 40°) և չոր ամառ ու ոչ տևական տաք ձմեռ (Թեհրանում հուլիսի միջին ջերմաստիճանը 19° է, հունվարինը՝ մոտ 1°, տեղումները՝ 250 մմ.)։ Լեռներում ձմեռը տեղումները թափվում են ձյան ձևով։ Դրանց ամենամեծ քանակն ստանում են ծովահայաց լանջերը։ Հակառակ կողմի լանջերը չոր են ու լերկ։ Լեռները որքան հեռու են ծովափից, այնքան նրանք ավելի չոր են ու անպտուղ։

Աղյուսակ 2—Կլիմայական ասիմիլացություններ

Դիտողության վայրերը	Աշխարհագրակ. կոորդինատներ		Բարձրությունը ծովի մակերևույթից (մետրերով)	Միջին ջերմաստիճանները			Տեղումների տարեկան քանակությունը (մմ.)
	Հյուս. լայն.	Արևել. երկ.		Ամենացուրտ ամսվա (հունվար)	Ամենատաք ամսվա (հուլիս)	Տարեկան	
				C աստիճաններով			
Ռեշտ	37°15′	49°35′	0	11	26	18,2	1.300
Թեհրան	35°41′	51°27′	1.160	0,9	29,4	16,5	251
Սպահան	32°38′	51°39′	1.630	0,2	27,8	15,2	130
Բուշիր	29° 0′	50°50′	8	14,2	31,9 (օդոսմոս)	23,6	317
Բենդեր Չասք .	25°47′	57°48′	5	19,3	31,7	26,1	111

ՀԻԴՐՈԴՐԱՖԻԱ։ Ծովածոցերը։—Իրանի հարավ-արևմտյան և հարավային ափերը ողողող Պարսից և Օմանյան ծոցերն ու դրանց միացնող Օրմուզյան նեղուցը պատկանում են Հնդկական օվկիանոսի ավազանին։ Պարսից ծոցն Արաբական ծովի ամենահյուսիս-արևմտյան մասն է և ներփակված է Իրանի հարավ-արևմտյան ծովափի ու Արաբիայի միջև։ Տարածությունը մոտավորապես 240 հազ. քառ. կմ. է, լայնությունը՝ 90—350 կմ., միջին խորությունը՝ 25 մ., ամենից ավելի խոր տեղը՝ մոտ 100 մ.։ Ջրի ջերմաստիճանը մակերեսում շատ բարձր է, մինչև

35°, աղիությունը՝ մինչև 40%։ Իրանական ափի մոտ տեղավորված են միքանի ժայռոտ կղզիներ։ Ծոցը հարուստ է ձկներով, կորալներով և մարգարտի խեցիներով։ Օմանյան ծոցը դեպի ծովը դուրս եկող ելքի մոտ հասնում է 350 կմ. լայնության, իսկ դեպի Օրմուզյան նեղուցը տանող մուտքի մոտ՝ նեղանում է մինչև 70 կմ.։ Խորությունը նվազում է հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք, դեպի Իրանի և Օրմուզյան նեղուցի ափերը գնալով։ Իրանական ափում հարմար ծովախորշեր չկան։ Ծովախորշերը բաց ու ծանծաղ են։ Օրմուզյան նեղուցը խորը չէ (միջին խորությունը՝ 50 մ.), լայնությունը՝ 60-ից մինչև 125 կմ.։ Իրանին պատկանում է նեղուցի հյուսիսային ափը։ Նեղուցի արևմտյան մուտքի մոտ գտնվում են Քեշմ (արաբական Թավիլե—«երկար»), Լարակ և Խորմոզ (պորտուգալական՝ Օրմուզ) կղզիները։ Իրանի հյուսիսային ծովափը ողողում է Կասպից ծովը [պարսկական անվանումը՝ խազարական—«Բեհրե-Խեզեր», կամ (հարավային մասը)—Մազանդարանի ծով]։ Իրանական ծովափի երկարությունը՝ մոտ 1.000 կմ. է։ Այդ ծովափի կարևորագույն ծոցերն են՝ Գորգանականը (Աստրաբադի) և Էնզելիականը։

Իրանի գետերը (բացի Կարուն գետից) նավարկելի չեն, անձրևային ժամանակ ողմկահոս են, չորային ժամանակ ծանծաղանում են և ցամաքում, գետաբերաններում առաջացնում են փակոցներ, որոնք արգելակում են մուտքը ծովից, իրենց վերին հոսանքներում նրանք արագահոս են և սահանքավոր, գետանցը նրանց վրայով դժվար է և վտանգավոր։ Ամենամեծ և միակ նավարկելի գետը՝ Կարունը սկիզբ է առնում Զերդե-Քուհ լեռներից. Շուստեր և Ահվազ քաղաքների միջև առաջացնում է սահանքներ. Ահվազից 200 կմ. ցածր բաժանվում է երկու գետաբազուկի, որոնցից ձախը՝ Բեհեմշիրը (կամ Բեհմեշիրը) թափվում է Պարսից ծոցը, իսկ աջը՝ Գոֆարը (Գոֆֆար) Բասրայից 35 կմ. ցածր թափվում է Շատ-էլ-Արաբի (Եփրատի և Տիգրիսի ընդհանուր հունը) մեջ։ Կարունի ամենախոշոր վտակը՝ Արեդիզը նրա մեջ է թափվում ձախից։ Իրանի տերիտորիայում են հոսում նաև Տիգրիսի ձախ վտակները՝ Փոքր Զաբը (վերին հոսանքը), Դիյալան և Քերխեն (նույնպես և Սեյմերեն—վերին հոսանքում՝ Գամասիբը)։ Պարսից ծոցի մեծացած գետերը սակավաջուր են և նրանց ջրերի մեծ մասը դես ու դեն է տարվում ոռոգման համար։ Հնդկական օվկիանոսի ավազանին է պատ-

կանում երկրի մոտ 20%-ը։ Կասպիական ավազանին են պատկանում ՍՍՌՄ սահմանակից Արաքս և Ատրեք գետերը, ինչպես նաև Սեֆիդրուդը և Գորգանը։ Արաքսը (պարսկական անվանումը՝ Էրես) իր սկիզբն առնում է Թյուրքիայում 2.300 մ. բարձրությունից, հոսում է Թյուրքիայի և ՍՍՌՄ սահմանով, իսկ հետո ծառայում է որպես սահմանային գետ ՍՍՌՄ և Իրանի միջև, թափվում է Քուռ գետը (Կասպիականի ավազան) Ադրբեջանական ՍՍՌ-ում։ Արաքսի աջ վտակները՝ Կոտուրչայը և Կարասուն ոռոգում են Իրանի հյուսիս-արևմտյան ծայրամասը։ Ատրեքն սկիզբ է առնում Կոպետ-Դաղի հարավային լեռնաճյուղերում Իրանում, հոսում է սկզբում դեպի հյուսիս-արևմուտք, իսկ հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք և սահման է կազմում ՍՍՌՄ (Թուրքմենական ՍՍՌ) և Իրանի միջև։ Թափվում է Կասպից ծովի Հասան-Ղուլի ծոցը։ Ատրեքին զուգահեռ, արդեն ամբողջապես իրանական տերիտորիայում, հոսում է Գորգան (Թուրքմենական անվանումը՝ Գյուրգեն) գետը, որը Գորգանական (Աստրաբադի) ծոցից հյուսիս թափվում է Կասպից ծովը։ Սեֆիդրուդը (Սպիտակ գետ), իր երկարությամբ Իրանի երկրորդ գետը—իր վերին հոսանքում զուգահեռաբար կրում է Թյուրքական Կըզըլ-Օզեն անունը։ Շահրուդի գլխավոր վտակ Սեֆիդրուդը (Կըզըլ-Օզենը) սկիզբ է առնում Քուրդիստանի լեռներից, Շահրուդը՝ Էլբուրսի լեռներից։ Կասպիական ավազանի մյուս գետերը՝ Թալարը, Խերասը, Զալուսը—ափամերձ լեռներից ցած վազող արագահոս կարճ գետակներ են։ Ոչ ջրահոս ավազանի գետերից ամենից ավելի նշանակալի են՝ Աջիչայը (կամ Թելխուդը—Դառն գետ), որի հովիտով է գնում ճանապարհը Թավրիզից դեպի Կասպից ծովը, Զաղատուն (կամ Զերրինեռուդ), որը թափվում է Ուրմիա լիճը և Զենդերուդը (կամ Զայենդենռուդ), որը ոռոգում է Սպահանի շրջանը և թափվում է Գավխանե ճահճացած լիճը։

Աղյուսակ 3—Ամենախոշոր գետերը

Անունը	Երկարությունը (կմ-ով)	Անունը	Երկարությունը (կիլոմետրերով)
Արաքս (ՍՍՌՄ սահման)	1.000	Քերխե (Սեյմերե-Դամասեր)	600—700
Սեֆիդրուդ (Կըզըլ-Օզեն)	720	Ատրեք	580—550
Կարուն	700		

Լճերը.—Իրանի ամենամեծ լիճը՝ Ուրմիան (5,775 քառ. կմ.) գտնվում է 1.330 մ. բարձրության վրա—երկրի հյուսիս-արևմտյան մասում, Հայկական լեռնաշխարհում։ Երկարությունը 135 կմ. է, լայնությունը՝ 45 կմ., ամենախոր տեղը՝ 15 մ., աղիությունը՝ 150—230‰։ Ունի շատ կղզիներ։ Լճի մեջ 14 գետ է թափվում, դրանցից ամենախոշորներն են՝ Թելխուդը (Աջիչայ) և Զաղատուն (Զերրինեռուդը)։ Բարձր աղիության հետևանքով լճում ձկներ չեն լինում։ Կենտրոնական սարահարթում կան շատ աղի լճեր, որոնք վերածվում են ճահիճների և աղուտների։ Դրանցից խոշորներն են՝ Գավխանեն, Բեխտեգանը (Նեյրիզ)—3.500 քառ. կմ., Դերյայե-Նեմեքը կամ Դերյայեյե-Կոմը—«Կումի լիճ» (Թեհրանից հարավ) և այլն։ Արևելքում, Ավղանստանի սահմանի մոտ տեղավորած են աղուտային լճեր՝ Նեմեքսարը և սահմանային Խամունեն (Խալմենո)։

Հողերը.—Մերձկասպյան ցածրավայրի հարավային մասը և լեռնահովիտները ծածկված են սևահողով, շագանակագույն և թուխ հողատեսակներով, որոնք անձրևների քանակից կախված հաջորդափոխում են մեկը մյուսին։ Լեռների լանջերը պատած են մոխրանման լեռնանտառային, իսկ ավելի բարձր՝ լեռնամարգագետնային հողատեսակներով։ Պարսից և Օմանյան ծոցերի ափերին շատ են կարմրահողերը։ Ներքին Իրանի անապատներում և տափաստաններում դերակշռում են խճա-կավային աղուտները և աղահողերը, մասամբ էլ՝ գորշահողերը։ Դեշտե-Լուտ անապատը ծածկված է ավազային ու խճային հողատեսակներով։

Իրանի բուսականությունը բավականին բազմազան է։ Էլբուրսի հյուսիսային լանջում և Թալիշյան լեռների արևելյան լանջերում, որոնք դարձված են դեպի Կասպից ծովը, աճում են սաղարթավոր անտառներ՝ հաճարենի, կաղնի, բոխի, չինարի, ընկուզենի և այլ ծառերով. Թալիշյան լեռների վրա առավելապես կաղնուտներ են։ Ծառերը փաթաթված են լիանաներով, բաղեղով, վայրի խաղողով, դայլուկով և այլն։ Այդտեղ պատահում են նաև՝ «երկաթյա ծառը», ձելկվան, սամշիտը։ Այդ շրջանների սուբտրոպիկական խոնավ պայմանները թույլ են տալիս մշակելու մի շարք շատ արժեքավոր բույսեր՝ ցիտրուսներ (լիմոն, ապելսին և այլն), խուրմա, բամբուկ, բրինձ, բամբակ, և այլն։

Բուսականության համար բարենպաստ պայմաններ ունեցող մյուս ռայոնը՝ Պարսից ծոցի ափերի շրջանն է, որտեղ տարածված է խուրմայի և կոկոսի արմավենիների կուլտուրան, թե-

պետ և վերջինիս պտուղներն այստեղ չեն հասունանում։

Դեպի Պարսից ծոցը դարձած սարալանջերը ծածկված են հաճարենու և բոխու պուրակներով, որոնք հերթափոխվում են լեռնա-տափաստանային բուսականության տեղամասերով։ Իրանի հյուսիս-արևելյան մասի նախալեռների հարթություններում գտնվում է մի չոր, խճանուտ տափաստան, որը ծածկված է պարսկական վարդի, էֆեդրայի և այլ նոսր թփիկներով։ Ավելի բարձր գտնվում է Օշինդրի տափաստանի գոտին, որտեղ դերակշռում է գորշ օշինդրը, և որը 900 մ. բարձրության վրա փոխարինվում է կանաչավետ-սիզախոտային-բազմախոտային տափաստաններով։ Վերջիններն առատ խոտհարք են տալիս։ 1.300 մ. բարձրությունից սկսվում է բարձրանման ձև ունեցող լեռնային քսերոֆիտ-մացառուտների տիրապետությունը, այն է՝ փշավոր կոնդանը, ականտոլիմոնը («կոցար»), գլխավորապես տրագական-տային տիպի տատրագալները [սրանց ճյուղերի կեղևը թեթևակի կարելուց հետո դուրս է հոսում մի տեսակ լորձունք (камедь) որը չորացնելով գործածում են հրուշակեղենի և տեքստիլ արդյունաբերության մեջ]։ Լեռների լանջերում կան պիստակի (фисташка) թփուտներ։ 1.500 մետրից սկսվում են արչայի, այսինքն՝ ծառանման գիհու (Juniperus excelsa և այլն) անտառները (арчевники)։

Իրանի միջին մասը, նրա արևմտյան սահմաններից մինչև արևելյանը, իրենից ներկայացնում է կավային-աղուտային տափաստան և անապատ՝ երկրաբանական բույսերի նոսր թփիկներով։ Նորասանի հարավային մասը զբաղված է օշինդրի, աղաբույսի, ուղտափշի հատ-հատ նմուշներ ունեցող խճանուտ անապատով։ Այստեղ պատահում են վայրի ձմերուկի՝ կոլոցինտի ընդարձակ թփուտներ։ Գետերի և գետակների հովիտներում կան սակսաուլի անտառակներ, իսկ տեղ-տեղ էլ կաուչուկատու խոնդրիլա բույսի առանձին թփիկներ։ Այնուհետև հարավում, արևելքից դեպի արևմուտք ձգվող մի ընդարձակ շերտով տարածվում են ավազուտ անապատները։ Ավազների մեջ կան սակսաուլի թփուտներ, դանդան աղաբույսեր, հովանոցածաղիկ բարձր ֆերուլներ, ասաֆետիդա (որի արմատային պարանոցիկը կտրելիս նրա միջից արտաթորվում է օդում չորացող խեժ, որն էքսպորտային թանդարժեք ապրանք է)։ Աղաբույսերից և սակսաուլից տեղի բնակչությունը պատրաստում է կալիոն (պոտաշ)։

Իրանի հարավ-արևելյան մասը (Սիստան)՝ անապատային տարածություն է։ Բուսականությունն այստեղ շատ աղքատիկ է։ Միայն լճերի շուրջն է, որ զարդանում է ճահճային բուսականությունը՝ եղեգը, կնյունը, դամիշները, ճիլերը։ Դրի մեջ բուսնում են ոդեստներ, նայադներ, վալիսներիա։ Իսկ բուն ցամաքային մասն զբաղված է կավային-աղուտային տափաստանով և անապատային նոսր բուսականություն ունեցող ավազուտ տարածություններով։ Սիստանից արևմուտք և հարավ տարածվում են այդ նույն տիպի ընդարձակ անապատներ։ Եվ միայն Պարսից ծոցի ափերի մոտ է բուսականությունն ավելի փարթամ դառնում։

Կենդանական աշխարհը։—Իրանի տերիտորիայի տափաստանային և անապատային մասերի ֆաունայի համար բնորոշ են՝ շերտավոր բորենիները, շնագայլերը, վայրի էշեր-օնագրները, այծեղջերուները, վիթերը։ այստեղ լինում են նաև առյուծներ։ բազմաթիվ են մողեսները, օձերը։ անողնաշարավորներից բնորոշ են կարիճները և զանազան միջատներ, այդ թվում՝ մորեխը, որը հաճախ բավականին զգալի վնաս է պատճառում ցանքսերին։ Տերիտորիայի ճահճային շրջաններում կան, իմիջի այլոց, վագրեր, անտառներում և լեռներում կան վայրի խոզեր, եղջերուներ, այծյամներ, արջ, գայլ, աղվես, բեզոարային այծ, լեռնային ոչխարներ։

III. ՏԵՐԻՏՈՐԻԱՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Իրանի բնակչության մեծ մասը (մոտ $^2/_3$-ը) կենտրոնացած է երկրի տնտեսապես ամենից ավելի զարգացած հյուսիսային մասում, որտեղ որ գտնվում են նաև Իրանի ամենախոշոր քաղաքները։ հարավում և հատկապես հարավ-արևելքի անապատային շրջաններում բնակչության խտությունը խիստ նվազում է —Քերմանի և Իրանական Բելուջիստանի քոչվորական շրջաններում խտությունը 2 մարդուց ավելի չէ 1 քառ. կմ. վրա։ Բնակչության տարեկան աճը բարձր չէ՝ կազմում է 0,75%-ից մինչև 1%։ Գյուղական բնակչությունը և վաչկատունները կազմում են երկրի բնակիչների ընդհանուր թվի մոտ 80%-ը. բնակչության մոտավորապես 20%-ն ապրում է քաղաքներում։ Վաչկատուն ցեղերը կենտրոնացած են գլխավորապես Արևմտյան և Հարավային Իրանում. սակայն քոչվորների տեսակարար կշիռը վերջին տարիները խիստ պակասել է՝ քոչվորներին հատատապնակ դարձնելու ուղղությամբ կառավարության անցկացրած միջոցառումների կապակցությամբ։ 1937 թ. տվյալների համաձայն Իրանում հաշվվում էր մոտ 2,5 մլն. քոչվոր։

Իրանը բազմազգ պետություն է՝ բնակչության խայտաբղետ

ազգային կազմով[1]։ Իրանցիները կազմում են բնակչության մոտ 50% ը։ Թյուրք-մոնղոլական ազգությունները (թյուրքեր, թուրքմեններ, կաջարներ և այլն), որոնք կենտրոնացած են գլխավորապես երկրի հյուսիս-արևմուտքում՝ կազմում են մոտ 25%-ը, քրդերը՝ մոտ 10% (գլխավորապես արևմուտքում և հյուսիս-արևմուտքում), արաբները՝ մոտ 5%։ 10% են կազմում մյուս ազգությունները (հրեաներ, վրացիներ, հայեր և այլն)։

Աղյուսակ 1—Ամենակարևոր քաղաքները
(Բնակչ. հազարներով՝ 1933 թ. տվյալներով)

Թեհրան	540.1(1910 թ.)	Ռեշտ	89.9	Թավրիզ	220
Քերմանշահ	70.1	Շիրազ	119.8	Ղազվին	60.0
Մեշխեդ	139.3	Քերման	59.5	Սպահան	100.1
		Սուլթանաբադ (Էրաք)	54.5		

Թեհրանը Իրանի մայրաքաղաքն է, երկրի ամենախոշոր քաղաքը, գլխավոր կուլտուրական և տնտեսական կենտրոնը։ Գտնվում է երկաթուղիների և խճուղիների հանգույցում։ Մետաղագործական, բամբակազտիչ, գորգագործական, կաշեգործական և այլ արդյունաբերություն։ Համալսարան և բարձրագույն այլ ուսումնական հաստատություններ։ Թանգարան և պետական գրադարան։ Թեհրանը հայտնի է XIII դարից։ դարձել է Իրանի մայրաքաղաքը 1788 թվից։

Թավրիզ։ Իր բնակչությամբ երկրորդ և Իրանի առևտրաարդյունաբերական կարևորագույն կենտրոններից մեկն է երկրի հյուսիս-արևմտյան մասում։ Երկաթուղով միացած է ՍՍՌՄ սահմանի վրա գտնվող Ջուլֆայի հետ։ Կառուցվում է երկաթուղագիծ դեպի Թեհրան։ Բամբակազտիչ, տեքստիլ, գորգագործական և այլ արդյունաբերություն։

Մեշխեդ։ Հյուսիս-արևելյան Իրանի գլխավոր քաղաքը, գրանցվում է սովետական սահմանի մոտ։ Բրդի, գորգերի, կաշիների

[1] Հյուսիսային Իրանում ապրում է մոտ 4½ միլ. ազրբեջանցի, որոնք Իրանի մյուս մասերի բնակիչներից տարբերվում են իրենց լեզվով և արդյունաբերությամբ։ Ազրբեջանական ժողովուրդը Իրանում գտնվում է տնտեսական-քաղաքական իրավազուրկ վիճակի մեջ, արգելված է դպրոցներում մայրենի լեզվով ուսուցումը, բնակչության մեջ տարածված են հյուծող տարափոխիկ հիվանդություններ։ Ազրբեջանական բնակչության արդարացի պահանջներն ու բողոքները միշտ էլ մնացել էին անլսելի ու անլուծելի։ Ժողովրդական ազատ շարժումը, որը գլխավորում էր «Ազրբեջան» դեմոկրատական պարտիան, իր արմատական լուծումը գտավ 1945 թ. նոյեմբերին Հյուսիսային Ազրբեջանում ազգային կառավարության կազմակերպումով։ Ազրբեջանի ավտոնոմ կառավարության հրապարակած ծրագրում ասված է՝ «Ազրբեջանի ավտոնոմ կառավարությունն իրագործում է ազրբեջանական ժողովրդի երազները նրա համար ավտոնոմիա ստեղծելու շուրջը, որը վերջ կտա նրա տառապանքներին» և այնուհետև...«տանց խախտելու Իրանի ամբողջականությունը, ստեղծել ազգային կառավարություն իսկական դեմոկրատական սկզբունքներով»։ Ընտրված է Ազրբեջանի Ազգային Մեջլիսը։ Ավտոնոմ Ազրբեջանի կառավարությունը գլխավորում է դեմոկրատական պարտիայի լիդեր Սեյիդ Ջաֆար Փեշեվարին։ (Թանգր. հայ. բարգմ.)

ն կաշվեղեն ապրանքների, տնտառանյութի, ափիոնի, բամբակեղեն գործվածքների առևտրի խոշոր կենտրոն։ Գորգագործական և կաշեգործական արտադրություններ, բամբակազտիչ, տեքստիլ, շաքարի և այլ արդյունաբերություն։

Շիրազ։—Հարավ-արևմտյան Իրանի առևտրական խոշոր կենտրոն։ Հայտնի է գորգերի արտադրությամբ։ արտադրվում են նաև բամբակյա ու մետաքսյա գործվածքներ։

Սպահան։—Թեհրանից դեպի Շիրազ տանող ճանապարհի վրա գտնվող առևտրա-արդյունաբերության խոշոր կենտրոն։ Իրանի հնագույն քաղաքներից մեկն է, առավելապես հարուստ

Աղյուսակ 2—Իրանի վարչական բաժանումը

Էստաններ	Էստանի վարչական կենտրոնը	Շահրեստաններ
Առաջին	Ղազվին	Զենջան, Ղազվին, Սավե, Էրաք Ռեշտ, Շահսեվար։
Երկրորդ	Թեհրան	Կում, Քաշան, Թեհրան, Սեմնան, Սարի, Գորգան։
Երրորդ	Թավրիզ	Թավրիզ, Արդեբիլ
Չորրորդ	Խոյ	Խոյ, Ռեզաիյե, Մեխաբադ (Սուլջուլաղ), Մերագե, Բիջար։
Հինգերորդ	Համադան	Իլամ, Շահաբադ, Քերմանշահ, Սենենդեջ (Սեննե), Մելայեր, Համադան։
Վեցերորդ	Խորրեմաբադ	Գոլպայեգան, Ախվազ, Խորրեմշեհր։
Յոթերորդ	Շիրազ	Բեհբեհան, Շիրազ, Բուշիր, Ֆեսա, Աբադե, Լար։
Ութերորդ	Քերման	Քերման, Բամ, Բենդեր-Շահպուր (նախկ. Բենդեր-Աբբաս), Խաշ, Զարոլ։
Իններորդ	Մեշխեդ	Սերզեվար, Բիրջենդ, Թորբեթ-Հեյդերի, Մեշխեդ, Քուչան, Բոջնուրդ, Գունաբադ
Տասներորդ	Սպահան	Իեզդ, Սպահան։

և իրանական ճարտարապետության հուշարձաններով։ Գորգագործական, տեքստիլ, բամբակազտիչ, ծխախոտագործական և այլ արդյունաբերություն։

Իրանը պատմականորեն բաժանվել է մի շարք պրովինցիաների, որոնց անունները՝ Ադրբեջան, Գիլյան, Քերմանշահ, Լուրեստան, Համադան, Մազանդարան, Խուզիստան (Արաբիստան), Խորասան, Քերման, Ֆարսիստան, Լարեստան և այլն, հաճախ գործածվում են նաև այժմ։ Մեջլիսի 1938 թ. ընդունած վարչական բաժանման համաձայն Իրանը բաժանվեց 10 էստանների (մարզերի), որոնք իրենց հերթին բաժանվում են 49 շեհրեստանների (նահանգների)։ (Տես աղյուսակ № 2, էջ 15)։

IV. ԷԿՈՆՈՄԻԿԱ

Տնտեսության ընդհանուր բնութագիրը։ Իրանը ագրարային երկիր է՝ գյուղատնտեսության մեջ ֆեոդալական հարաբերությունների գերակշռումով։ Իրանի արդյունաբերությունը նոր է միայն սկսում զարգանալ։ Լեռնաարդյունահանող արդյունաբերության մեջ գլխավորը նավթայինն է, որին զեկավարում է օտարերկրյա կապիտալը. մշակող արդյունաբերության մեջ գլխավորը թեթևն է, որն զբաղված է տեղական հումքի վերամշակումով։ Ներքին շուկայի նեղ շրջանակները և կապիտալիստական խոշոր տերություններից Իրանի կախված լինելն երկար ժամանակ սահմանափակում էին իրանական արդյունաբերության զարգացումը և նրան տալիս էին զաղութային հատկագծեր։ 1929—1933 թ. թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամանակաշրջանում Իրանի հումքային արտադրանքը հնարավոր չէր վաճառահանել արտաքին շուկաներում և դրանցից ունեցած իր կախվածության հետևանքով իրանական էկոնոմիկան ծանր ընթացքի մեջ ընկավ։ Խիստ նվազեց մասսաների զնողունակությունը, ավելանում էր առևտրական բալանսի պասիվությունը։ Իրանական կառավարությունը հարկադրված էր դիմել պրոտեկցիոնիզմի և նպաստել ազգային այնպիսի արդյունաբերության տարածմանը, որը կարողանար ապահովել իրանական գյուղատնտեսական հումքի վերամշակումը երկրի ներսում։ Պետությունն զգալի չափով ֆինանսավորում էր արդյունաբերական շինարարությունը ի հաշիվ բյուջեի։ Երկրում այդ կապակցությամբ արագացավ կապիտալիստական հարաբերությունների զարգացումը, սկսեցին աճել արդյունաբերական պրոլետարիատի կադրերը, ուժեղացավ գյուղացիության շերտավորումը։

Առաջացող և դեռևս թույլ ազգային բուրժուազիան հայցում էր օտարերկրյա կապիտալի աջակցությունը, որն Իրանում ուներ գործունեության լայն հնարավորություններ։ Համաշխարհային առաջին պատերազմից անմիջապես հետո Իրանի տնտեսության մեջ աչքի ընկնող դեր էր խաղում անգլիական կապիտալը, որի ձեռքին էին գտնվում Հարավային Իրանի նավթային հանքավայրերի մշակումը, վերահսկողությունն երկրի բանկային սիստեմի վրա, ավտոտրանսպորտի զգալի մասը։ Գերմանական իմպերիալիզմը, 1914—1918 թ.թ. պատերազմից հետո ոտքի կանգնելով, ուժեղացրեց իր ուշադրությունը Իրանի նկատմամբ դեռևս 1929 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամին նախորդող ժամանակաշրջանում, սակայն նրա էքսպանսիան դեպի Իրան առանձնահատուկ թափ ձեռք բերեց ֆաշիզմի կողմից իշխանությունը Գերմանիայում զավթելուց հետո։ Հարձակում կազմակերպելով Մերձավոր Արևելքի երկրների, ինչպես նաև Իրանի վրա, հիտլերյան Գերմանիան նախ և առաջ փորձում էր նրան սարկացնել տնտեսապես։ Օգտվելով Իրանի վայրագային դժվարություններից, գերմանացիներն Իրանի վրա փոթաթեցին առևտրի այնպիսի պայմաններ, որոնք նրան Գերմանիայից տնտեսական կախվածության մեջ դրեցին։ Նախապես ստանալով իրանական կառավարող շրջաններում եղած պրոգերմանական տարրերի աջակցությունը, գերմանական կապիտալն իրանական նորաստեղծ արդյունաբերության մեջ զավթեց մի շարք կարևորագույն դիրքեր՝ հանածոների արդյունահանման, Տրանսիրանական երկաթուղագծի մի մասի շինարարության, ադիոկայանների և այլ կոնցեսիաներ. գերմանական ֆիրմաներն սկսեցին սարքավորում մատակարարել Իրանում կառուցվող արդյունաբերական ձեռնարկությունների, երկաթուղիների համար և այլն։ Ֆաշիստական Գերմանիան լայնորեն օգտագործեց Իրանի զարգացող արդյունաբերության և տրանսպորտի համար մասնագետների նրա պահանջը և ինժեներների, առևտրաարդյունաբերական ֆիրմաների ներկայացուցիչների, զանազան խորհրդականների՝ ֆինանսական, տնտեսական և այլ խորհրդականների՝ անվան տակ երկիրը հեղեղեց հազարավոր դիվերսանտներով և լրտեսներով։ Իրանում գործող գերմանական յուրաքանչյուր ֆիրմա, որպես կանոն, իրենից ներկայացնում էր

101
Центр. Восток. ин-та АН Арм. ССР
БИБЛИОТЕКА
ԳՐԱԴԱՐԱՆ

ֆաշիստական լրտեսության մի բուն։ Ինժեներների և տեխնիկների անվան տակ լրտեսական տասնյակ հետախույզներ ներթափանցեցին իրանական ռազմական ձեռնարկությունները։ Նախքան սովետական և անգլիական զորքերի 1941 թ. օգոստոսին Իրան մուտք գործելը՝ իրանական կառավարությունը Ռիզա շահի ճնշման տակ Գերմանիային վաճառեց բրնձի, պտուղների և այլ մթերքների ամբողջ բերքը, ինչպես նաև բուրդը, բամբակը և մյուս ապրանքները, չնայած որ երկրում այդ ժամանակ աննդամթերքի խիստ պակասություն էր առաջացել։ Սակայն, Իրանից կորզելով այն ամենը, ինչ հնարավոր էր, ֆաշիստները միաժամանակ և չէին կատարում Իրանին արդյունաբերական արքավորում և տրանսպորտի միջոցներ մատակարարելու իրենց պարտավորությունները։ Դեպի Իրան՝ հիտլերյան Գերմանիայի տնտեսական ներթափանցման կործանարար հետևանքները վերացվեցին միայն այն բանից հետո, երբ ՍՍՌՄ և Մեծ Բրիտանիայի միջամտությունը 1941 թ. վերջ տվեց ֆաշիստական մեքենայությունների երկրում (տես ստորև՝ Պատմական ակնարկը)։ Ռիզա-շահի գահից հրաժարվելուց հետո Իրանում ստեղծված նոր իրադրությունը պայմանավորեց պրոգրեսիվ տենդենցների աճը։ Նոր շահը և մեջլիսն աղդարարեցին սոցիալական և տնտեսական այնպիսի ռեֆորմների անհրաժեշտությունը, որոնք պետք է ապահովեն գյուղատնտեսության զարգացումը, գյուղացիության բարեկեցիկության բարձրացումը, իրիգացիայի զարգացումը, արդյունաբերության աճը, խճուղիների և երկաթուղիների ցանցի կատարելագործումը։

Միանգամայն առանձնահատուկ բնույթ ունեին Իրանի և ՍՍՌՄ-ի տնտեսական փոխհարաբերությունները։ Սովետական Միությունը, որը ոչնչացրել էր ցարական կառավարության կողմից իր ժամանակին Իրանի վրին փաթաթած, իրանական ժողովրդի իրավունքները սահմանափակող կամ ճնշող համաձայնությունները, անշահախնդիր աջակցում էր Իրանի տնտեսական զարգացմանը։ ՍՍՌՄ-ի և Իրանի միջև կնքված պայմանագրերի և համաձայնությունների շնորհիվ վերջինս հնարավորություն ստացավ կազմակերպել և բարելավել իր տնտեսության մի շարք կարևորագույն ճյուղերի՝ բամբակագործական, ձկնարդյունաբերական և այլ ճյուղերի վիճակը։ Համաշխարհային երկրորդ պա-

տերազմի ժամանակաշրջանում Սովետական կառավարությունը հետագա մի շարք քայլեր կատարեց Իրանի հետ իր տնտեսական հարաբերություններն ամրապնդելու և զարգացնելու ուղղությամբ, մասնավորապես իր պատրաստակամությունը հայտնելով Իրանին ապահովել այնպիսի կարևորագույն ապրանքների մատակարարումով, որոնց կարիքն այն ժամանակ իրանական տնտեսությունը շատ մեծ չափով էր զգում։

Սովետական Միության և Անգլիայի հետ 1942 թ. հունվարին Իրանի կնքած դաշնակցային պայմանագիրն Իրանի առաջ բացեց երկրի տնտեսական վերելքի հեռանկարներ։ ՍՍՌՄ և Անգլիան այդ պայմանագրով պարտավորվեցին առավելագույն ջանքեր գործադրել իրանական ժողովրդին օգնելու՝ պատերազմի հետևանքով ծագած պետքերն ու դժվարությունները հաղթահարելու համար։ Սովետական Միությունը և Անգլիան պայմանագիրը կնքելուց անմիջապես հետո այդ պարտավորության իրագործման ուղղությամբ անցկացրին գործնական մի շարք ձեռնարկումներ։

Իրենց տնտեսական նշանակությամբ Իրանում աչքի են ընկնում հյուսիսային և հարավ-արևմտյան շրջանները։

Երկրի հյուսիսային մասում գտնվում է Կասպից ծովի ամենից ավելի արգավանդ, տեղումներով առատ ծովափը՝ բրնձի այն տարածված կուլտուրայով, ինչպես նաև բամբակի, ծխախոտի և թեյի կուլտուրաներով, սուբտրոպիկական պտղաբուծությամբ, խաղողագործությամբ և շերամապահությամբ։ Իրանական Ադրբեջանում, որը գրավում է երկրի հյուսիս-արևմտյան մասը, զգալի տեղ են բռնում հացահատիկների և բամբակենու ցանքսերը, խաղողագործությունը, ինչպես նաև անասնապահությունը, որի արտադրանքը նշանակալի մասով արտահանվում է ՍՍՌՄ։ Խորասանը, որը գտնվում է երկրի հյուսիս-արևելյան մասում, Իրանի ամենահարուստ պրովինցիաներից մեկն է իր զարգացած հողագործությամբ (ցորեն, տեխնիկական կուլտուրաներ բամբակ, ափիոնատու խաշխաշ, շաքարի ճակնդեղ), անասնապահությամբ (գլխավորապես ոչխարներով), խաղողագործությամբ և պտղաբուծությամբ։ Ապրանքային հարաբերությունների զարգացման կապակցությամբ հյուսիսում առաջացան երկրի առևտրական ամենից ավելի խոշոր կենտրոնները՝ Թեհրանը Թավրիզը, Մեշհեդը։ Վերջին ժամանակներս գերադասորեն հենց

հյուսիսում է զարգանում նաև ֆաբրիկա-գործարանային մշակող արդյունաբերությունը։ Երկրի երկաթուղային կարևորագույն մագիստրալի Տրանսիրանական երկաթուղագծի կառուցումից հետո երկաթուղային հեռագրա շինարարությունը տարվում է Հյուսիսային Իրանում, վերջինս խճուղիներով ևս բոլորից լավ է սպասարկված։ ՍՍՌՄ հետ ունեցած առևտրական կապերը նպաստում էին Մերձկասպյան խոշոր նավահանգիստների՝ Բենդեր-շահի (Տրանսիրանական երկաթուղու ելման կետը երկրի հյուսիսում), Փեհլեվիի, Աստարայի զարգացմանը։ Մոտիկությունը ՍՍՌՄ-ին և Սովետական Միության հետ ունեցած տնտեսական փոխհարաբերությունները շատ տեսակետներից նպաստում են Հյուսիսային Իրանի տնտեսական ընդհանուր զարգացմանը։

Իրանի տնտեսական կյանքում նրա հարավ-արևմտյան շրջանի նշանակությունը որոշվում է անգլիական կապիտալի կողմից մշակվող Խուզիստանի նավթային խոշոր հարստություններով. այդ կապակցությամբ Աբադանում առաջացած նավթավերամշակման արդյունաբերությամբ, ինչպես նաև Պարսից ծոցի նավահանգիստների՝ Բենդեր-Շահպուրի (Տրանսիրանական երկաթուղու ելման կետը երկրի հարավում), Աբադանի (նավթաշատ մեծ էքսպորտ), Խորեմշեհրի արտանապորտային գերով։ Խուզիստանն իր մեծագույն մասով առավելապես վաչկատուն ազգաբնակության մի շրջան է, միայն Կարուն գետի հովտում զարգացած հողագործությամբ (բամբակ, խուրմայի արմավենիներ)։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ։ Ագրարային հարաբերություններ։ Գյուղատնտեսության մեջ, որը Իրանի էկոնոմիկայի հիմքն է, զբաղված է նրա բնակչության մոտ 80%-ը։ Ագրարային հարաբերությունները որոշվում են ֆեոդալական խոշոր հողատիրության շատ մեծ գերակշռությամբ՝ հողազուրկ գյուղացիության հակայական մասսայի գոյության կողքին։ Մշակության համար պիտանի հողային տարածությունների ճնշող մասը պատկանում է խոշոր կալվածատերերին, պետությանը և հոգևորականությանը. կալվածատիրական հողերը (էրազիյե-էրբաբի) կազմում են ամբողջ հողատարածության մոտ 68%-ը. պետությանը պատկանող հողերը (էրազիյե-զովլեթի, խալիսեջաթ)՝ մոտ 4%-ը, եկեղեցական հողերը (վակուֆները)՝ մոտ 10%, ցեղերին պատկանող հողերը (էրազիյե-իլյաթի կամ էշաեր)՝ 13%-ը, մանր գյուղացիության հողերը (խորդեմալիք)՝ 4%-ը, համայնքային հողերը

(էրազիյե-օմումի)՝ մոտ 1%-ը։ Նախկին շահ Ռիզա Փեհլեվիի կողմից կալվածատիրական և այլ հողերը լայնորեն կիրառվող գրավումների կապակցությամբ նրա բռնակալական կառավարման ժամանակաշրջանում ավելացավ շահի ընտանիքին պատկանող հողամասերի տեսակարար կշիռը։

Գյուղացիների մոտ 2/3-ը հողազուրկ է և հարկադրված է շատ փոքր հողակտորներով վարձակալությամբ հող վերցնել կալվածատերերից՝ առավելապես մասնատուրքի պայմաններով։ Բերքի բաշխման ժամանակ գյուղացու աշխատանքը սովորաբար համարվում է միայն որպես արտադրության հինգ տարրերից մեկը (չորս մյուս տարրերն են՝ հողը, ջուրը ոռոգելու համար, արտադրության գործիքները, սերմը), և որովհետև մշակման մեջ գյուղացին հաճախ իր աշխատանքից բացի ուրիշ բան ներդնել ի վիճակի չէր լինում, ապա նրան բաժին էր ընկնում բերքի միայն ոչ մեծ մասը, մնացածը նա ստիպված էր տալ կալվածատիրոջը։ Մինչև վերջին ժամանակները ծանրաբեռնված լինելով խոշոր հարկերով, կալվածատիրոջ օգտին հավաքվող զանազան տուրքերով, գյուղացիությունն ի վիճակի չէր բարելավել իր տնտեսությունը, որը, նրա ծայրահեղ սահմանափակ գնողունակության հետ միասին, չափազանց դանդաղեցնում էր իրանական ամբողջ էկոնոմիկայի զարգացումը։

Գյուղատնտեսական արտադրության տեխնիկան ցածր է և պրիմիտիվ. գյուղացիական տնտեսության հիմնական գործիքներն են՝ «օմաչը»—փայտե գութանը, «ազալը»—փայտե արորը, բրիչը և բահը։ Տրակտորներ պատահում են միայն կալվածատիրական սակավաթիվ տնտեսություններում։

Գյուղատնտեսության կառուցվածքը։ Երկրագործական տակակետից յուրացված է տերիտորիայի միայն 1/10-ը, մնացած հողերը կամ բոլորովին պիտանի չեն հողագործության համար (անապատներ, լեռներ և այլն), կամ կարող են յուրացվել միայն արհեստական ոռոգման և այլ տեսակի մելիորացիայի պայմանով։

Աղյուսակ 1. Իրանի հողային տարածության բաշխումը (հազ. հեկտարներով)։

Մշակվող հողամասեր	16,450
Անտառներ	5,000
Հողամասեր, որոնք պիտանի կլինեն մշակման համար մելիորացիայի և ոռոգման դեպքում	82,250

Անապատներ	35,000
Մշակման համար ոչ պիտանի հողամասեր	25,800
Ընդամենը	164,500

Իրանի երկրագործությունը համարյա բոլոր տեղերում էքսցառությամբ տեղումներով առատ մերձկասպյան շրջանի, զգում է արհեստական ոռոգման կարիքը։ Վերջին ժամանակներում մի շարք ձեռնարկումներ կատարվեցին իրիգացիոն սիստեմի ընդարձակման, ոռոգման կառուցումների շինարարության և վերանորոգման ուղղությամբ. 1937 թ. Կարուն գետի վրա կառուցվեց մի ամբարակ, որը հնարավորություն տվեց ոռոգել մոտ 50 հազ. հեկտ. հողատարածություն։

Իրանի երկրագործական կարևորագույն կուլտուրաներն են՝ հացահատիկները (ցորեն, գարի և բրինձ), բամբակը, ափիոնատու խաշխաշը, ծխախոտը, ճակնդեղը. խոշոր դեր են խաղում այգեգործությունը (դեղձ, ծիրան, պիստակ և այլն) և խաղողագործությունը։

Իրանում ցորենը մշակվում է համարյա ամենուրեք, գլխավորապես Թավրիզի, Արդեբիլի, Մեշխեդի, Քերմանշահի, Թեհրանի, Սպահանի. Քերմանի, Շիրազի և Սուլթանաբադի (Էրաք) շրջաններում։ Գարին, որը ծառայում է առավելապես ձիերին և այլ անասուններին որպես կեր, մշակվում է Սպահանի, Թեհրանի, Թավրիզի, Գորգանի և Մեշխեդի շրջաններում։ Բրինձը հիմնականում արտադրվում է Կասպից ծովի ափերին, մասամբ նաև հարավում։

Բամբակի արտադրության կենտրոններն են՝ Կասպիականի ծովափի արևելյան մասը, Թավրիզի, Ղազվինի, Թեհրանի, Սպահանի, Կումի, Մեշխեդի շրջանները։ Փորձեր են արվում բամբակագործություն ներմուծել Իրանի հարավում և Քերմանշահում. ընդարձակվում են ամերիկական բամբակի ցանքսերը։ Արդեն 1936/37 թ. բամբակի ցանքսերը 1913/14 թ. համեմատությամբ ավելացան 152%-ով, իսկ բամբակի բերքի մեջ ամերիկական սերմի տեսակարար կշիռը 1913/14 թ. 4%-ից ավելացավ մինչև 1935/36 թ. 5%-ը։ Շաքարի ճակնդեղի մեծ չափերով մշակելն Իրանում սկսվեց մոտավորապես 1930 թ. և կապ ուներ շաքարի գործարանների շինարարության հետ։ Շաքարի ճակնդեղի արտադրության հիմնական շրջաններն են՝ Թեհրանը, Ղազվինը, Սարին, Սպահանը, Մեշխեդը, Շիրազը, Թավրիզը։ Այգեգործության հիմնական կենտրոններն են՝ Մեշխեդը, Թավրիզը, Ռեզաիյեն, Ղազվինը և գլխավորապես խուրմա արտադրող հարավային շրջանները։ Խուրմայի արմավենիների ընդհանուր թիվը՝ 5 միլիոնից ավելի է։ Բարիում, Ռեշտում և Գորգանում մշակվում են ցիտրուսային կուլտուրաներ, որոնց կարելի է հանդիպել նաև Շիրազում, Քերմանում և Իրանի հարավի մի քանի այլ շրջաններում։ Շերամապահությունը զարգացած է գլխավորապես մերձկասպյան մարզում (Սարիի, Ռեշտի շրջաններում), ինչպես նաև Մեշխեդի, Թավրիզի և այլ շրջաններում։ Շերամապահության արտադրանքը (տարեկան հավաքվում է մոտ 3 հազ. տոննա մետաքսի բոժոժ) առավելապես ծառայում է էքսպորտի համար չմշակված ձևով (բոժոժներ)։ Վերջին ժամանակներում տեքստիլ նոր ձեռնարկությունների շինարարության կապակցությամբ սկսեց նաև աճել մետաքսի ներքին գործածման բաժինը։ Լախիջանի և Ռեշտի շրջաններում մշակվում է թեյ։ Մշակվում է նաև կանեփ և քունջութ. հավաքվում է դումմիդրագանտ (վայրի ասադրագալ բույսի արտադրանքի—խեժի մի տեսակը)։

Աղյուսակ 2. Գյուղատնտեսական կարևորագույն կուլտուրաների ցանքսատարածությունը և բերքը՝ 1937 թ.

Կուլտուրաներ	ցանքատարածություն (հազ. հեկտ.)	բերքը (հազ. տ.)	Կուլտուրաններ	ցանքատարածություն (հազ. հեկտ.)	բերքը (հազ. տ.)
Ցորեն	1.647	1.942	Շաքարի ճակնդեղ . .	16	25.2[3]
Գարի	574	707	Թեյ	4	1.0
Բրինձ	188	382	Սեզամ (քնջութ) . .	3	7.5
Բամբակ . . .	204	32.3[1]	Ջութ	3	3.8
Ծխախոտ . .	13	15.9[2]			

Երկրի էկոնոմիկայում նշանակալի դեր է խաղում անասնապահությունը, առավելապես արոտային անասնապահությունը որը վաչկատուն ցեղերի հիմնական զբաղմունքն է։ Անասնապա՞-

[1] 1941 թվին՝ 40 հազ. տ., [2]) 1940 թվին՝ 12.7 հազ. տ., [3]) Շաքարի արտադրանքը 1939/40 թվին։

հության գլխավոր շրջանը—երկրի արևմտյան՝ հատկապես Իրաքին ու Թյուրքիային սահմանամերձ մասն է։

Աղյուսակ 3. Անասունների գլխաքանակը 1937 թվին
(հազարներով)

Ձիեր	305	Ոչխարներ	14.011
Էշեր և ջորիներ	1.232	Այծեր	7.119
Խոշոր եղջ. անաս.	2.920		

Անասնապահության արտադրանքի (գլխավորապես բրդի, ալիքների, կաշվեհումքի և մորթեհումքի) զգալի մասն արտահանվում է արտասահման։ 1940 թ. հավաքվեց 15,5 հազ. տոն բուրդ։ Բրդի արտահանությունը տարեկան սովորաբար կազմում էր 7—8 հազ. տ.։ Բուրդը և կաշվեհումքը գլխավորապես ՍՍՌՄ են ուղարկվում։

Մորթեհումքի արտադրանքում կարևորագույն նշանակություն ունի գառան փոքր մորթին, որի լավագույն տեսակները՝ Շիրազինը, հիմնականում ծառայում են էքսպորտի համար։

Կասպից ծովի և Պարսից ծոցի ափերում տեղական բնակչության կարևոր զբաղմունքն է ձկնորսությունը։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ։ Արդյունահանող արդյունաբերություն։—Իրանը հարուստ է հանածոներով՝ նավթով, քարածխով, երկաթով, պղնձով, արճիճով, նիկելով, անագով, արծաթով, ոսկով, պլատինով, գրաֆիտով, աղով, ծծմբով, մարգանեցով, ասբեստով և այլն։ Սակայն բոլոր այդ ռեսուրսները, բացառությամբ նավթի, քիչ են ուսումնասիրված և համարյա չեն օգտագործվում։ Նավթը հայտնաբերված է գլխավորապես երկրի հարավային շրջաններում։ Հարավային նավթաբեր գոտին, որը Մեսոպոտամյան հանքավայրերի շարունակությունն է հանդիսանում, ձգվում է Խուզիստանի միջով Քուրդիստանից Պարսից ծոցի ափերի երկայնքով։ Երկրորդ, ավելի նվազ նշանակություն ունեցող նավթաբեր գոտին գտնվում է հյուսիսում, որն ընդգրկում է Իրանական Ադրբեջանը, Կասպից ծովի ափերը և Խորասանի հյուսիսային մասը։ Վերջին տվյալների համաձայն Իրանի այսպես կոչված «նավթային ապացուցված պաշարները» կազմում են 299 մլն. տ. կամ կապիտալիստական բոլոր երկրների համապատասխան ռեսուրսների 8%-ը, ընդ որում իր հանքավայրերի հարստության

տեսակետից Իրանը գրավում է աշխարհում չորրորդ տեղը՝ ՍՍՌՄ-ից, ԱՄՆ-ից և Իրաքից հետո (առաջներում հրապարակված այլ տվյալների համաձայն միայն հարավային հանքավայրերի նավթի պաշարները կազմում են մոտավորապես 950 մլն. տ.)։ Իրանական նավթային հանքավայրերի մշակման առաջին, սակայն շատով դադարեցված, փորձերը կատարվեցին XIX դ. 90-ական թվականներին։ 1901 թվին իրանական կառավարությունը ավստրալիացի Ուիլյամ Դ'Արսիին 60 տարվա ժամկետով տրամադրեց Իրանի ամբողջ տերիտորիայում, բացառությամբ հյուսիսային պրովինցիաների, նավթի հետախուզության և արդյունահանման կոնցեսիա։ 1908 թ. հայտնաբերվեց Մեյդանե-Նեֆթունի խոշոր ադուլն նավթի հանքավայրը Մեսջեդե-Սոլեյմանի շրջանում, Դ'Արսիի կոնցեսիան 1909 թ. վերակազմակերպվեց որպես Անգլո-Պարսկական նավթային կոնցեսիա, իսկ 1935 թ. վերանվանվեց Անգլո-իրանական նավթային կոմպանիա։ Նավթային կոնցեսիան փաստորեն գտնվում է բրիտանական կառավարության վերահսկողության տակ, որին պատկանում են կոմպանիայի ակցիաների զգալի մասը։ Անգլո-իրանական կոմպանիայի բանվորների և ծառայողների թիվը 1936/37 թ. կազմում էր մոտ 70 հազ. մարդ։ Հանքավայրերում ղեկավար պաշտոնները պատկանում են առավելապես անգլիացիներին։

Նավթը հիմնականում արդյունահանվում է Խորեմշահրի, Ահվազի և Քերմանշահի շրջաններում—Մեսջեդե-Սոլեյման, Նեֆթե-Գոլ, Նեֆթեշահ տերիտորիաներում։ Մեսջեդե-Սոլեյման նավթաբեր հիմնական շրջանում իր արդյունահանման վայրից նավթը միքանի նավթամուղներով տեղափոխվում է դեպի Շատ-էլ-Արաբ գետի վրա տեղավորված Աբադանը, որը ոչ հեռու գտնվում այդ գետի Պարսից ծոցը թափվելու վայրից։ Կոմպանիան Աբադանում կառուցել է նավթաթոր հզոր գործարաններ, որտեղից էլ նավթամթերքներն այնուհետև արտահանվում են։ Իրանական կառավարությունը 1933 թ. նոր համաձայնագրով թեպետ և սահմանափակեց Հարավային Իրանում գտնվող կոնցեսիայի տերիտորիան 260 հազ. քառ. կմ. տարածությամբ, այլ և երկարաձգեց կոնցեսիայի ժամկետը մինչև 1993 թիվը։ Ընդ որում կառավարության օգտին կատարված կոնցեսիոներների տարեկան մասնահատկացումները որոշվեցին 975—1.050 հազ. ֆունտ ստեռլինգից ոչ պակաս չափով մեկ տարում։ Քերմանշահում՝ Իրաքի սահմանին մոտ, Անգլո-իրանական կոմպա-

Նիման 1935/36 թ. կառուցեց մի նոր գործարան, որտեղ վերամշակվում է Նավթեղահի հանքերից Նավթամուղով (235 կմ. երկարությամբ) ստացվող նավթը։ Քերմանշահի գործարանը նավթամթերքներ է մատակարարում Իրանի տարբեր շրջաններին։ Հյուսիսային Իրանում նավթի հանքավայրեր են հայտնաբերված Մեշխեդի, Թավրիզի, Արդեբիլի, Սարիի, Ռեշտի, Սենեանի և Գորգանի մոտ։ Սակայն այդտեղ հանքերի շահագործումն սկսված է միայն Սեմնանի շրջանում և Իրանական Ադրբեջանում։

Աղյուսակ 4—Նավթի հանույթն Իրանում (հազ. տ.)

1913 թ.	1929 թ.	1931 թ.	1935 թ.	1937 թ.	1938 թ.	1939 թ.	1940 թ.	1941 թ
248	5.549	5.843	7.608	10.331	10.359	10.329	10.426	8.000

Իրանական համարյա ամբողջ նավթն արտահանվում է արտասահման։

Որոշ հաշվումների համաձայն քարածուխի գեոլոգիական պաշարները որոշված են 1.800 մլն.տ.։ Հաշվում են թվով իննը ամենից ավելի խոշոր հանքավայրեր, որոնք տեղավորված են հիմնականում մերձկասպյան շրջանում (Էլբուրսի կենտրոնական մասը), այնուհետև Սպահանի մոտ և Քերմանում։ Քարածուխի հանույթը կատարվում է առավելապես մակերեսային հանքաշերտերից պրիմիտիվ եղանակներով և տարեկան հաշվվում է ընդամենը մի քանի տասնյակ հազար տոննա։ Քարածխի մի մասը (Թեհրանից հյուսիս-արևմուտք գտնվող Զիրարի հանքավայրը) օգտագործվում է Տրանսիրանական երկաթուղու կարիքների համար, մյուս մասը (Բելարուդի հանքավայրը Սպահանի մոտ և այլն)՝ արդյունաբերական ձեռնարկությունների համար։

Երկաթահանքը, որն Իրանում պատահում է տարբեր տեղերում, հիմնականում կուտակված է Էլբուրսի լանջերին՝ հյուսիսում։ Սեմնանի շրջանում գտնվող հիմնական հանքավայրերը 1939 թ. տվեցին մոտ 100 հազ. տ. երկաթահանք։ 1936 թվից սկսվել է պղնձի հանքերի արդյունաբերական շահագործումը (Էնարեքի շրջանում, Բզդի մոտ և Թեհրանից հարավ գտնվող Հաննիաբադի շուրջը)։

Աշակող արդյունաբերություն։ Իրանում մինչև համաշխարհային առաջին պատերազմը ֆաբրիկա-գործարանային աղգային արդյունաբերություն համարյա թե չկար։ Ֆաբրիկաներ և գործարաններ կազմակերպելու ուղղությամբ իրանական առանձին ձեռնարկատերերի կատարած բազմիցս փորձերն անհաջողություն էին կրում արդյունաբերապես զարգացած օտարերկրյա պետությունների մրցման հետևանքով։ Իրանի նախապատերազմյան արդյունաբերությունը՝ հիմնականում կազմված էր տնայնագործական և արհեստագործական ձեռնարկություններից, որոնց մեջ առանձնապես աչքի են ընկնում բամբակաղտիչ գործարանները և գորգեր արտադրող ձեռնարկությունները, որոնք աշխատում էին հատկապես էքսպորտի համար։ Իրանի արդյունաբերական զարգացման մեջ զգալի տեղաշարժ կատարվեց 1929—1933 թ. թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին՝ իրանական կառավարության հովանավորողական քաղաքականության կապակցությամբ։ Կառավարության աջակցությամբ սկսվեց արդյունաբերական ձեռնարկությունների, հիմնականում սննդամթերքային և տեքստիլ, ինչպես նաև լուցկու, ցեմենտի, ծխախոտագործական ձեռնարկությունների շինարարությունը։ որոշ ձեռնարկություններ՝ շաքարի, ցեմենտի, մետաղագործական այլ ձեռնարկություններ կառուցվում էին և պատկանում էին անմիջապես պետությանը։

1939 թ. Իրանում հաշվվում էին ֆաբրիկա-գործարանային շուրջ 400 ձեռնարկություններ (չհաշված տնայնագործական արհեստանոցները)։

Աղյուսակ 5. Ֆաբրիկա-գործարանային ձեռնարկությունների բանակն ըստ արդյունաբերության կարևորագույն ճյուղերի—1939 թ.

Տեքստիլ և տրիկոտաժ	93	Սիլիկատային	9
Մնունդ և համի	95	Մետաղամշակման	5
Կաշվի-կոշիկի	18	Ռազմական	4
Փայտամշակման	11	Էլեկտրոկայաններ	10
Քիմիական	25		

Մնունդի և համի արդյունաբերության մեջ ձեռնարկությունների քանակով (44) առաջին տեղը գրավում է ալրաղացայինը, որն ունի 22 խոշոր աղացներ (Թեհրանում կառուցված է

աղացային խոշոր կոմբինատ-էլեվատոր)։ Կարևոր նշանակություն ունի նորերս միայն ստեղծված շաքարի արդյունաբերությունը, որն ունի 8 գործարան՝ 2-ը Թեհրանի մոտ և մեկական էլ Քերմանշահում (Շահարաղ), Մեշխեդում, Թավրիզում, Շահիում, Շիրազում (Էլամերվդեշտ), Վեթամինում։ Սկսել է զարգանալ բամբակագործվածքային արդյունաբերությունը, որն ունի մինչև 200 հազ. լիկ։ Ամենից ավելի խոշոր տեքստիլ (գլխավորապես՝ բամբակագործվածքային) ձեռնարկությունները գտնվում են Մեշխեդում, Ախվազում, Սպահանում, Քաշանում, Շիրազում, Թեհրանում։

Վերջին տարիներում խոշոր արդյունաբերության կառուցումը հիմնականում կատարվում էր Իրանի հյուսիսային մասում՝ Թեհրանի, Թավրիզի, Մեշխեդի, ինչպես նաև Սպահանի ու Բզդի շրջաններում։ 1937 թ. շահագործման հանձնվեցին պետության կառուցած հետևյալ խոշոր ձեռնարկությունները՝ Թեհրանի ծխախոտագործական ֆաբրիկան, Հաննիաբադի պղնձաձուլական կոմբինատի (Թեհրանի մոտ), Զալուսայի մետաքսի կոմբինատը։ Նույն այդ 1937 թվին սկսվեց Էմինաբադի մետաղագործական կոմբինատի (Թեհրանի մոտ) և Էնարեքի պղնձաձուլական գործարանի շինարարությունը Բզդի մոտ։ 1938 թ. կառուցվեցին Փեհլեվիի նավաշինարանը և ավիոնավաքման մի գործարան Թեհրանի մոտ։

Իրանի տնտեսության մեջ խոշոր նշանակություն ունի գորգերի տնայնագործական արտադրությունը, որով զբաղվում են մոտ 150—200 հազ. տնայնագործներ և որը զարգացած է ամենուրեք, բայց գլխավորապես երկրի հյուսիս-արևմտյան և կենտրոնական մասերում։ Գորգերի արտադրությունը զգալի մասով գործում է էքսպորտի համար։

Իրանի մշակող արդյունաբերության մեջ (բացի նավթայինից) օտարերկրյա կապիտալը համարյա չէր մասնակցում, թեպետ և իրանական նոր ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունը կառուցվել է օտարերկրյա մասնագետների օգնությամբ։

Իրանի արդյունաբերական հիմնական կենտրոններն են՝ Թեհրանը, Մեշխեդը, Թավրիզը, Սպահանը (տես «Տերիտորիան և բնակչությունը» բաժինը) և Քերմանշահը (նավթաթոր, գորգագործական, շաքարի և այլ արդյունաբերություն)։

Տրանսպորտ։ Իրանը երկար ժամանակ երկաթուղիներ կառուցել չէր կարող, որովհետև դեռևս 1890 թ. ցարական Ռուսաստանը և Անգլիան փոխադարձաբար երկյուղ կրելով Իրանում մյուս երկրի ազդեցության ուժեղացումից, պարտավորվել էին իրենք և պարտավորեցրել էին իրանական կառավարությանը հեռու մնալ Իրանում երկաթուղագծեր կառուցելուց մինչև 1910 թիվը։ ՍՍՌՄ-ը ոչնչացված համարեց բոլոր այն սահմանափակումները, որոնք այդ տեսակետից Իրանին բռնի ընդունել էր ավել ցարական կառավարությունը։ Համաշխարհային առաջին պատերազմի ժամանակաշրջանում Իրանում կառուցվեց ստրատեգիական երկու երկաթուղի։ Դրանցից մեկը՝ 146 կմ. երկարությամբ, որը կառուցել էր ցարական Ռուսաստանը, Թավրիզը Ջուլֆայի վրայով կապում էր Ռուսաստանի Անդրկովկասյան երկաթուղիների հետ։ Առանձին՝ 53 կմ. երկարություն ունեցող մի ճյուղավորությամբ այդ երկաթուղին միանում էր Ռեզաիյե (Ուրմիա) լճի ափին գտնվող Շերեֆխանե նավահանգստի հետ։ Մյուս երկաթուղագիծը, որը կառուցել էին անգլիացիները հարավ-արևելքում մինչև Զահեդանը (Դոզդաբ), հնդկական երկաթուղագծերի շարունակությունն էր։ Թավրիզյան երկաթուղին ՍՍՌՄ-ը 1921 թ. ամբողջապես հանձնեց Իրանին որպես սեփականություն։ Դոզդաբյան երկաթուղին պատերազմից հետո անգլիացիները քանդեցին։ Իրանի մյուս նեղագիծ երկաթուղիներն են՝ Թեհրան-Շահ-Արդոլ-Ազիմ (9 կմ.), Փիրեբազար-Ռեշտ (12 կմ.) գծերը և Անգլո-Իրանական նավթային կոմպանիային պատկանող Իսմաիլիյե-Մեսջեդ-Սոլեյման գիծը (120 կմ.), որը նավթահանքերի կենտրոնը կապում է Կարուն գետի վրա գտնվող Իսմաիլիյե նավահանգստի հետ։ Իրանական կառավարությունը 1928 թ. ձեռնամուխ եղավ 1.394 կմ. երկարություն ունեցող Տրանսիրանական երկաթուղու շինարարությանը, որը միացնում է Իրանի հարավում գտնվող Պարսից ծոցի Բենդեր-Շահպուր (նախկ. Խոր-Մուսա) նավահանգիստը՝ երկրի հյուսիսային մասում Կասպից ծովի Բենդեր-Շահ նավահանգստի հետ։ Երկաթուղագծի շինարարությունն ավարտվեց 1938 թ. օգոստոսին։ Շինարարությանը տեխնիկական օգնություն էր ցույց տալիս հիմնականում շվեդա-դանիական մի կոնսորցիում։ ՍՍՌՄ այդ երկաթուղագծի շինարարության համար մատակարարում էր մեծ քանակությամբ նյութեր և սարքավորումներ։ Հետագայում շա-

ռունակվեց երկաթուղային նոր գծերի՝ Սպահան-Էրաք, Թեհրան-Մեշխեդ, Թեհրան-Թավրիզ, Թեհրան-Իեզդ և այլ գծերի շինարարությունը։

Իրանի խճուղիների ցանցն սկսեց ընդարձակվել միայն վերջին ժամանակները, երբ մեծ քանակությամբ ավտոմոբիլներ հանդես եկան Իրանում։ Ճանապարհների ցանցի ընդհանուր երկարությունը 1937 թվին՝ 19,7 հազ. կմ. էր։ Ճանապարհների զգալի մասը պիտանի է ավտոհաղորդակցության համար։ Մասնավորապես Թեհրանը ավտոմոբիլային ճանապարհներով և խճուղիներով կապված է երկրի բոլոր կարևորագույն կենտրոնների, Կասպից ծովի ու Պարսից ծոցի նավահանգիստների (Թավրիզ, Փեհլեվի, Խորրեմշեհր, Բուշիր, Բենդեր-Աբբաս, Մեշխեդ, Բենդեր-Շահ և այլն) հետ։ Իրանում 1938 թ. հաշվվում էր 12,7 հազ. ավտոմոբիլ։ Իրենց խոշոր նշանակությունն Իրանում պահպանել են նաև քարավանային ճանապարհները, առանձնապես հարավ-արևելքում, կենտրոնական մասում և մյուս այն շրջաններում, որտեղ որ չկան ավտոմոբիլային ճանապարհներ։ Իրանի ներքին ջրերից նավարկելի են միայն Ռեզաիյե լիճը և Կարուն գետը՝ խոշոր նավերով մինչև Ահվազ, ավելի փոքր նավերով մինչև Շելիլ։

Կասպից ծովի կարևորագույն նավահանգիստներն են՝ Փեհլեվին, Բենդեր-Շահը (Տրանսիրանական երկաթուղու սկզբնակետը), Բենդեր-գեզը, Շահսեվարը, Աստարան, Բաբոլ-Սերը։ Պարսից ծոցի նավահանգիստներն են՝ Բենդեր-Աբբասը, Բուշիրը, (Բենդեր-Բուշիրը կամ Աբու-Շեհրը), Ջասքը, Բենդեր-Շահպուրը (Տրանսիրանական երկաթուղու վերջնական կետը), Խորրեմշեհրը (նախկին Մոհամմերա), Աբադանը (որտեղով արտահանվում են Անգլո-Իրանական կոմպանիայի նավթաբեռները)։ Իրանական երկաթուղիների թողունակության մեծացման և նավահանգիստների ընդարձակման ուղղությամբ մեծ աշխատանք կատարվեց ՍՍՌՄ և Անգլիայի հետ 1942 թ. հունվարին՝ բանի կողմից դաշնակցային պայմանագիր կնքելուց անմիջապես հետո։ Այդ պայմանագիրը նախատեսնում էր, որ Իրանը դաշնակից պետություններին հնարավորություն ընձեռեր օգտագործելու նրա բոլոր հաղորդակցության միջոցները։

Արտաքին առևտուրը։ Իրանի էկոնոմիկայում արտաքին առևտուրը կարևոր դեր է խաղում, որովհետև երկիրը դեռ շարունակում է զգալ արդյունաբերական ապրանքների իմպորտի կարիքը, և հարկադրված է արտահանել իր գյուղատնտեսական արտադրանքի զգալի մասը։ Իրանի արտաքին առևտրի ընդհանուր շրջանառությունը 1940/41 թ. կազմեց 3.466 մլն ռիալ, դրանից 918 մլն. ռիալը իմպորտի գծով, և 2.548 մլն ռիալը՝ էքսպորտի գծով։ Իրանական արտահանության հիմնական առարկաներն են՝ նավթը և նավթամթերքները (արտահանում է Անգլո-Իրանական կոմպանիան), գորգերը և գյուղատնտեսության արտադրանքներ՝ բամբակ, բրինձ, բուրդ, չորացրած և թարմ պտուղներ, փոքր գառան մորթիներ, աղիքներ, ափիոն, կաշվեղեն, կենդանի անասուն. մեծ քանակությամբ արտահանվում է նաև դումմիդրագանտ, ձուկ և խավիար։ Իսկ ներմուծում է Իրանը գլխավորապես լայն սպառման արդյունաբերական ապրանքներ՝ բամբակյա գործվածքներ, թել, շաքար, ինչպես նաև մետաղ ու

Աղյուսակ 6.—Իրանի արտաքին առևտրի կառուցվածքը 1938/39 թ.

Էքսպորտ			Իմպորտ		
Ապրանքները	միլիոն ռիալի	%	Ապրանքները	միլիոն ռիալի	%
Ընդամենը . . .	2.522	100	Ընդամենը	705	100
այդ թվում՝			այդ թվում՝		
նավթ և նավթամթերքներ	1.765	69.4	Շաքար	100	14.2
Գորգեր	112	4.4	թել	86.8	12.3
Պտուղներ թարմ և չորացր	163.3	6.5	Բամբակյա գործվածքներ	63.3	9.0
Բամբակ	62.6	2.5	Մեքենաներ և տրանս. միջոց.	53.5	7.6
Բուրդ	38.9	1.5	Մետաղ և մետաղյա իրեր	37	5.3
Ափիոն	3.[illegible]	1.4			
Դումմիդրագանտ	46.1	1.8			

մեռաղյա իրեր, արանսպորտային միջոցներ, և սարքավորում, նավթամթերքներ, քիմիական ապրանքներ, դեղեր, ցեմենտ, լուցկի, ապակյա իրեր։

Ցանկանալով ամրապնդել իր դիրքն Իրանում, ֆաշիստական Գերմանիան նրա հետ 1936 թ. կնքեց կլիրինգային մի համաձայնագիր և համաշխարհային երկրորդ պատերազմից առաջ զգալիորեն ավելացրեց իր ապրանքների, զլխավորապես մեքենատեխնիկական սարքավորման իր էքսպորտը դեպի Իրան. նա ամեն կերպ աշխատում էր Իրանի արդյունաբերական շինարարության մեջ ավելի շատ մասնակցություն ունենալ և միևնույն ժամանակ ծայրաստիճան ցածր գներով երկրից դուրս էր կորզում իրանական հումքը։ Օգտագործելով կլիրինգային համաձայնագրով ստեղծված Իրանի տնտեսական կախվածությունը, գերմանացիները միաժամանակ և համաշխարհային գներից շատ ավելի չափով բարձրացրին Իրանին մատակարարվող ապրանքների գները և դրանով իսկ ավելի ուժեղ հարված հասցրին իրանական ժողովրդական մասսաների բարեկեցիկությանը։ Դեմպինգի օգնությամբ ավելացրեց իր բամբակյա գործվածքների էքսպորտը դեպի Իրան նաև Ճապոնիան։ Իրանի արտաքին առևտրում Գերմանիայի (1928/29 թվին՝ 4.4% և 1936/37 թ.՝ 21.3%) և Ճապոնիայի (1928/29 թվին՝ 1.7% և 1936/37 թ.՝ 3.1%) տեսակարար կշռի մեծացումը տեղի էր ունենում իրանական շուկայից անգլիական ապրանքները դուրս մղելու հաշվին։ 1940 թ. Գերմանիայի բաժինը իրանական արտահանման մեջ բարձրացավ մինչև 51.4%, իսկ ներմուծման մեջ՝ մինչև 45.6%։

1931 թ. կառավարությունն սկսեց խստորեն կարգավորել Իրանի արտաքին առևտուրը։ 1929—1933 թ.թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի ճնշման տակ մացված արտաքին առևտրի նոր սիստեմը հիմնված էր այսպես կոչված «արտաքին առևտրի մենաշնորհի օրենքի» վրա և կոչված էր բալանսավորելու Իրանի արտաքին առևտրի շրջանառությունը և նպաստելու իրանական արդյունաբերական զարգացմանը։ Ընդամենը իրանական կառավարությունը դիմեց իմպորտի և էքսպորտի մենաշնորհի այնպիսի ընկերությունների կազմակերպմանը, որոնք ընդգրկում էին հիմնական ապրանքները և Իրանի արտաքին առևտրի մեծ մասը։

Իրանի և ՍՍՌՄ տնտեսական կապերը։ ՍՍՌՄ-ի հետ առաջին անգամ առևտրական պայմանագիր կնքվեց և հաստատվեց 1927

թվին։ Սովետա-իրանական առևտրական հարաբերությունների հիմքում դրվեց նեստոռ-բալանսի, այսինքն, Իրանից ՍՍՌՄ կատարած էքսպորտը համապատասխան գումարով կատարված ապրանքների իմպորտով ծածկելու սկզբունքը։ 1931 թ. կնքված, վերաբնակեցման, առևտրի և ծովագնացության մասին սովետա-իրանական նոր կոնվենցիան հաստատեց երկու երկրների առևտրական հարաբերությունների մեջ նեստոռ-բալանսի սկզբունքի պահպանումը, ընդ որում Սովետական Միությունը ճանաչեց Իրանի արտաքին առևտրի մենաշնորհի օրենքը։ Այդ կոնվենցիայի գործողության ժամկետը 1935 թ. լրանալուց հետո Իրանի և ՍՍՌՄ միջև կնքվեց առևտրական նոր պայմանագիր, որը խոշոր դեր խաղաց Իրանի ազգային արդյունաբերության զարգացման գործում և մեծապես նպաստեց նրա տնտեսական առաջադիմությանը։ Վերջապես, 1940 թ. իրանական մեջլիսը և ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահությունը ռատիֆիկացիայի ենթարկեցին սովետա-իրանական մի նոր համաձայնագիր, որը որոշեց երկու երկրների միջև եղած ապրանքաշրջանառության հետագա կարգն ու ծավալը։ Իրանում գնելով բրինձ, բամբակ, անասուն, բուրդ, փոքր գառան մորթիներ, կաշվեհումք, գումմիդրագանտ, ձուկ, խավյար, չոր մրգեր և իրանական գյուղատնտեսության այլ մթերքներ, ՍՍՌՄ մատակարարում է նրան լայն սպառման անհրաժեշտ առարկաներ (շաքար, լուցկի, գործվածքներ, ապակի և այլն), մետաղյա իրեր, մեքենաներ և սարքավորում։ ՍՍՌՄ-ը իրանական ապրանքների հիմնական սպառողն է. Իրանի էքսպորտային կարևորագույն ապրանքները՝ բամբակը, բուրդը, կաշվեհումքը, բրինձը, չոր մրգերը հիմնականում արտահանվում են ՍՍՌՄ։ Իրանական գյուղատնտեսությանը հնարավորություն տալով վաճառքի հանելու իր արտադրանքը, ՍՍՌՄ-ը միաժամանակ և նրան անհրաժեշտ օգնություն էր ցույց տալիս այդ արտադրանքը զարգացնելու և որակը բարելավելու ուղղությամբ։ Սովետա-իրանական «Իրանսովխլոպոկ» կազմակերպության օգնությամբ ձեռնարկումներ են անցկացվել բարելավելու իրանական բամբակի որակը՝ ամերիկական սերմի երկարաթել բամբակի ցանքսերը զարգացնելու միջոցով, ուժեղացնելու պայքարը գյուղատնտեսական վնասատուների դեմ, կատուցելու բամբակազտիչ խոշոր գործարաններ, բարելավելու բամբակի զման մեթոդները և այլն։ Սովետական առևտրական կազ-

մակերպությունները համանման օգնություն ցույց տվեցին նաև Իրանական պաղարտության արտադրանքի որակի բարելավման և զարգացման գործում։

1923 թվին կազմակերպված սովետա-իրանական «Պերսշոկ» ընկերությունն օժանդակեց վերականգնելու մերձկասպյան շրջանի շերամապահությունը, որը համաշխարհային առաջին պատերազմին հաջորդող տարիներին ոչնչացել էր. առաջին անգամ Իրանում սարքավորեց շոգի բուժաստակարան, ներմուծեց ամենանոր կոնստրուկցիայի ֆաբրիկային սարքավորում և այլն։

Իրանի ձկնային հարստությունների շահագործմանը և ձկնորսական տնտեսության զարգացմանը մեծապես նպաստեց «Իրանռիբա» իրանո-սովետական խառն ընկերության կազմակերպումը։

ՍՍՌՄ-ը ակտիվորեն մասնակցել է և մասնակցում է Իրանի արդյունաբերական շինարարությանը։ Սովետական մասնագետներն Իրանում կառուցեցին միքանի ռադիոկայաններ, բրդղալվացատներ, բրնձամաքրիչ գործարաններ, էլևատորներ, թեհրանի աղացային կոմբինատը և արդյունաբերական այլ ձեռնարկություններ։

Ֆինանսներ և դրամային սիստեմ։ Իրանի ֆինանսական կյանքում վաղուցվանից խոշոր դեր է խաղում անգլիական կապիտալը։ Անգլիական Շահնշահական բանկը (հիմնվել էր 1899 թ.), որն երկար ժամանակ ուներ էմիսիայի իրավունք (մինչև 1930 թ.), ամբողջապես վերահսկում էր իրանական ֆինանսները և երկրի էկոնոմիկան։ Իրանում կապիտալիստական հարաբերությունների ուժեղացման կապակցությամբ սկսեց ստեղծվել բանկային սեփական ազգային սիստեմ։ Իրանական բանկերի մեջ ամենախոշորը՝ 1924 թ. ստեղծված Ազգային բանկն է, որը 1930 թվից ունի թղթադրամների էմիսիայի մենաշնորհի իրավունք։

1941/42 թ. պետական բյուջեն նախատեսել էր 3.613,8 մլն. ռիալ եկամուտներ և 4.313,9 մլն. ռիալ ծախսեր։ 1939 թ. տվյալներով բյուջեի եկամտային մասը հիմնականում կազմվում էր մաքսատուրքերից, պետական մենաշնորհներից ստացվող եկամուտներից, մինիստրությունների եկամուտներից, անուղղակի ու այնուհետև ուղղակի հարկերից։ Ծախսային մասում նշանակալի էին հաղորդակցության ճանապարհների, արդյունաբերության, ռազմական մինիստրությունների գծով կատարված ծախսումները և կառավարման ծախսերը։ Իրանի արտաքին պարտքն ըստ 1940 թ. հունվարի 1-ը կազմում էր 51,2 մլն. ռիալ։

Իրանի դրամային միավորը ոսկի ռիալն է, որը=100 դինարի, 100 ոսկի ռիալը=է 1 ոսկի փեհլեվիի։ Ոսկու պարիտետով ռիալը =է ԱՄՆ 0,089 դոլլարի։ 1932 թ. օրենքի համաձայն շրջանառության մեջ դրվեցին արծաթյա և թղթյա ռիալներ։ Շրջանառության մեջ գտնվում է փաստորեն միայն թղթյա վալյուտան։ 1939 թ. միջին կուրսով ռիալը=է ԱՄՆ 0.06 դոլլարի։

V. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Իրանը հին դարերում։ Դեռևս խոր հնության ժամանակաշրջանում Իրանի վրայով էին անցնում Միջերկրական ծովի ավազանը, Առաջավոր Ասիան և Արևելյան Եվրոպան Հնդկաստանի ու Հեռավոր Արևելքի հետ կապող առևտրական կարևորագույն ճանապարհները։ Բնակչության հարավային կամ հարավ-արևմտյան իրանական ճյուղավորությունը՝ «պարսուա» ցեղերը (այդտեղից էլ առաջացել է «պարսիկ» անվանումը), որոնք մինչև քր. թվ. VII դարի սկզբին գտնվում էին նախնադարյան-համայնքային բայքայվող կարգի ստադիայում, կախում ունեին Միդիայից (Մարառատան)։ Պարսկական հզորագոր թագավորության ստեղծողը և առաջին թագավորը Կյուրոսն էր (558—529 թ.թ. մինչև քր. թվ.)՝ Աքեմենյանների ցեղից, որը թոթափեց մեդիացիների տիրապետությունը։ Նվաճելով Լիդիան՝ Սարդու մայրաքաղաքով, բաբելոնական Նաբուգոդոնոսոր թագավորի ժառանգներից խլելով սեմիտական երկրներն ընդհուպ մինչև Միջերկրական ծովը, Կյուրոսն իր իշխանության տակ միավորեց նաև Իրանի ցեղերը։ Արևելքում նրա տիրապետությունները տարածվում էին մինչև Օքսա (Ամու-դարյա) գետը և Քաբուլ գետը։ Կյուրոսի որդի Կամբյուզը (529—522 թ.թ. մինչև քր.թ.) նվաճեց Եգիպտոսը։

Կամբյուզի հաջորդ Դարեհ I Հիշտասպի (522—486 թ.թ.մինչև քր.թ.) օրոք Աքեմենյանների տիրապետությունները տարածվում էին դեպի արևելք մինչև Ինդոսի աջ ափը, դեպի հյուսիս-արևելք՝ մինչև Յաքսարտը (Սիր-դարյա), դեպի հյուսիս՝ մինչև Կովկասյան լեռնաշղթան։ Դարեհի իշխանությունը տարածվում էր նաև Թրակիայի, Էգեյան ծովի մի շարք կղզիների, Եգիպտոսի, Կիրե-

նաիկայի վրա։ Աքեմենյանների պարսկական թագավորությունը բռնակալական մի միապետություն էր։ Երկիրը բաժանված էր մարզերի (սատրապությունների), որոնց գլուխը կանգնած էին վարչական և օրենսդրական շատ մեծ իշխանություն ունեցող թագավորական փոխարքաները՝ սատրապները։

Դարեհ I օրոք անցկացվեց Էֆեսից Սարգուի վրայով մինչև Սուզ տանող այսպես կոչված արքայական ճանապարհը։ Դարեհն Իրան էր հրավիրում հույն գիտնականներին, գրողներին, նկարիչներին։ Իրանի պետական կրոնը մազդեականությունն էր (տես ստորև՝ «Կրոն» բաժինը)։

Բնակչության բազմացող կազմը, պարսկական միապետության մեջ մտած երկրների արտադրողական ուժերի զարգացման մակարդակի և տնտեսական մեջև եղած տարբերությունը պայմանավորեցին նրա ասիական տրոհումը։ Այդ բանին նպաստեցին նաև 492—449 թ.թ. մինչև քր. թվ. ժամանակաշրջանում հույների դեմ մղած պատերազմներում պարսիկների կրած ծանր պարտությունները։ Սալամինի ծովամարտում (480 թ. մինչև քր. թվ.), Պլատեայի մոտ ցամաքային ճակատամարտում (479 թ. մինչև քր. թվ.) և այլ ճակատամարտերում աթենացիների տարած փայլուն հաղթանակներից հետո պարսիկներն ստիպված էին հեռանալ Հունաստանից, որն այնպես ձգտում էին նվաճել Դարեհը և նրա հաջորդ Քսերքսեսը։ Նրանք կորցրեցին Էգեյան ծովի կղզիներում և ծովափին եղած բոլոր իրենց տիրապետությունները։ Ավելի ուշ, Դարեհ II-ի (424-405 թ.թ. մինչև ք. թ.) օրոք, 60-ից ավելի տարում (սկսած մինչև քր. թվ. 410 թվից) Աքեմենյանների գերիշխանությունից ազատագրվեց Եգիպտոսը։ Պելոպոնեսյան պատերազմից հետո Սպարտայի հետ կնքած Անտալկիդյան խաղաղության պայմանագրով (387—386 թ.թ. մինչև քր. թվ.) Արտաքսերքսես II-ին (405-361 թ.թ. մինչև քր. թ.) հաջողվեց իր իշխանության տակ վերադարձնել Փոքր Ասիայի բոլոր հունական քաղաքները և Կիպրոս կղզին, սակայն այդ ևս չկանգնեցրեց Աքեմենյան միապետության սկսված քայքայումը։ Պարսկական թագավորների իշխանությունը խախտվում էր հաճախակի կրկնվող այն ապստամբությունների հետևանքով, որ բարձրացնում էին իրենց իշխանությունը ուժեղացնել ձգտող սատրապները՝ ռազմա-հողատիրական ազնվականության ներկայացուցիչները։

Դարեհ III (336—330 թ.թ. մինչև քր. թվ.)՝ վերջին Աքեմենյանը, դիմադրեց հույներին ներխուժելու երկիրը, բայց անհաջողություն կրեց։ Մինչև քր. թվ. 334—329 վթականներին Ալեքսանդր Մակեդոնացին նվաճեց պարսկական թագավորությունը։ Աքեմենյան կայսրության փլատակների վրա բարձրացան հելլենական մի շարք պետություններ, իսկ պարսկական բուն երկրամասերը մտան Սելևկյանների սիրիական-բաբելոնական թագավորության կազմի մեջ։

Մինչև քր. թվ. III դարի կեսերից Սելևկյանների պետությունն սկսեց տրոհվել քաղաքրիչ մասերի։ Կասպից ծովից հարավ-արևելք, մոտավորապես մինչև քր. թվ. 250 թվին, առաջացավ Արշակունիների Պարթևական թագավորությունը։ Միավորելով ամբողջ Իրանը և նվաճելով Հայաստանն ու Մեսոպոտամիան այդ թագավորությունը Միհրդատ I-ի (174—138 թ.թ. մինչև քր. թվ.) օրոք հասավ մեծ հզորության։ Պարթևաստանում տեղի էր ունենում նախնագարյան-համայնքային կարգերի քայքայման պրոցեսը, ստեղծվում էր հողատիրական ռազմական ազնվականություն։ Միհրդատ II-ի (124—87 թ.թ. մինչև քր. թվ.) օրոք Պարթևաստանը դարձավ հին աշխարհի ամենաուժեղ տերությունը՝ Հռոմից հետո։ Պարթևաստան էին անցնում Հեռավոր Արևելքը և Հնդկաստանը հելլենական ու հռոմեական աշխարհների հետ կապող առևտրական ճանապարհները։ Պարթևաստանը համառ պայքար էր մղում Հռոմի դեմ։ Պարթևաստանի քայքայումն սկսվեց քր. թվ. I դարում, իսկ 226 թվին նա նվաճվեց Արտաշիրի՝ Սասանի հետնորդի կողմից։

Իրանը միջին դարերում։ Իրեն «արքայից արքա»—հին Աքեմենյանների ժառանգ հռչակած Արտաշիրը (224—241 թ.թ.) համարվում է Սասանյան թագավորության հիմնադիրը, որը գոյություն ունեցավ 400 տարուց ավելի (մինչև նրա ջախջախումը արաբների կողմից) և իրենից ներկայացնում էր վաղ-ֆեոդալական տիպի այնպիսի մի պետություն, որտեղ զարգացած էր աշխարհիկ և մեհեանական խոշոր հողատիրությունը։ Սասանյանների թագավորությունը մասնահատված էր 18 սատրապությունների, որոնք բաժանված էին 4 փոխարքայությունների միջև։ Սատրապներին, ինչպես և փոխարքաներին նշանակում էր թագավորը ռազմա-հողատիրական ազնվականությունից։ Շահերը հարկադրված էին հաշվի առնել այդ ազնվականությանը ու սրա հետ միատեղ գործող զորոատրական հոգևորականությանը։

Խոսրով I Անուշիրվանի (531—579 թ.թ.) կառավարման ժամանակ Իրանը հասավ ամենաբարձր հզորության ու ծաղկման։

Ոչնչացնելով խեթալիտների թագավորությունը, Խոսրով I-ը Սասանյանների տիրապետություններին միացրեց Հարավային Արաբիան (Եմենը), որտեղից դուրս մղվեցին հաբեշները։ Խոսրով I-ի օրոք ծաղկեց փեհլեվիների պարսկական գրականությունը. Իրանում ապաստարան գտան աթենական փիլիսոփաներ՝ նեոպլատոնիկները։ Շահն աջակցում էր առևտրի զարգացմանը։ Երկրում սահմանվեց հողային հարկերի այնպիսի մի սիստեմ, որն երկար ժամանակ հետո դեռևս համարվում էր օրինակելի։ Հենվելով հողատիրական ազնվականության և հարուստ վաճառականության վրա, Խոսրով I-ը դաժանորեն ճնշեց գյուղացիական և արհեստավորական աշխատավոր մասսաների մեջ լայն չափերով տարածված մազդեականների (որոնք ընդհանուր հավասարություն և դույքի հանրություն էին հռչակում) շարժումը։

Խոսրով I-ից հետո սկսվեց Իրանի անկումը։ Բյուզանդիայի դեմ Խոսրով II-ի մղած անհաջող պատերազմն ամրողջապես քայքայեց երկիրը։ VII դ. կեսերին (632—651 թ.թ.) արաբները նվաճեցին Իրանը և սա մտավ արաբական խալիֆաթի կազմի մեջ։

Արաբների տիրապետության ժամանակ Իրանը կառավարվում էր խալիֆի փոխարքաների կողմից։ Իրանական ֆեոդալների մեծ մասը, իր հողերն ու արտոնությունները պահպանելու համար, ընդունեց Իսլամը՝ հաղթողների կրոնը։ Արաբական տիրապետության առաջին շրջանում իրանական ժողովրդի վիճակը համեմատաբար տանելի էր։ Հողամասերը մնացել էին գյուղացիական համայնքների ձեռքում, որոնք պարտավոր էին վճարել «խարաջ» հողային հարկը, վերանորոգվեց արհեստական ոռոգման բարդ սիստեմը, զորասարքանները կրոնական հալածանքների չենթարկվում։

Աբբասյանների դինաստիայի առաջին խալիֆների օրոքը. թվ. VIII դարում իրանական ֆեոդալները մեծ ազդեցություն ձեռք բերեցին կառավարության մեջ և պալատում։ Խուզիստան (Արաբիստան), Ֆարսիստան, Խորասան՝ իրանական մարզերը բացառիկ կարևոր դեր էին խաղում երկրի էկոնոմիկայում։ Իրանական ամրացրած ֆեոդալական ազնվականությունը IX դ. սկզբին պայքար սկսեց հանուն Իրանի անկախության։

Իրանում տիրապետող կրոն դարձավ շիիզմը՝ Իսլամի մեջ եղած հիմնական երկու ուղղություններից մեկը։

Խորասանի փոխարքա Թահիրը 821 թվին ազդարարեց Խորասանի անկախությունը։ Թահիրյանները, որոնք իրենց համարում էին Աբբասյանների վասալներ, իշխում էին Խորասանում մինչև 873 թ.։

Յակուբ-Իբն-Լեյսի հիմնած իրանական-Սաֆարյան դինաստիան (867—903 թ.թ.) իշխում էր Սեիստանում, Հերատում, այնուհետև նաև Ֆարսիստանում։ Զինջի-ստրուկների ապստամբությունը, որը բռնկվել էր 869 թ. Բասրայի շրջակայքում և այնտեղից էլ տարածվել էր Խուզիստանում, Յակուբին հնարավորություն տվեց ամրանալու Իրանի իր նվաճած շրջաններում։

Հետևյալ դինաստիան՝ Սամանյանները (875—999 թ.թ.) իրենց իշխանության տակ միավորեցին Իրանը և Միջին Ասիայի նշանակալի մասը։ Սամանյան պետության հիմնական մասը՝ Ամուդարյայից հյուսիս գտնվող Մավերաննահր («Անդրգետ») մարզն էր՝ Բուխարա և Սամարկանդ քաղաքներով։ Այդ մարզում, ինչպես նաև Խորասանում, X դ. առաջին կեսում ծաղկում էին երկրագործությունը, արհեստները, առևտուրը, գրականությունը, արվեստը։ Սակայն X դ. կեսերին Սամանյանները կորցրեցին Հարավային և Արևմտյան Իրանում ունեցած իրենց տիրապետությունները, որը խլեցին նրանց նախկին վասալները՝ պարսիկ-շիիթ բուվեյխիդները կամ բուիդները (932—1035 թ.թ.), որոնք 945 թ. գրավեցին Բաղդադը։

X դ. երկրորդ կեսում Սամանյան պետության մեջ սկսեցին խոշոր դեր խաղալ ստրուկներից և վարձականներից կազմված թյուրքական զորքերի պետերը։ Այդպիսի զորապետերից մեկը՝ Ալփտեգինը, այժմյան Ավղանստանի տերիտորիայում 962 թ. գրավեց Ղազնու (կամ Ղազնի) քաղաքը և սկիզբ դրեց Ղազնեվյանների դինաստիային։ Ղազնեվյան Սեբուքտեգինը (977—997 թ.թ.) օգտվելով Սամանյան պետության մեջ մղվող միջֆեոդալական պայքարից տիրապետեց Խորասանին։

Նրա որդի Մահմուդի (998—1030 թ.թ.) թագավորության շրջանը՝ աշխատավոր մասսաների առանձնակի դիշատիչ շահագործման մի ժամանակաշրջան էր։ Ժողովրդական ծագած ապստամբությունները ճնշվում էին մեծ դաժանությամբ։ Մահմուդի մահից հետո ավերված, հյուծված Իրանի վրա շուտով հարձակվեցին թյուրք-սելջուկները կամ օղուզները՝ ժամանակակից թուրքմենների նախնիները։ 1035 թ. անցնելով Ամուդարյան, նրանք 10 տարվա ընթացքում նվաճեցին Իրանի մեծ մասը։

XI դ. երկրորդ կեսում այդտեղ ձևավորվեց ռազմա-ավատական մի սիստեմ, որը հիմնված էր ֆեոդալ-իքտադարից (ավատի՝ իքտի տիրոջ) կախում ունեցող հողագործի աշխատանքի շահագործման վրա։ Սելջուկյան պետությունն ուներ 12 բաժանում, որտեղ իշխում էին սուլթանի վասսալներ հանդիսացող իշխանները։

Սուլթան Մելիքշահի (1072—1092 թ.թ.) մահվանից հետո սկսվեց Սելջուկյան պետության անկումը։ Ամբողջ XII դարը լի էր երկիրն ավերող ֆեոդալական ներքին պատերազմներով։ Չինգիսխանի մոնղոլական հրոսակախմբերի ներխուժումն ավելի շատ ավերեց Իրանը։ XIII դ. կեսին մոնղոլական խան Հուլաղուն՝ Չինգիսխանի թոռը, հպատակեցրեց Իրանը և հիմնեց ինքնուրույն մի պետություն։ Մոնղոլ-նվաճողներն Իրանում ենթարկվեցին հնազանդեցված ավելի կուլտուրական բնակչության և հասարակական ավելի զարգացած հարաբերությունների ազդեցությանը։ XIII դ. վերջում երկրում տիրապետող մոնղոլական ռազմական վերնախավը ընդունեց Իսլամ։ Հուլաղույանների պետությունը Սելջուկյան կայսրության նման լինելով ռազմական ուժով արհեստականորեն հավաքված մի պետություն՝ չէր կարող լինել ամուր և մշտական։ XIV դարի երկրորդ կեսում Իրանը նորից տրոհվեց ֆեոդալական մի շարք անկախ տիրապետություններ։

Հուլաղույանների պետության տրոհումը Թիմուրի (Թամերլանի) համար հեշտացրեց Իրանի նվաճումը, որը և նա իրագործեց 7 տարվա ընթացքում (1380 թվից), ավերելով դրա հետ միասին շատ շրջաններ և կոտորելով այնտեղի շատ բնակիչներին։ Թիմուրի որդի Շահրոխի մահվանից (1447 թ.) հետո Իրանը տրոհվեց երկու հիմնական մասի. արևելյան մասում տիրապետում էին Թիմուրյանները, իսկ արևմտյանում՝ ազրբեջանական թուրքմենները։

XV դարի վերջում պատմական բեմ բարձրացան Սեֆևյանները։ 1502 թվից մինչև 1736 թ. տիրապետող այդ դինաստիայի հիմնադիրը շահ Իսմայիլն էր, որը հենվում էր թյուրքական՝ շիիթական ցեղերի ռազմական դաշինքի, կիզիլբաշների, այսինքն՝ «կարմրագլուխների» (ըստ գլխաշորի գույնի) կազմակերպության վրա։ 1510 թ. նա իր իշխանությունը հաստատեց Իրանի արևմտյան մարզերի վրա, նվաճեց Հայաստանը և Իրաքը։ Զանգնահելով ուզբեկական խան Շեյ-Բանիին, Իսմայիլն իր տիրապետություններին միացրեց Խորասանը, ինչպես նաև Արևելյան Իրանի մարզերը։ Շիիզմը հայտարարվեց պետական կրոն։ Սակայն օսմանական սուլթան Սուլեյմանը 1514 թ. վճռական պարտության մատնեց Իսմայիլի կիզիլբաշներին։

Սեֆևյանների դինաստիայի ամենից աչքի ընկնող թագավոր Աբբաս I-ը (1587—1628 թ. թ.) իրականացրեց մի շարք կարևոր ռեֆորմներ։ Նրա ամբողջ գործունեությունը նվիրված էր երկրի քաղաքական միավորմանը, անհնազանդ ֆեոդալների ճնշմանը և այն պայքարին, որը մղում էր նա արևմուտքում Օսմանյան կայսրության դեմ, արևելքում՝ ուզբեկական ու ավղանական խանությունների դեմ։ Աբբասի մայրաքաղաքը, Սպահան քաղաքը վերաշինվեց. կառուցվում էին նոր ճանապարհներ, կամուրջներ, քարվանսարաներ, խրախուսվում էր առևտրի ու արհեստների զարգացումը։ Ստեղծելով կանոնավոր, բավականին մարտունակ մի բանակ, շահ Աբբասը մի շարք հաջող արշավանքներ կատարեց դեպի Վրաստան, Ադրբեջան, Մեսոպոտամիա։ 1597 թվին իրանական զորքերը վճռական պարտության մատնեցին ուզբեկներին։ Դրանից անմիջապես հետո Աբբասին հաջողվեց Օսմանյան կայսրությունից ետ նվաճել մի շարք տերիտորիաներ Անդրկովկասում և Մեսոպոտամիայում, ներառյալ Բաղդադը։ Շահ Աբբաս I-ի ձգտումը՝ Պարսից ծոցով Իրանի ծովային առևտրի համար ճանապարհ հարթել, նրան ռազմական ընդհարման հասցրեց պորտուգալացիների հետ, որոնք իշխելով Օրմուզ կղզիների վրա, վերահսկում էին Պարսից ծոցից դեպի Հնդկական օվկիանոս տանող ճանապարհը։ Պատրաստվելով պայքարելու Պորտուգալիայի դեմ՝ Աբբասը փորձում էր հենվել նրա թշնամիների՝ անգլիացիների վրա։ 1598 թվին Իրան եկած անգլիացիները՝ Շերլի եղբայրները, վերակազմեցին իրանական բանակը՝ ներմուծելով հրազեն, հրետանի, և մեծ ազդեցություն ունեին շահի պալատում։ 1623 թվին իրանական զորքերը լուրջ հաղթանակ տարան պորտուգալացիների դեմ՝ տիրելով Օրմուզ (պարսկ. Խորմոզ) կղզիներին։

Աբբաս I-ի մահից հետո սկսվեց երկրի տնտեսական և քաղաքական անկումը։ Շահ Աբբասի օրոք ստեղծված պետական միավորությունը նորից տրոհվեց։ Հնազանդեցված ֆեոդալները նորից ձգտեցին քաղաքական ինքնուրույնության։ Ավելի հաճախակի դարձան հպատակեցված ժողովուրդների, ծայրամասային ցեղերի ապստամբությունները, ուժեղացավ գյուղացիության և քաղաքային չքավորության ազատագրական շարժումը։

XVIII դարի սկզբին սեֆեվյան շահերի իշխանության դեմ ապստամբած ավղանական գիլզայի ցեղը 1709—1714 թ. թ. մի քանի անգամ պարտության մատնեց իրանական զորքերին։ 1722 թվին ավղանցիները պաշարեցին Սպահանը։ Շահ Հոսեյինը հրաժարվեց գահից։ Ավղանացի պարագլուխները (որոնք կրոնով սուններներ էին) սկսեցին ընդունել շիիթական հոգևորականության և իրանական ֆեոդալա-հողատիրական ազնվականության, որոնք Սեֆեվյան դինաստիայի հենարանն էին. իրանական ժողովրդի լայն մասսաները ծանր տանջանքներ էին կրում օտարների լծի տակ։

Իրանի տարբեր շրջաններում ապստամբություններ էին պոռթկում ավղանների դեմ։ Այդ պայքարի ընթացքում առաջ քաշվեց թուրքմենական ավշար ցեղից սերող տաղանդավոր ռազմական առաջնորդ Նադիր Ղուլին։ 1730 թվին Նադիրը մի շարք հաղթանակներ տարավ ավղանցիների դեմ և վռնդեց նրանց երկրից։ Սկզբում Նադիրը պաշտպանում էր Սեֆեվյան արքայորդի Թեհմասպին, բայց հետո՝ 1736 թվին, հափշտակեց թագավորական իշխանությունը Նադիր-շահ անունը վերցնելով։ Նադիրը կարճ ժամանակում վերականգնեց Իրանի ռազմա-քաղաքական նշանակությունը։ Նա հաջող պատերազմներ էր մղում Թյուրքիայի դեմ, նվաճեց Բուխարան, Խիվան, ավարառուական արշավանք կատարեց դեպի Հնդկաստան (1738—1739 թ.թ.)։ Սակայն Նադիրի անվերջ պատերազմներն ու արշավանքները ամբողջապես հյուծեցին Իրանը, իսկ նրա ոչ մարդկային դաժանությունն ընդհանուր ատելություն առաջացրեց դեպի Նադիրը։ Հենց նրա մերձավորները 1747 թ. սպանեցին նրան։ Երկրում անարխիա տիրեց։ Զենդ ցեղի առաջնորդ Քերիմ խանը փորձեց իր իշխանության տակ միավորել ամբողջ Իրանը, բայց կարողացավ հպատակեցնել իրեն երկրի միայն մի մասը։ Ավղանական մարդերն անջատվեցին Իրանից։ Քերիմ-խանի հետնորդների դեմ պայքարի ելան Հյուսիսային Իրանի թյուրքական ցեղերը՝ կաջար ցեղի առաջնորդ Աղա-Մոհամմեդի գլխավորությամբ, որին 1794 թ. հաջողվեց գրավել իշխանությունն Իրանում և նա սկիզբ դրեց Կաջարների դինաստիային։ Թեհրանը դարձավ Իրանի մայրաքաղաքը։

Աղա-Մոհամմեդը փորձեց շարունակել Նադիր-շահի նվաճողական քաղաքականությունը։ 1795 թվին նա ներխուժեց Վրաստան, թալանեց ու ավերեց Թբիլիսի քաղաքը, սրա 16 հազար

բնակիչներին տարավ ստրկության, քարուքանդ արեց Վրաստանի մի շարք շրջանները։ Վրաստանի վրա կատարած երկրորդ արշավանքի ժամանակ Աղա-Մոհամմեդի երկու ծառաները սպանեցին նրան Շուշի քաղաքի մոտ։

Իրանը XIX դարում։ Աղա-Մոհամմեդին ժառանգեց Ֆեթ-Ալի-շահը (1797—1834 թ.թ.)։ Այդ ժամանակաշրջանի համար բնորոշ է եվրոպական պետությունների պայքարը՝ Իրանում տիրապետող ազդեցություն ունենալու համար, ընդ որում, մրցակցությունն սկզբում տեղի էր ունենում առաջին հերթին Անգլիայի և Ֆրանսիայի միջև։ 1800—1801 թ.թ. Նապոլեոնը մշակեց ֆրանսիական բանակի այնպիսի մի արշավանքի պլան, որն ուղղված էր դեպի Հնդկաստան՝ Ռուսաստանի, Կասպից ծովի, Իրանի, Ավղանստանի վրայով։ Անգլիան շտապեց Թեհրան ուղարկել Մալկոլմի գլխավորությամբ մի հատուկ միսսիա, որպեսզի Ֆրանսիայի դեմ պատերազմ ծաղելու դեպքում պայմանագիր կնքեր Իրանի հետ։

Պայմանագիրը կնքվեց 1801 թվին, բայց Անգլիայից իրական օգնություն չստանալով՝ Ռուսաստանի դեմ իր մղած պատերազմում, շահը հիասթափվեց Անգլիայի հետ կնքած դաշինքից։

Անդրկովկասյան երկրների համար, Ռուսաստանի դեմ պայքարելու գործում դաշնակիցներ որոնելով, շահը 1807 թվի մայիսին պայմանագիր կնքեց Նապոլեոնի հետ։ 1807 թվի պայմանագրով Նապոլեոն I հաստատում էր շահի իրավունքները Վրաստանի նկատմամբ և պարտավորվում էր Իրանին զինվորական հրահանգիչներ ու սպառազինություն տրամադրել։ Դրա փոխարեն շահը պարտավորվում էր պատերազմ հայտարարել Անգլիային և թույլ տալ ֆրանսիական բանակին անցնելու իր տերիտորիայով դեպի Հնդկաստան։ Ֆրանս-իրանական պայմանագիրն ուղղված էր միաժամանակ Անգլիայի և Ռուսաստանի դեմ։ Իրանցիները Տիլզիտի պայմանագիրը (1807 թ. հուլիս) գիտում էին որպես Ֆրանսիայի ուղղակի դավաճանություն։ 1808 թ. նոյեմբերին ռուսական զորքերը պարտության մատնեցին թագաժառանգ Աբբաս-Միրզայի զորքերին Նախիջևանի մոտ և գրավեցին այդ քաղաքը։ Ֆրանսիական ռազմական միսսիան, որը գեներալ Գարդանի գլխավորությամբ Իրանում էր գտնվում 1807 թ. դեկտեմբերից, ստիպված էր 1809 թ. փետրվարին հեռանալ Թեհրանից։ Այդ նույն տարում նախնական մի պայմա-

նադիր կնքվեց Անգլիայի հետ, որը մտահոգված էր Հնդկաստանի ցամաքային սահմանների պաշտպանությամբ և ցանկանում էր Իրանին ներառնել իր քաղաքականության շրջագծում։ 1804 թվից մինչև 1813 թ. պատերազմ էր մղվում Ռուսաստանի և Իրանի միջև։ 1814 թ. կնքվեց պաշտպանողական մի նոր պայմանագիր Անգլիայի հետ։ Շահը պարտավորվեց դիմադրություն ցույց տալ ամեն մի եվրոպական բանակի անցնելուն դեպի Հնդկաստան, իսկ Իրանի վրա հարձակում կատարվելու դեպքում՝ Անգլիան պետք է օգներ նրան զորքով, դրամով և զենքով։ Ռուսաստանի դեմ մղած պատերազմում իրանական բանակը 1812 թ. վճռական պարտություն կրեց։ 1813 թ. հոկտեմբերի 24-ին ստորագրվեց խաղաղության Գյուլիստանի պայմանագիրը, որի համաձայն Ռուսաստանին անցան Ղարաբաղի, Գանձակի, Շիրվանի, Դերբենտի, Բաքվի, Թալիշի և Շամախու խանությունները։ Շահը ճանաչեց նաև Ռուսաստանի իրավունքները Վրաստանի, Դաղստանի, Մինգրելիայի, Իմերեթիայի, Աբխազիայի և Գուրիայի վրա, որոնք ռուսական զորքերը նվաճել էին դեռ նրանից առաջ։ Իրանը զրկվեց Կասպից ծովում ռազմանավատորմիդ ունենալու իրավունքից։

Ռուս-իրանական երկրորդ պատերազմը (1826—1828 թ.թ.) ավարտվեց Իրանի լիակատար պարտությամբ և ռուսական զորքերի կողմից Ադրբեջանի գրավումով՝ սրա գլխավոր քաղաք Թավրիզի (Թեբրիզի) հետ միասին։ 1828 թ. փետրվարի 22-ի Թուրքմանչայի պայմանագրով Ռուսաստանին անցավ Հայաստանի նշանակալի մասը (Երևանի և Նախիջևանի խանությունները), ռուսահպատակներն Իրանում սկսեցին օգտվել առանձին իրավունքներից (կապիտուլացիաների ռեժիմ). ապրանքների ներմուծման մաքսատուրքը չպետք է գերազանցեր ապրանքների արժեքի 5%-ին։ Բացի այդ, Իրանը պարտավորվեց վճարել 10 կոռուբ (20 միլիոն ռուբլի)՝ որպես կոնտրիբուցիա։ Այդ գումարի վճարումն ապահովելու համար 1828 թ. աշնանը Իրան ուղարկվեց հատուկ մի միսիա՝ Ա. Ս. Գրիբոեդովի գլխավորությամբ։ 1829 թ. աշնանը Գրիբոեդովն սպանվեց Թեհրանում։ Երրորդ պատերազմից խուսափելու նպատակով, շահը, դրանից հետո, ստիպված էր Պետերբուրգ ուղարկել մի հատուկ դեսպանություն՝ ներողություն խնդրելու և ռուս դեսպանորդի մահվան նյութական փոխհատուցումը տալու համար։

XIX դ. 20-ական թվականների վերջից Իրանի տնտեսական

ու քաղաքական կյանքն ավելի ու ավելի մեծ չափով էր ընկնում Ռուսաստանի և Անգլիայի ազդեցության տակ։ Եթե Ռուսաստանի հեղինակությունն Իրանում մի փոքր խախտվեց Գրիբոեդովի սպանությունից հետո, և, ընդհակառակը, զգալիորեն մեծացավ անգլիական ազդեցությունը, ապա մի քանի տարուց հետո՝ 1834 թվին, երբ Ֆեթհ-Ալի-շահի մահից հետո Իրանում ներքին երկպառակչական կռիվներ բռնկվեցին գահի համար, Ռուսաստանը նորից վերականգնեց իր դիրքերը։ Իրանական նոր շահ Մոհամմեդը (1834—1848 թ. թ.) գահ բարձրացավ շնորհիվ Ռուսաստանի ակտիվ աջակցության։ Մոհամմեդ շահի արշավանքը Հերատի (Ավղանստան) վրա 1837—1838 թվականներին ձեռնարկված էր Ռուսաստանի օգնությամբ, մինչդեռ Հերատի խանին օգնություն էին ցույց տալիս Մեծ Բրիտանիայի գործակալները։

Մոհամմեդ շահի հաջորդ Նասր-էդ-դին-շահի (1848—1896 թ. թ.) օրոք, որը փորձում էր հավասարկշռող քաղաքականություն վարել խոտորելով Ռուսաստանի և Անգլիայի միջև, այս երկու մեծ տերությունների ազդեցությունն իրանական գործերի վրա շատ ավելի մեծացավ։

Օտարերկրյա կապիտալի գերիշխող դերն Իրանում, որը զուգորդվում էր ֆեոդալական-վաշխառուական ստրկացման աճման ու կաջարական արքայորդիների, նահանգապետների, ատիճանավորների չտեսնված գիշակերության ու կամայականության հետ, աղքատության ու քայքայման հասցրեց ոչ միայն գյուղացիներին ու արհեստավորներին, այլև վաճառականության լայն խավերին։ Հուսահատության հասցված ժողովուրդը պայքարի ելավ շահի բռնակալության և եվրոպացիների ուժեղացող ազդեցության դեմ։ Շարժումը կրոնական տեսք ստացավ։ XIX դարի 40-ական թվականներին մուսուլմանական քարոզիչ Ալի-Մոհամմեդը հիմնեց մի աղանդ, որը գլխավորեց ժողովրդական մասսաների կրոնական ու քաղաքական շարժումը։ Ալի-Մոհամմեդն ընդունեց «բաբ», այսինքն՝ «դուռ» կոչումը (արդար մարդկանց դեպի հոգու փրկություն և ասավածային ճշմարտության իմացություն տանող դուռ)։ «Բաբ»-ին հետևողները կոչվում էին «բաբեր» (բաբիդներ)։ Կրոնական միստիկայի տարրերից բացի բաբիզմի ուսմունքն իր մեջ ներառնում էր սոցիալ-քաղաքական մի շարք առաջադիմական պահանջներ (պայքար ատիճանավորների կաշառակերության և կամայականության դեմ, հարկային բեռի թեթևացում, վարձակալական սիստեմի վերացում, դատարանների ռեֆորմ, կանանց իրավահա-

վասարություն) և լայն չափերով տարածվեց քաղաքային աբ-հեստավորների, վաճառականության մանր ու միջին խավերի և գյուղացիության զգալի մասի մեջ։ Մի շարք քաղաքներում (Սպահան, Իեզդ, Զենջան, Բարֆորուշ և այլն) և գյուղական վայրերում ծագեցին ժողովրդական ապստամբություններ, որոնց ղեկավարում էին բաբիդները։ XIX դ. 50-ական թվականներին շահական կառավարությունն անգութ դաժանությամբ ճնշեց բաբիդների շարժումը։ Իրանում տիրեց բռնակալության և ռեակցիայի ռեժիմը։

XIX դարի 70-ական թվականներից Անգլիան և Ռուսաստանը նոր ձևերով էին իրականացնում իրենց ազդեցությունն Իրանում։ Դեռևս 1862—1870 թ. թ. Անգլիան շահական կառավարության հետ կնքել էր հեռագրագծերի կառուցման կոնվենցիա. այդ հեռագրագծերի մեջ ամենակարևոր նշանակություն ունեցողը Հնդկա-եվրոպական հեռագրի գիծն էր, որն անցնում էր ամբողջ Իրանով և այնուհետև, ստորջրյա կաբելի միջոցով՝ Պարսից ծոցով։ Հյուսիսային Իրանի հեռագրական կոնցեսիաները գտնվում էին ցարական Ռուսաստանի ձեռքում. դրանցից ամենից ավելի կարևորը Մեշխեդ-Աշխաբադ գիծն էր։ Հեռագիր ունենալը ոչ միայն դրա տերերի համար հեշտացնում էր երկրի առևտրական կյանքը կանոնավորելը, այլև ուժեղացնում էր նրանց քաղաքական ազդեցությունը։ Հյուսիսային Իրանում եղած հաղորդակցության ճանապարհները (խճուղային և ջրային) նույնպես առավելապես գտնվում էին Ռուսաստանի ձեռքում, իսկ հարավ-իրանական պրովինցիաներում եղածը՝ Անգլիայի ձեռքում։ 1890 թ. Իրանը Ռուսաստանի առաջ պարտավորություն ստանձնեց 10 տարվա ընթացքում ոչ մի ճանապարհ չկառուցել։ Այդ պարտավորությունը վերանորոգվեց 1900 թվին։ Մինչդեռ Ռուսաստանը (ինչպես և Անգլիան) ստացավ խճուղիների շինարարության կոնցեսիա, ձկնորսարանների, իսկ հետագայում էլ դրամահատման և այլ կոնցեսիաներ։ 1889 թ. անգլիացի կապիտալիստ Ռեյտերն ստացավ կոնցեսիա հիմնելու այսպես կոչված «Պարսկաստանի կայսերական բանկը» (Շահնշահական բանկ)։ Այդ բանկը ստացավ բանկնոտների էմիսիայի իրավունք, դրամահատման համար արծաթ մատակարարելու մենաշնորհ, ինչպես նաև իրավունք ստացավ շահագործելու երկաթի, պղնձի, արճճի, քարածուխի հանքերը, նավթի, սնդիկի, մարգանեցի, ասբեստի, բորակի հանքավայրերը։ 1890 թվից նշանակալիորեն ուժեղացավ Ռուսաստանի նաև ֆինանսական-տնտեսական էքսպանսիան Իրանում։ Ցարական կառավարությունն ստացավ կոնցեսիա հիմնելու ռուս-պարսկական մի հաշվեառ-փոխատու բանկ, որը ֆինանսավորում էր Ռուսաստանի առևտուրն Իրանի հետ և իրացնում էր այն փոխառությունները, որոնք Ռուսաստանը տրամադրում էր իրանական շահին։

Իրանը XX դարի սկզբին։ 1894 թվից սկսած Իրանի բյուջեն փակվում էր դեֆիցիտով։ 1900 թվին Ռուսաստանն իրանական կառավարությանը տրամադրեց 22,5 միլիոն ռուբլու փոխառություն, 1902 թվին՝ 10 միլիոն ռուբլու փոխառություն։ 1905 թվին շահը դիմեց Ռուսաստանին ստանալու երրորդ փոխառությունը։ Փոխառություններն ապահովելու համար 1903 թ. կնքվեց մաքսային մի համաձայնագիր։ Այդ համաձայնագիրն առանձնահատուկ արտոնություններ էր վերապահում ռուսական ապրանքներին։ Անդրկովկասյան և անդրկասպյան երկաթուղիներով դեպի Իրան էր ուղղվում էժան ապրանքների հոսանքը։ Իրանի արտաքին առևտրում Ռուսաստանը գրավում էր առաջին տեղը։ Ռուսական էքսպորտը դեպի Իրան կազմում էր (ռուբլիներով)—1886 թվին՝ 6.100 հազ., 1896 թվին՝ 14.500 հազ., 1907 թվին՝ 28.300 հազ.։ Ռուսական իմպորտն Իրանից այդ նույն տարիներին համապատասխանորեն կազմում էր՝ 10.300 հազ., 17.700 հազ. և 20.300 հազ.։ Ամբողջ Հյուսիսային Իրանն ընկավ Ռուսաստանի քաղաքական-տնտեսական ուժեղ ազդեցության տակ։ Աճում էր Իրանի ֆինանսական կախվածությունն Ռուսաստանից և Անգլիայից, որը և որոշում էր նրա ինչպես ներքին զարգացումը, այնպես էլ նրա կլոխումը այդ տերություններից։ 1901 թվից Անգլիան տիրապետում էր նավթի հանքավայրերի շահագործման կոնցեսիաներին Իրանի տերիտորիայի 4/5-ի վրա (բացառությամբ հյուսիսային 5 պրովինցիաների)։

Դեպի ապրանք-դրամային տնտեսությունը կատարած անցումը շատ ցավագին էր ընթանում։ Սննդամթերքների գներն արագ աճում էին։ Արհեստները նվազում էին։ Իրանի ֆեոդալական-ընամթերային տնտեսության արտաքին շուկայի պահանջներին հարմարվելու ճանապարհին դիմելու հետևանքով կոմպրադորական (միջնորդ) առևտրական բուրժուազիան աճեց, և դարձավ նշանակալի ազդեցիկ ուժ, որն առաջ քաշեց չափավոր-լիբերալ քաղաքական պահանջներ։

Ժողովրդական մասսաները տառապում էին և սնանկանում

հարկերի, մաքսատուրքերի ու ֆեոդալական շահագործման տարբեր ձևերի հետևանքով։ Կալվածատերերը կատաղի պայքար էին մղում գյուղացիական ինքնուրույն հողատիրության դեմ։ Իրանական ֆեոդալները յուրացնում էին գյուղացիների ստացած բերքի 4/5-ը. պետությունը և աստիճանավորները լրացուցիչ կերպով գյուղացիության վրա դնում էին հարկեր ու ամեն տեսակի կողմնակի տուրքեր։ Բանվորները (ճիշտ է, դեռևս շատ փոքրաթիվ՝ երկրում խոշոր ձեռնարկությունների բացակայության պատճառով) գտնվում էին շահական բռնակալության դեմ, օտարերկրյա կապիտալի ճնշման դեմ պայքարող մարտիկների առաջին շարքերում. նրանց էին հարում նաև արհեստավորները։

Չնայած դաժան ռեպրեսիաներին, շարունակվում էր ժողովրդական մասսաների պայքարը շահական բռնակալության դեմ։ Իրանի տարբեր պրովինցիաներում շարունակ բռնկվում էին գյուղացիների և քաղաքի բնակիչների ապստամբություններ։ Ուժեղացավ դավադրական ընկերությունների և խմբերի ընդհատակյա գործունեությունը։ Ժողովրդին ատելի բռնապետ Նասր-էդ-Դինի կյանքի դեմ մի քանի մահափորձեր կատարվեցին։

1896 թվին տեռորիստ Ռիզա-Քերմանին սպանեց Նասր-էդ-Դինին։ Շահական բռնակալության դեմ մղած պայքարը միահյուսվում էր այն պայքարին, որը մղվում էր ընդդեմ օտարերկրյա ներխուժանության դեմ, որոնց մրցակցությունը (հատկապես Անգլիայի ու Ռուսաստանի միջև) ավելի ու ավելի էր աճում Իրանում։ Օտարերկրացիների այդ ճնշումն այն գործոններից մեկն էր, որոնք առաջացրին իրանական ռևոլուցիան։

Սակայն, Նասր-էդ-Դինի մահը երկրում դրությունը չփոխեց։ Նոր շահ Մոզաֆֆեր-էդ-դինը (1896—1906 թ.թ.) շարունակում էր իր նախորդի ռեակցիոն քաղաքականությունը. Իրանում ուժեղանում էր օպոզիցիոն-լիբերալ շարժումը։ Արդեն XX դարի սկզբին գոյություն ուներ իրանական առաջավոր եվրոպականացած ինտելիգենցիայի մի միջուկ, որը գլխավորեց այդ շարժումը։ Ծնվում էր լիբերալ և հայրենասիրական իդեաներով համակված իրանական նոր գրականությունը։ Իրանական բուրժուազիայի և նույնիսկ հոգևորականության զգալի մասն անցնում էր լիբերալ լագերը։

1906—1911 թ. թ. ռևոլուցիան։ Իրանում ռևոլուցիայի ուժերի զարթոնքի վրա մեծ ազդեցություն թողեցին Ռուսաստանի ռևոլուցիոն դեպքերը և հատկապես Անդրկովկասի ռևոլուցիայի շարժումը։

1905 թ. վերջում և 1906 թ. սկզբին Իրանում սկսվեց ռևոլուցիա։ Թեհրանում և մի շարք այլ քաղաքներում տեղի էին ունենում փողոցային բազմամարդ ցույցեր և քաղաքական յուրօրինակ գործադուլներ։ Վաճառականները փակում էին շուկաները ու խանութները, հոգևորականները՝ մեչեդները, նրանց միջից շատ տարբեր, որոնք օպոզիցիոն տրամադրություններ ունեին, հենվելով քաղաքային աշխատավորական մասսաների աջակցության վրա, նստեցին «բեստ» (անձեռնմխելի պատսպարան), որը «պասսիվ դիմադրության» արտահայտիչն էր, քաղաքական գործադուլի նման մի ինչ որ բան Իրանում։

1906 թ. ամռանը շարժումը խոշոր չափեր ընդունեց։ Անգլիական դեսպանության շենքում մասսայական «բեստ»-ից հետո, որտեղ մոտ 20 հազ. մարդ էր հավաքվել, ինչպես և համարյա ամբողջ բարձր հոգևորականության դեմոնստրատիվ կերպով Թեհրանից «սրբազան» Կում քաղաքը մեկնելուց հետո, շահը հարկադրված էր մանիֆեստ հրապարակել պառլամենտի (մեջլիսի) հրավիրման մասին։ 1906 թ. սեպտեմբերին կայացավ մեջլիսի բացումը, իսկ դեկտեմբերին՝ Մոզաֆֆեր-էդ-դինի մահվանից մի քանի օր առաջ, մեջլիսը հաստատեց իրանական առաջին կոնստիտուցիան։

1907 թ. օգոստոսի 31-ին՝ կոնստիտուցիոն շարժման երկրորդ տարում, կնքվեց անգլո-ռուսական մի համաձայնագիր՝ Ասիայում ազդեցության սֆերաների սահմանազատման մասին։ Ըստ այդ համաձայնագրի Իրանը բաժանվում էր 3 մասի—Հյուսիսային Իրանը (ամենից ավելի բնակեցված ու հարուստ մասը) մնում էր ռուսական ազդեցության սֆերայում. Կենտրոնականը չեզոք հայտարարվեց. Հարավային Իրանը, որը հարուստ էր նավթով և պաշտպանում էր Հնդկաստանի ու Պարսից ծոցի մատույցները, ճանաչվում էր որպես Անգլիայի ազդեցության սֆերա։ Կնքելով այդ համաձայնագիրը, Անգլիան ձգտում էր վերջ տալ ամբողջ Արևելքում Ռուսաստանի հետ ունեցած իր հին դժտություններին և ներգրավել նրան Գերմանիայի շրջապատման քաղաքականության մեջ։ Իսկ Ռուսաստանն էլ կողմնակից եղավ այդ համաձայնագրին ճապոնական պատերազմում պարտություն կրելուց հետո։ Չեզոք զոտին տեսականորեն բաց էր մնում Գերմանիայի համար և Ռուսաստանը 1911 թ. նույնիսկ թույլ տը-

վեց Գերմանիային այդ գոտում հյուղավորություն անցկացնել Բաղդադի երկաթուղուց։

Կոնստիտուցիան համարյա թե անմիջապես սկսեց խախտվել կառավարության և նրա աստիճանավորների կողմից, իսկ ռևոլուցիոն շարժումը շարունակում էր աճել։ Դրա մի նոր գործոնն Իրանի վերաբերմամբ կնքված անգլո-ռուսական համաձայնագիրն էր։ 1907—1908 թ.թ. ամբողջ երկրում առաջացան ռևոլուցիոն ընտրովի կոմիտեներ՝ «էնջոմեններ», որտեղ ներկայացված էին բնակչության ռադիկալ-դեմոկրատական խավերը։ Իրանական Ադրբեջանի մի շարք շրջաններում, Գիլյանում, Խորասանում և նույնիսկ տեղ-տեղ էլ հարավային պրովինցիաներում տեղի էին ունենում գյուղացիության տարերային ելույթներ։ Մոզաֆֆեր-էդ-դինի հաջորդ, ծայրաստիճան ռեակցիոներ Մոհամմեդ-Ալին, որը հենվում էր ցարական Ռուսաստանի վրա, որտեղ այն ժամանակ կոնտրռևոլուցիան էր մոլեգնում, որոշեց, ինչ էլ որ լինի, ճնշել ռևոլուցիոն շարժումը։

1908 թ. հունիսին ռազմական ուժի միջոցով ցրվեց մեջլիսը։ Թեհրանում տիրեց ամենակատաղի մի ռեակցիա։ Սակայն ռևոլուցիոն շարժումը պարտված չէր։ Նրա գլխավոր կենտրոնը դարձավ հերոսական Թավրիզը, որը սերտ կապված էր ռուսական ռևոլուցիոն Անդրկովկասի հետ։ Թավրիզի պաշտպանությունը ղեկավարում էր մարդային էնջոմենը։

Ռևոլուցիոներների ղեկավարած ջոկատները, որոնց ղեկավարում էին աչքի ընկնող երկու ժողովրդական հերոսներ՝ Սաթթար-խանը և Բաղեր-խանը, տակունաբար պաշտպանում էին Թավրիզը Արդեբիլի կողմից հարձակվող շահական զորքերից։ Բայց ցարական կառավարությունն իր զորքերն իրանական Ադրբեջան ուղարկեց իրանական ռևոլուցիան ճնշելու համար և այդ քանը Թավրիզի ռևոլուցիոներների համար կրիտիկական դրություն ստեղծեց։ Ցարական զորքերը գրավեցին քաղաքը։

Ոտնահարված կոնստիտուցիան վերականգնելու նպատակով Մոհամմեդ-Ալի-շահի կոնտրռևոլուցիոն կլիկի դեմ մղված պայքարը 1909 թ. դարնանը բռնկվեց նոր թափով։ Դիլյանից մայրաքաղաքի վրա հարձակում սկսեցին ռևոլուցիոն կամավորների՝ «ֆիդայիների» ջոկատները։ Բախտիարական ցեղերն արշավանքի ելան Սպահանի կողմից։ 1909 թ. հուլիսի 13-ին Թեհրանը գրավվեց։ Մոհամմեդ-Ալի-շահն ստիպված էր հրաժարվել գահից և հեռանալ Իրանից։

Շահի գահն անցավ նրա 10-ամյա որդի Ահմեդին, որին հարակից հաստատվեց ռեգենտություն։ 1906 թ. կոնստիտուցիան վերականգնվեց և գումարվեց 2-րդ մեջլիսը։ Իրանական նոր կառավարությունը կազմված էր չափավոր-լիբերալ գործիչներից, որոնք ներկայացնում էին առևտրական խոշոր բուրժուազիայի և կալվածատերերի շահերը։

1911 թվին ցարական կառավարությունն իր զորքերը մտցրեց Իրանի հյուսիսային պրովինցիաները։ Մեջլիսը նորից ցրվեց։ Չափավոր լիբերալների փոխարեն իշխանության գլուխն անցան թունդ ռեակցիոներները։ Սկսվեցին դաժան ռեպրեսիաները։ Իրանական ռևոլուցիան ճնշվեց։

XX դ. սկզբին Իրանը դարձավ Ռուսաստանի և Անգլիայի կիսագաղութը։ 1909 թ. հանդես եկավ «Անգլո-պարսկական նավթային կոմպանիան» (Anglo-Persian Oil Co), որն Իրանում դարձավ կարծես թե մի պետություն պետության մեջ։ Ռուսաստանն ևս ուներ մի ամբողջ շարք խոշոր և կարևոր ձեռնարկություններ (Զուլֆա-Թավրիզ երկաթուղագիծը, քարածխային և նավթային կոնցեսիաները Թավրիզի և Ղազվինի միջև, նավագնացությունն Ուրմիա լճում)։ Ռուսական առևտուրը շարունակում էր զարգանալ։

Իրանը համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին և պատերազմի ժամանակաշրջանում։ Համաշխարհային առաջին պատերազմին նախորդող ժամանակաշրջանում գերմանական իմպերիալիստները միջոցներ էին ձեռք առնում, որպեսզի որոշակի դիրքեր նվաճեն իրենց համար Իրանում և դիմադրեն Ռուսաստանի ու Անգլիայի ազդեցությանը Մերձավոր և Միջին Արևելքում։ Իմպերիալիստական Գերմանիան այդ տարիներին կառուցում էր Բաղդադյան երկաթուղագիծը, վերակազմակերպեց և փաստորեն իրեն ենթարկեց սուլթանական Թյուրքիայի բանակը, ձգտում էր ճանապարհ հարթել դեպի Հնդկաստան՝ Պարսից ծոցի և Մեսոպոտամիայի վրայով։ Գերմանացիները, խուսափելով արանզիտային կանոնները կատարելուց, զարգացրեցին դեղագործական և ներկային արտադրանքների փոստա-ծանրոցային մեծ ներմուծում, սկսեցին բացել զորգագործական գործարաններ (անիլինի ներկերի օգտագործման հիման վրա), կառուցել դպրոցներ ու հիվանդանոցներ և ամեն կերպ աշխատում էին, որ չեզոք գոտում ազդեցության սֆերա տրամադրվի իրենց։ Իրանական ազատության և անկախության նկատմամբ համակրանքի

դիմակի տակ և օգտագործելով Ռուսաստանի ու Անգլիայի նկատմամբ եղած թշնամական տրամադրությունները, Գերմանիան իր բազմաթիվ գործակալների միջոցով աշխատում էր գրավել լիբերալ տարրերի համակրանքը, միաժամանակ և կաշառում էր ասիճանավորներին, մեծ վարկեր էր բաց թողնում վաճառականներին, ուսանող երիտասարդությանը գրավում էր իր գպրոցները, գերմանական համալսարաններն ու տեխնիկումները և այլն։ Գերմանացիներն Իրանում ունեին ճյուղավորված գաղտնի գործակալություն։

Իրանը չէր մասնակցում համաշխարհային առաջին պատերազմին, սակայն նրա տերիտորիան դարձավ ռազմական գործողությունների և քաղաքական պայքարի մի թատերաբեմ՝ երկու կոալիցիաների ուժերի միջև։ Մեջլիսի դեպուտատների մի մասը, որը կողմնակից էր Գերմանիային, մեկնեց Կում քաղաքը և այնտեղ կազմակերպեց այսպես կոչված Կումի կոմիտեն։ Այդ «կառավարությունն» այնուհետև տեղափոխվեց Քերմանշահ, որը գրավել էին գերմանո-թյուրքական զորքերը։ Իրենց գործակալների օգնությամբ, պրովոկացիաների ու հրահրումների միջոցով, գերմանական իմպերիալիստները կազմակերպեցին մասնավորապես առանձին գժգոհ ցեղերի ելույթներն Անտանտի երկրների դեմ, գլխավորապես՝ անգլիացիների դեմ։ Այդպիսի պայմաններում ռուսական և անգլիական զորքերը պետք է որ զինված պայքար մղեին գերմանո-թյուրքական ուժերի դեմ Իրանական Ադրբեջանում, Խուզիստանում, Ֆարսիստանում, Քերմանշահի և Համադանի շրջաններում։ Թյուրքական զորքերը 1915 թ. գրավեցին Թյուրքիային սահմանամերձ իրանական մի շարք շրջաններ, սակայն ուժերի ընդհանուր փոխհարաբերությունն այդ ռազմաճակատում արդեն հօգուտ ռուսներին էր և անգլիացիներին։ 1918 թ. աշնանը իրանական տերիտորիան համարյա ամբողջապես մաքրվեց գերմանացիներից և թյուրքերից։

Իրանը համաշխարհային առաջին պատերազմից հետո (1919—1939 թ.թ.)։ Իրանի և իրանական ժողովրդի հետ ունեցած իրենց հարաբերությունների հիմքում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի հետևանքով առաջացած սովետական ռեսպուբլիկաները դրեցին նոր սկզբունքներ։ Իրանի վերաբերմամբ անիրավահավասար բնույթ կրող դիվանագիտական բոլոր ակտերը, Իրանում ցարական կառավարության և ռուս կապիտալիստների ստացած բոլոր արտոնություններն ու կոնցեսիաները չեղյալ համարվեցին, և ռուսական զորքերը հետ կանչվեցին Իրանից։

Ինտերվենցիայի և ներքին կոնտրռևոլուցիայի դեմ Սովետական ռեսպուբլիկայի մղած պայքարի ժամանակաշրջանում դժվար էր նորմալ հարաբերություններ հաստատել ՌՍՖՍՌ և Իրանի միջև։ Ռուսաստանի հետ ունեցած քաղաքական և տնտեսական կապերի ընդհատման հետևանքով Իրանը 1918—1920 թ.թ. շատ ծանր դրության մեջ ընկավ. այդ ժամանակվա իրավիճակի համար բնորոշ էր այն, որ առևտուրը կանգ առավ, ապրանքներ արտադրողներն ու վաճառականները քայքայվեցին, գները բարձրացան, վալյուտային արժեքները մեծ չափով տեղափոխվեցին արտասահման։ Այդ նույն պատճառով էլ երկրում խիստ աճեց անգլիական ազդեցությունը։ 1919 թ. ստորագրվեց անգլո-իրանական մի պայմանագիր, որի պայմաններից մեկի համաձայն պետք է Իրան ուղարկվեր անգլիական մի ֆինանսական խորհրդական և ռազմական միսսիա, պետք է անգլիացի հրահանգիչներ հրավիրվեին իրանական բանակը։ Այդ փաստաթղթերն անգլիական պրոտեկտորատի հաստատում էր նշանակում։

Բաքվում սովետական իշխանության վերականգնումից (28/IV 1920 թ.) և Ադրբեջանական սովետական ռեսպուբլիկայի ստեղծումից հետո սպիտակ-գվարդիական զորամասերը՝ իրենց հետ վերցնելով ռազմական հանդերձանքի զգալի պաշարներ, պատսպարվեցին իրանական Էնզելի (ներկայումս՝ Փահլեվի) նավահանգստում, որի կապակցությամբ և սովետական զորքերը հարկադրված էին 1920 թ. մայիսի 18-ին ժամանակավորապես գրավել Էնզելին (այդ գործողությունն ապահովեց Կասպիական նավատորմիղը)։

Գիլյան պրովինցիայում ուժեղացավ ռևոլուցիոն և պարտիզանական (ջենգելիական) շարժումը։ 1920 թ. հունիսի 4-ին Ռեշտ քաղաքում կազմակերպվեց հյուսիս-իրանական ռևոլուցիոն կառավարությունը (Գիլյանի ռեսպուբլիկայի կառավարություն)՝ Գիլյանի պարտիզանների՝ «անտառային եղբայրների» (ջենգելիականների) առաջնորդ Քուչուկ-խանի գլխավորությամբ։

Նույն այդ ժամանակամիջոցում Հայդար-խանի ղեկավարությամբ կազմակերպվեց իրանական կոմունիստական պարտիան (Էդալեթ), որը մի ժամանակ մտնում էր Գիլյանի կառավարության կազմի մեջ։ Քուչուկ-խանը, դավաճանելով դեմոկրատական շարժմանը, 1921 թ. սեպտեմբերի վերջին կոնտրռևոլուցիոն մի հեղաշրջում կատարեց. շատ ակտիվ կոմունիստներ,

այդ թվում նաև Հայդար-խանը, սպանվեցին։ Շուտով շահի զորքերը գրավեցին Գիլյանը։

Էնզելի նավահանգիստը և Կասպից ծովի հարավային ափերը մաքրելով սպիտակ-գվարդիական տարրերից, սովետական կառավարությունը հիմա արդեն կարող էր նորմալ հարաբերություններ հաստատել Իրանի հետ, ինչպես այդ պահանջում էին Իրանի առաջադիմական ազգային ողջ ուժերը, այդ թվում նաև վաճառականությունը, որն զգում էր ռուսական շուկայի և ռուսական ապրանքների կարիքը։ Ժողովրդական մասսաների ճնշման տակ կառավարությունն ինքը որոշեց բանակցությունների մեջ մտնել սովետական կառավարության հետ և պատգամավորություն ուղարկեց Մոսկվա։

Պետական այն հեղաշրջման հետևանքով, որը կատարեցին սպա Ռիզա-խանի հրամանատարության տակ գործող զորամասերը (այդ զորամասերը գործիք էին Սովետական Ռուսաստանին թշնամի իրանական և օտարերկրյա խմբավորումների ձեռքին), իշխանության գլուխն անցավ Սեյիդ Զիյա-էդ-դինի կառավարությունը, որի մեջ մտավ նաև Ռիզա-խանը որպես ռազմական մինիստր։ Սակայն ընդհանուր տրամադրությունն երկրում այնպիսին էր, որ այդ նոր կառավարությունը ևս ստիպված էր Ռուսաստանի հետ տարվող բանակցությունները հասցնել մինչև վերջը։

1921 թ. փետրվարի 26-ին Մոսկվայում կնքվեց սովետա-իրանական մի պայմանագիր, որն իրենով նոր էտապ բացեց այդ երկու երկրների փոխհարաբերությունների պատմության մեջ։ Պայմանագիրը հաստատեց Սովետական Ռուսաստանի հրաժարումը ցարական կառավարության նախկին քաղաքականությունից և ամեն տեսակի ուժը կորցրած հայտարարեց Իրանի հետ ցարական Ռուսաստանի կնքած բոլոր տրակտատները, պայմանագրերը, կոնվենցիաներն ու համաձայնագրերը, որովհետև այդ ակտերը նվազեցնում էին Իրանի անկախությունն ու սուվերենիտետը։ Սովետական կառավարությունը հայտարարեց, որ ինքը հրաժարվում է մասնակցելուց ամեն տեսակի ու բնույթի ձեռնարկումներին, որոնց նպատակը կլինի թուլացնել կամ խախտել Իրանի տերիտորյալ ամբողջականությունը և անձեռնմխելիությունը։ Նա ամբողջապես ուժը կորցրած հայտարարեց նաև այն բոլոր կոնվենցիաներն ու համաձայնագրերը, որոնք կնքել էր Ռուսաստանի նախկին կառավարությունը մի երրորդ տերության հետ ի վնաս Իրանի։ Սովետական կառավարությունն ասաց մի որևէ վարձատրության իրանական ժողովրդի լիակատար տիրապետությանը հանձնեց Իրանի Հաշվեառ-փոխատու բանկի դրամական ամբողջ գումարը, արժեքները, բանկի ամբողջ ակտիվ ու պասսիվը՝ Իրանի տերիտորիայում ունեցած նրա շարժական ու անշարժ գույքի հետ միասին, խճուղիները, նավամատույցները, շոգենավերը, բարժանները, հեռախոսային ու հեռագրական գծերը, Էնզելի նավահանգիստը և այլն։ Հաստատվեց Իրանի իրավունքն ունենալու իր նավատորմիղը Կասպից ծովում։ Վերջապես, վերացվեց Իրանի այն պարտքը Ռուսաստանին, որն առաջացել էր ցարական կառավարության տրամադրած ստրկացուցիչ փոխառություններով։ Պայմանագրի 6-րդ հոդվածում ասում էր՝ «Պայմանավորվող երկու բարձր կողմերն էլ համաձայն են, որ այն դեպքում, եթե երրորդ երկրների կողմից փորձեր կատարվեն զինված միջամտության միջոցով Պարսկաստանի տերիտորիայում իրականացնել գավթողական քաղաքականություն կամ թե Պարսկաստանի տերիտորիան բաղդարձնել Ռուսաստանի դեմ ռազմական ելույթների համար, ըստ որում, եթե վտանգ սպառնա ՌՍՖՍՌ կամ նրա հետ դաշնակից տերությունների սահմաններին, և եթե պարսկական կառավարությունը Ռուսաստանի Սովետական կառավարության կողմից նախազգուշացվելուց հետո ինքն ի վիճակի չգտնվի կանխելու այդ վտանգը, Ռուսաստանի Սովետական կառավարությունն իրավունք կունենա իր զորքերը մտցնելու Պարսկաստանի տերիտորիան, որպեսզի ինքնապաշտպանության շահերից ելնելով ձեռք առնի անհրաժեշտ ռազմական միջոցներ։ Տվյալ վտանգը վերացվելուց հետո Սովետական կառավարությունը պարտավորվում է իր զորքերն անհապաղ դուրս բերել Պարսկաստանի սահմաններից»։

Նույն թվին Իրանի նոր պրեմյեր-մինիստր Կավվամ-ուս-Սալթանեն գումարեց 4-րդ մեջլիսը։ Մեջլիսի ներսում կազմավորվեց այսպես կոչված մի «առաջադիմական բլոկ», որն սկսեց ղեկավարել երկրի քաղաքական կյանքը։ 1919 թ. անգլո-պարսկական պայմանագիրը համարվեց չեղյալ։ Նույն այդ ժամանակաշրջանում ռազմական մինիստր Ռիզա-խանը շարունակում էր անողոք պայքարը ռևոլյուցիոն շարժման դեմ Իրանում։ Բայց միևնույն ժամանակ ևս ձգտելով ստանալ իրանական բուրժուա-էլվածատիրական լիբերալ շրջանների աջակցությունը և

ժողովրդի համակրանքը, Ռիզա-խանը սկսեց իրականացնել որոշ առաջադիմական ձեռնարկումներ։ Նա ձեռնամուխ եղավ իրանական բանակի վերակառուցմանը, պայքար մղեց ֆեոդալական խանների և ծայրամասային ցեղերի շեյխերի սեպարատիստական ռեակցիոն ձգտումների դեմ, օժանդակեց մի շարք վարչական ռեֆորմների անցկացմանը։ Նա դարձավ գերագույն գլխավոր հրամանատար և պրեմյեր-մինիստր։ 1925 թ. փետրվարին Ռիզա-խանը մեջլիսի միջոցով ձևակերպեց Կաջարների դինաստիայի տապալումը, մեջլիսի կողմից նշանակվեց ռեսպուբլիկայի պրեզիդենտ, բայց արդեն նոյեմբերին դրավեց գահը՝ Ռիզա-շահ Փեհլևի անունով։

Շահի հաստատած ռեժիմը ռազմական բռնապետության բնույթ էր կրում։ Լայն դեմոկրատական շարժումից վախենալը, երկյուղը ռևոլուցիայի առաջ և բռնապետական անսահմանափակ իշխանության ու անձնական հարստացման ձգտումը ստիպում էին Ռիզա-շահին վարելու ցայտուն արտահայտված ռեակցիոն, հակաժողովրդական քաղաքականություն։ Ինչպես արհեստակցական և հասարակական մյուս կազմակերպությունները, այնպես էլ քաղաքական պարտիաներն Իրանում դադարեցին գոյություն ունենալուց։ Տեռորի և բռնագրավումների միջոցով Ռիզա-շահը հակայական հողային կալվածքներ դրավեց դարձնելով դրանք իր անձնական սեփականությունը և դարձավ ամենախոշոր կալվածատերը երկրում։

Այնուամենայնիվ, գիտակցելով երկրի այդ անտեսական ու քաղաքական հետամնացության ամբողջ նշանակությունը, որը թուլության էր դատապարտում երկիրը և իր սեփական իշխանությանն ուրիշ պետությունների առաջ, Ռիզա-շահը խնդիր դրեց իր առաջ՝ վերջ տալ Իրանի պետական կյանքում եղած ֆեոդալական մնացորդներին, ստեղծել ուժեղ կենտրոնական իշխանություն և զարգացնել կապիտալիստական հարաբերությունները։ Նա զինաթափ էր անում տեղական ֆեոդալ-խաներին, զինված ուժի օգնությամբ ոչնչացնում էր քոչվորական ցեղերի անկախությունը՝ դարձնելով քոչվորներին նստակյաց (ընդ որում կառավարությունը նրանց նյութական օգնություն ցույց չէր տալիս, մատնելով նրանց սովի և աղքատության)։

Ազգային արդյունաբերության և առևտրի զարգացման նպատակով Ռիզա-շահը անցկացրեց մի շարք ձեռնարկումներ՝ մտցվեցին ավտոնոմ մաքսադրույք, «արտաքին առևտրի մենաշնորհ», թեյի և և շաքարի մենաշնորհներ, ներմուծվող ապրանքների նկատմամբ սահմանվեցին հովանավորողական բարձր մաքսատուրքեր։ Մեծ նշանակություն ուներ հաղորդակցության նոր ճանապարհների, առանձնապես Տրանս-իրանական երկաթուղագծի կառուցումը։ Այդ բոլոր ձեռնարկումները հանգեցրին ազգային արտադրության և արդյունաբերության աճմանը։ 1938 թվին երկրում արդեն հաշվվում էր 280 ֆաբրիկա-գործարանային ձեռնարկություն, մինչդեռ դրանց թիվը 1928 թվին միայն 3 էր։

Այդ ձեռնարկումները ֆինանսավորելու նպատակով Ռիզա-շահի կառավարությունը հարկադրեց անգլիական նավթային կոմպանիային՝ ի հատուցում հավաքված ապառքների, մի խոշոր գումար մուծելու, զգալիորեն բարձրացրեց վարձակալման տարեկան վճարը և գանձարանի օգտին եկամուտներից կատարվող հատկացումները, ինչպես և անցկացրեց պետական գանձարանը շահական գանձարանից անջատող ֆինանսական մի ռեֆորմ։ Այդ ռեֆորմը, որը պահպանում էր ֆեոդալական բազմաթիվ բարձր տուրքերը և որը պետության օգտին սահմանում էր բարձր հարկադրում, չափազանց ծանր տնտեսական վիճակի մեջ դրեց բնակչության հիմնական մասսաներին։

Նոր ռեժիմը նշանակալի ակտիվություն ցուցաբերեց կուլտուրական շինարարության բնագավառում։ Պետական տարբրական դպրոցներում մտցվեց պարտադիր ձրի ուսուցում, հիմնվեցին միջնակարգ և բարձրագույն դպրոցներ, այդ թվում մեկ համալսարան, ուշադրություն դարձվեց պրոֆեսիոնալ կրթության վրա։ Այդ բոլորը գտնվում են դեռևս զարգացման սկզբնական ստադիայում։ Նույն դրության մեջ է նաև կնոջ ազատագրման (պայքարը չադրայի դեմ, կանանց դպրոց մուտք գործելը և այլն) պրոցեսը։

Այդ ժամանակաշրջանում գյուղատնտեսության բնագավառում գտնվում էր անկում և լճացում։ Գյուղում պահպանվում էին կիսաֆեոդալական հարաբերությունները։ Ռիզա-շահի կառավարությունը գյուղացիների համար մտցրեց ռազմա-ստրատեգիական ճանապարհներ անցկացնելու և աշխատանքային այլ նոր պարհակներ։ Կիսաֆեոդալական ռեժիմի լծի տակ հեծող գյուղացիությունը հաճախ ապստամբություններ էր բարձրացնում (1926 թ. Գիլյանում, 1928 թ. Բելուջիստանում, 1929 թ. Խորասանում և այլն)։

Երկրի արդյունաբերական զարգացման հետ կապված էր

բանվոր դասակարգի աճը։ Զգալիորեն ավելացավ բանվորների թիվը Թեհրանում, Սպահանում, Թավրիզում, Մեշխեդում և այլ քաղաքներում։ Ավտոմոբիլային տրանսպորտի զարգացումը, երկաթուղագծի, խճուղիների, նավահանգիստների շինարարությունն ուղեկցվում էին տրանսպորտում բանվորների թվի աճմանը։ Բանվորների վիճակը շատ ծանր էր, աշխատավարձը՝ չափազանց ցածր, աշխատանքային օրը փաստապես չէր ռեգլամենտավորվում։ Ծանր՝ ուղղակի և անուղղակի հարկերը հանգեցնում էին ինչպես արհեստավորների և գյուղացիների, այնպես էլ բանվորների է՛լ ավելի աղքատացմանը։ Ռիզա-շահը դիմադրում էր բանվոր դասակարգի քաղաքական և արհեստակցական կազմակերպությունների առաջացմանը և երկրում չկար բանվորական ոչ լեգալ կազմակերպություն։ Չնայած ռասիկանական դաժան ռեժիմին, առանձին ձեռնարկություններում բռնկվում էին գործադուլներ։

Արտաքին քաղաքականության բնագավառում Ռիզա-շահի կառավարությունն իր գործունեության առաջին շրջանում բարիդրացիական հարաբերություններ էր պահպանում Սովետական Միության հետ, որը միշտ էլ Իրանին աջակցություն էր ցույց տալիս Իրանական պետության անկախության ամրապնդման ուղղությամբ, նրա տնտեսական և քաղաքական զարգացման ուղղությամբ՝ կատարվող բոլոր ձեռնարկումներում։ Իրանի և ՍՍՌՄ միջև 1927 թվին չհարձակվելու պակտ ստորագրվեց, միաժամանակ և կնքվեցին տնտեսական մի շարք կարևոր հարցերը (ձկնորսարանների մասին, Փեհլեվի նավահանգստի մասին և այլն) կարգավորող համաձայնություններ։ Հենվելով Սովետական Միության աջակցության վրա իրանական կառավարությունը 1928 թվին վերացրեց կապիտուլյացիաների ռեժիմը և անիրավահավասար բոլոր պայմանագրերը։ 1937 թվին Իրանը կարգավորվեց Թյուրքիայի, Իրաքի ու Ավղանստանի հետ ունեցած սահմանային և տերիտորիալ վեճերը, կնքելով նրանց հետ այսպես կոչված Սաադաբադի պակտը, որը պակտի մասնակիցների միջև նախատեսնում էր կոնսուլտացիա միջազգային դրության բոլոր հարցերի շուրջը, ներառնելով մեկը-մյուսի դեմ թշնամական գործողություններին չդիմելու պարտավորություն։

Մերձավոր և Միջին Արևելքում գերմանական իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականությունը դեռ վաղ ժամանակներից իր նպատակներից մեկն էր համարում Իրանը ներթափանցելը և

նրան իր ազդեցության ենթարկեցնելը։ Հիտլերի և նրա կլիկի Գերմանիայում իշխանության գլուխն անցնելուց հետո ուժեղացավ գերմանական իմպերիալիստների ձգտումը ՍՍՌՄ-ի, Ավղանստանի, Հնդկաստանի, Իրաքի և Թյուրքիայի հետ սահմաններ ունեցող Իրանը դարձնել ստրատեգիական մի պլացդարմ՝ իր հափշտակողական, թալանչիական պլանների իրականացման համար։ Գերմանական ֆաշիզմը դիմում էր ամեն տեսակի միջոցների, որպեսզի իր համար տնտեսական ամուր դիրքեր ապահովի Իրանում։

Իրանը համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ։ Համաշխարհային երկրորդ պատերազմն սկսվելուց հետո (1939 թ.) խիստ աճեց հիտլերականների ակտիվությունն Իրանում։ Երկրի տնտեսական ռեսուրսները՝ առաջին հերթին Իրանի նավթային հարստությունները, իրենց վրա էին գրավում գերմանական ֆաշիստների գիշատիչ հայացքները։ Գերմանիան սկսեց սպառազինության ռազմամթերքներ մատակարարել իրանական կառավարությանը։ Ծավալվեց Իրանի հասարակական կարծիքի պրոֆաշիստական մշակումը, Իրանի համար կազմակերպվեցին հատուկ ռադիոհաղորդումներ Բեռլինից։ Գերմանական գեստապոն ռեզիդենցիան՝ ֆաշիստական լրտեսության, դիվերսիաների, քաղաքական ինտրիգների ու պրովոկացիաների մի կենտրոն էր։ Հիտլերականները երկրում ուժեղ կերպով ստեղծում էին իրենց «հինգերորդ զորասյունը», որի կազմում նրանց հաջողվեց հավաքագրել մեջլիսի մի շարք դեղուտատներին, իրանական բանակի գեներալներին ու սպաներին։ Ռիզա-շահի կառավարությունը փաստորեն ուղղակի համագործակցության էր գիմում հիտլերյան Գերմանիայի հետ, որին ոչ քիչ չափով նպաստում էին նաև շահի անձնական համակրությունները, բայց միևնույն ժամանակ ևս իրանական կառավարությունը բազմիցս պաշտոնապես հայտարարում էր իր բարեկամական վերաբերմունքի մասին Սովետական Միության և Մեծ Բրիտանիայի նկատմամբ։

Սովետական Միության վրա հիտլերյան Գերմանիայի ուխտադրուժ հարձակումից հետո իրանական կառավարությունը 1941 թ. 26/VI-ին հայտնեց Սովետական կառավարությանը, թե Իրանը կպահպանի լիակատար չեզոքություն։ Սակայն հիտլերյան գործակալների հակասովետական պրովոկացիաներն Իրանում դառնում էին ավելի ու ավելի լկտի։ Երկրի ներսում տեղի էր ու-

նենում ֆաշիստական գործակալության ուժեղ հավաքագրում, պրո-ֆաշիստական տարրերին բաժանվում էին զենքեր և դրամ։ Իրանի տերիտորիայում կազմավորվում էին դիվերսիոն և լրտեսական խմբեր ՍՍՌՄ՝ ամենից առաջ Բաքվի նավթային ռայոնը և Սովետական Թուրքմենիստան ուղարկելու համար։ Հիտլերյան Գերմանիան շահից պահանջում էր իրեն հանձնել իրանական ավիացիոն բազաները։ Ռիզա-շահի համաձայնությամբ պատրաստվում էր հիտլերականների կողմից ներշնչված ֆաշիստական մի հեղաշրջում։

ՍՍՌՄ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները չէին կարող անտարբեր վերաբերվել այդպիսի գործունեությանը, որն ուղղված էր ինչպես ՍՍՌՄ-ի և Մեծ Բրիտանիայի շահերի, այնպես էլ հենց բուն Իրանի ազգային շահերի դեմ։ 1941 թ. հունիսի, հուլիսի և օգոստոսի ընթացքում ՍՍՌՄ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարություններն ստեղծված վտանգի մասին երեք անգամ նախազգուշացրին իրանական կառավարությանը։ Սակայն հիտլերյան գործակալությանն Իրանից արտաքսելու մասին Մեծ Բրիտանիայի և Սովետական Միության պահանջին իրանական կառավարությունը պատասխանեց մերժումով։ 1941 թ օգոստ. 17-ին գերմանական դեսպանը շահին ռազմական օժանդակություն առաջարկեց Սովետական Միության ու Անգլիայի դեմ մղվելիք պայքարում։ 1941 թ. օգոստոսի 25-ին ՍՍՌՄ և Մեծ Բրիտանիայի կառավարություններն իրանական կառավարությանը հանձնեցին նոտաներ, որոնց մեջ պատճառաբանվում էր սովետական և անգլիական զորքերի Իրան մացնելու անհրաժեշտությունը։ Ընդսմին, Սովետական կառավարությունը հիշեցնում էր 1921 թ. սովետա-պարսկական պայմանագրի վերևում հիշատակված 6-րդ հոդվածի վրա։ Հենց այդ նույն օրն սկսվեց սովետական զորքերի մուտքը Իրան հյուսիսից և անգլիական ու հնդկական զորքերինը՝ հարավից։ 1941 թ. օգոստոսի 27-ին Ալի Ֆորուղիի գլխավորությամբ կազմվեց մինիստրների նոր կաբինետ։ Իրանական կառավարությունն ընդունեց սովետական և անգլիական կառավարությունների առաջարկը՝ Իրանի սահմաններից գերմանական բոլոր գործակալներին և Գերմանիայի, Իտալիայի, Ռումինիայի, Հունգարիայի, Բուլղարիայի և Ֆինլանդիայի դիվանագիտական միսսիաներին հեռացնելու մասին, որոնք հանդիսանում էին գերմանական գործակալության թշնամական գործունեության կենտրոնները։ Սակայն հենց շահի

գլխավորած որոշ ռեակցիոն շրջանների ազդեցության տակ կառավարությունը ծայրաստիճան դանդաղկոտություն էր ցուցաբերում այն միջոցառումներն իրականացնելու գործում, որոնց մասին պայմանավորված էր համաձայնագրում, դրանով իսկ հնարավորություն տալով ֆաշիստական գործակալությանը շարունակելու իր ոճրագործ գործունեությունը։ Այդ բանը իրանական ժողովրդի մեջ մեծ անհանգստություն ու անբավականություն առաջացրեց։

1941 թ. սեպտեմբերի 16-ին Ռիզա Փեհլեվի շահն ստիպված եղավ հրաժարվել գահից հօգուտ իր Մոհամմեդ-Ռիզա Փեհլեվի որդու և շուտով հեռացավ Իրանից։ Շահի բոլոր կալվածքներն անցան պետության ձեռքը։ Սեպտեմբերի 17-ին սովետական զորքերը մտան Թեհրան, իսկ սեպտեմբերի 18-ին՝ նաև անգլիական զորքերը։ Ստեղծված իրադրության պայմաններում այդ մի անհրաժեշտ միջոցառում էր ՍՍՌՄ-ի և Մեծ Բրիտանիայի շահերն ապահովելու, ինչպես նաև հակասովետական ու հակաանգլիական պրովոկացիաներին վերջ տալու համար։ Նոր շահը սեպտեմբերի 19-ին հանձնարարեց Ֆորուղիին կազմել մինիստրների նոր կաբինետ։ Նորոգված կառավարությունն ամուր կերպով կանգնեց ՍՍՌՄ և Մեծ Բրիտանիայի հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու ուղու վրա, Իրանից արտաքսեց հիտլերական բոլոր գործակալներին ու ներկայացուցիչներին, իսկ ներքին քաղաքականության ընագավառում անցկացրեց որոշ այնպիսի ռեֆորմներ, որոնք մի շրջադարձ էին դեպի պետական կառուցվածքի ու կառավարման ավելի դեմոկրատական ձևերը։

1942 թ. սկզբին ՍՍՌՄ և Մեծ Բրիտանիայի հետ Իրանի փոխհարաբերությունները մտան մի նոր փուլի մեջ, որի սկիզբը դրվեց այդ երեք երկրների միջև միության մասին եղած պայմանագրի կնքումով։ Պայմանագրի ստորագրումը կատարվեց հունվարի 29-ին Թեհրանում։ Քաղաքական այդ կարևորագույն ակտի հիմքում դրված էին 1941 թ. օգոստոսի 14-ի Ատլանտյան խարտիայի սկզբունքները։ Պայմանագիրը երաշխավորում էր Իրանի տերիտորիալ ամբողջականությունը, սուվերենիտետը և քաղաքական անկախությունը, ընդ որում դաշնակից պետությունները «պարտավորվում էին իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով համատեղ և առանձին-առանձին պաշտպանել Իրանին Գերմանիայի կամ մի որևէ այլ տերության ամեն տեսակի ագրեսիայից»։ Պայմանագրի համաձայն դաշնա-

ից պետությունները կարող են Իրանի տերիտորիայում անհրաժեշտ քանակությամբ պահել ցամաքային, ծովային և օդային ուժեր, ընդ որում այդ ուժերի առկայությունն Իրանում իրենից չի ներկայացնում ռազմական օկուպացիա և չի խախտում իրանական կառավարության իրավունքներն ու իրանական ժողովրդի շահերը: Պայմանագրի 5-րդ հոդվածը հատուկ կերպով վերապահություն է անում այն մասին, որ դաշնակից պետությունների զորքերը պետք է դուրս բերվեն Իրանից՝ դաշնակից պետությունների և Գերմանիայի ու նրա դաշնակիցների միջև ռազմական բոլոր գործողությունները դադարելուց հետո 6 ամսից ոչ ուշ: ՍՍՌՄ-ի և մեծ Բրիտանիայի համար ստրատեգիական մեծ նշանակություն ուներ ամբողջ Իրանի հաղորդակցության և կապի բոլոր միջոցներն օգտագործելու իրավունքը:

Պայմանագիրն ամբողջապես ապահովում էր Իրանի շահերը համաշխարհային պատերազմի ժամանակ և դրանից հետո: Դաշնակից պետությունները համատեղ պայմանավորվում էին (պայմանագրի 7-րդ հոդվածը) «առավելագույն ջանքեր գործադրել իրանական ժողովրդի տնտեսական կյանքը ներկա պատերազմի հետևանքով ծագած կարիքներից ու դժվարություններից պաշտպանելու համար»: Դաշնագրի ստորագրման առթիվ Իրանի պրեմյեր-մինիստրի անունով տրված իր հեռագրում ՍՍՌՄ Ժողկոմսովետի նախագահ Ի. Վ. Ստալինը հայտնեց իր հստակ համոզմունքը, որ ՍՍՌՄ ու Իրանի միջև ստեղծված նոր, դաշնակցային հարաբերությունները «կամրապնդեն բարեկամության կապերն իրանական ժողովրդի և Սովետական Միության ժողովուրդների միջև»:

Պայմանագրի կնքումից հետո Իրանի առաջ բացվեցին տնտեսական վերելքի հեռանկարները: Դաշնակիցներն երկրին մատակարարում են մեծ քանակությամբ սննդամթերքներ, ճոթեղեն և այլ ապրանքներ: Ցորենի ցանքսերի ընդարձակման համար Սովետական Միությունը մեկ ու կես հազար տոննա սերմացու ցորեն տրամադրեց Իրանին: Մորեխի դեմ պայքարելու նպատակով Սովետական կառավարությունն ուղարկեց մի հատուկ հանձնաժողով, որին տրված էին ինքնաթիռներ: Դաշնակիցներն զգալի բարելավումներ կատարեցին տրանսպորտային տնտեսության մեջ: Ընդլայնվեց Պարսից ծոցում եղած նավահանգիստների թողունակությունը: Խորեմշեհը (նախկ. Մոհամմեդա), Բենդեր-Շահպուր, Բասրա (Իրաքում) և Բուշիր նավահանգիստներն սպասարկում էին Անգլիայից, Հնդկաստանից, Ավստրալիայից, ԱՄՆ-ից եկող օվկիանոսային շոգենավերի ընդունումն ու բեռնաթափումը: Ավելացված է նաև Տրանս-իրանական երկաթուղու թողունակությունը: Երկաթուղային, ինչպես նաև խճուղային նոր շինարարությունը, բարելավելով երկրի կոմունիկացիաները, նպաստեցին Իրանի տնտեսական հետագա աճմանը:

Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի կառավարությունների խորհրդով Իրանը 1942 թ. ապրիլի 12-ին խզեց իր դիվանագիտական հարաբերությունները Ճապոնիայի հետ, քանի որ ճապոնական ներկայացուցիչների գործունեությունն Իրանում ուղղված էր անգլիական ու ամերիկական շահերի դեմ:

Իրանական կառավարության այն ծրագիրը, որը անց է կացվում 1941 թ. վերջից, արտաքին քաղաքականության բնագավառում, նախատեսնում է հարաբերությունների ամրապնդում բարեկամ ու հարևան տերությունների հետ, հատկապես սերտ համագործակցություն դաշնակից պետությունների և ԱՄՆ-ի հետ: Ներքին քաղաքականության բնագավառում այդ ծրագիրը նախատեսնում է՝ ժողովրդին ապահովել սննդամթերքով, ապրուստի արժեքի իջեցում, պայքար թանկության դեմ, գների կայունացում, դատական ռեֆորմներ, բանակի ու ոստիկանության վերակազմություն, տնտեսական ու ֆինանսական ռեֆորմներ, մասնավորապես հարկային լծի թեթևացում և ֆեոդալական հարաբերությունների մնացորդներ հանդիսացող հարկերի վերացում, գյուղատնտեսության, խոշոր ցիայի և ազգային արդյունաբերության զարգացում, երկաթուղիների և այլ տիպի ճանապարհների շինարարության ավարտում, առևտրական կոդեքսի վերանայում և մաքսից ազատ մենաշնորհների վերացում, վարչական ապարատի վերակազմություն, ազգային կրթության ու առողջապահության զարգացում:

1943 թ. փետրվարի 21-ին, այն բանից հետո, երբ մինիստրների խորհրդի նախագահ Սոխեյլին (այդ պոստում Սոխեյլիի նախորդը Ահմեդ Կավամն էր, որը փոխարինել էր Ֆորուղիին) մեջլիսում շարադրեց կառավարության այդ ծրագիրը, մեջլիսն ընդունեց Իրանի կառավարությանը վստահություն տալու բանաձև՝ այդ ընդունված ծրագրի գծով հետագա աշխատանքի համար:

Հենց այդ նույն թվին Իրանում տեղի ունեցան շատ խո-

շոր քաղաքական կարևորություն ունեցող, երկրի հետագա վիճակի համար առաջնակարգ նշանակություն ունեցող անցքեր՝ Իրանի մտնելը պատերազմի մեջ հակահիտլերյան կոալիցիայի կողմում և ՍՍՌՄ-ի, ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի ղեկավարների կոնֆերանսը Թեհրանում, որտեղ և ընդունվեց մի հատուկ դեկլարացիա Իրանի մասին։

Շահի այն հրամանագիրը, որով պատերազմական դրություն էր հայտարարվում Իրանի ու Գերմանիայի միջև, հավանություն ստացավ մեջլիսի կողմից 1943 թ. սեպտեմբերի 9-ին։ Իրանական կառավարությունն այդ կարևոր քայլին դիմեց այն պատճառով, որ գերմանական ներկայացուցիչներին Իրանից արտաքսելուց հետո ևս հիտլերյան Գերմանիան չէր դադարեցնում Իրանի ազգային շահերի և Իրանին դաշնակից ու բարեկամ տերությունների շահերի դեմ ուղղված քայքայիչ ու պրովոկացիոն գործունեությունը։ Հիտլերականները շարունակում էին Իրան ուղարկել իրենց լրտեսներին ու դիվերսանտներին, որոնք ստացել էին հետևյալ առաջադրանքները՝— ավերել Իրանի նավթի հանքատեղերը, ոչնչացնել Իրանի երկաթուղային և ուրիշ այն կոմունիկացիաները, որոնց միջոցով Անգլիայից և ԱՄՆ-ից սպառազինություն ու նյութեր էին տեղափոխվում ՍՍՌՄ, ինչպես և հենց իր՝ իրանական ժողովրդի համար տեղափոխվում էին նյութեր և սննդամթերքներ, ավերել կապի գծերն ու միջոցները և այլն։ Հիտլերականներն իրենց նպատակների համար փորձում էին նույնիսկ օգտագործել Կաղերունի շրջանի քաշքայի ցեղի բանդաներին՝ դրանց առաջնորդի Նասիր խանի գլխավորությամբ։ Սակայն իրանական կառավարությունը ժամանակին վերջ տվեց այդ փորձերին։ Գերմանիային պատերազմ հայտարարելը վերջնականապես լիկվիդացրեց այդ հանցագործ ամբողջ գործունեությանը, ինչպես նաև մի կողմից Իրանի ու մյուս կողմից ՍՍՌՄ-ի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի միջև երկպառակություն սերմանելու ուղղությամբ հիտլերյան գործակալության և պրոպագանդայի բոլոր փորձերը։ Իրանը միաժամանակ և հնարավություն ստացավ ավելի ակտիվ ու անմիջական օգնություն ցույց տալ հիտլերյան բռնապետության դեմ պայքարող երկրներին։

ՍՍՌՄ Ժողկոմսովետի նախագահ Ի. Վ. Ստալինի, ԱՄՆ-ի պրեզիդենտ Ֆ. Դ. Ռուզվելտի և Մեծ Բրիտանիայի պրեմյեր-մինիստր Ու. Չերչիլի՝ դաշնակից այդ երեք տերությունների ղեկավարների կոնֆերանսը տեղի ունեցավ Թեհրանում՝ 1943 թ.

նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 1-ը։ 1943 թ. դեկտեմբերի 1-ին ընդունված «Երեք տերությունների դեկլարացիան Իրանի մասին» հավաստում էր այն օգնությունը, որը ցույց էր տվել Իրանն ընդհանուր թշնամու դեմ պատերազմ վարելու գործում, առանձնապես հեշտացնելով բեռների տեղափոխությունը արտասահմանից դեպի Սովետական Միություն, ինչպես նաև այն փաստը, որ պատերազմն Իրանի համար առաջացրել էր սպեցիֆիկ տնտեսական դժվարություններ։ Այդ կապակցությամբ էլ ԱՄՆ-ի, ՍՍՌՄ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները համաձայնվեցին Իրանին առաջվա պես ցույց տալ հնարավոր օգնությունը պատերազմի ժամանակ և երաշխավորեցին, որ հետպատերազմյան ժամանակաշրջանում լիապես կքննարկվեն Իրանին վերաբերող բոլոր տնտեսական պրոբլեմները՝ դաշնակից ազգությունների մյուս անդամների առաջ կանգնած տնտեսական այլ պրոբլեմների հետ միասին։ Դեկլարացիան միանգամ ևս հաստատեց ԱՄՆ-ի, ՍՍՌՄ-ի և Մեծ Բրիտանիայի ցանկությունը պահպանելու Իրանի լիակատար անկախությունը, ինքնիշխանությունը և տերիտորյալ անձեռնմխելիությունը։ Այդ երկրների կառավարությունները հույս ունեին, որ Ատլանտյան խարտիայի սկզբունքներին համապատասխան, որին ստորագրել էին բոլոր չորս պետություններն էլ, Իրանը պատերազմից հետո խաղաղասեր մյուս ազգությունների հետ միասին մասնակցություն կունենա միջազգային խաղաղություն, անվտանգություն հաստատելու և առաջադիմության գործում։

Իրանի մամուլը, արտահայտելով ընակչության կարծիքն ու զգացմունքները, ջերմորեն ողջունեց կոնֆերանսը։ «Մենք երջանիկ ենք,— գրում էր «Մերդոմ» թերթը,— որ երեք մեծ տերությունները դեպի իրանական ժողովուրդն ունեցած լիակատար վստահության հիման վրա Իրանին համարեցին իրենց անկեղծ բարեկամը և կոնֆերանսի վայր ընտրեցին Թեհրանը»։

VI. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Իրանը՝ կոնստիտուցիոն միապետություն է։ Իրանի կոնստիտուցիան ստեղծվեց 1905—1911 թ. թ. իրանական ռևոլուցիայի հետևանքով։ 1906 թ. հրավիրված իրանական առաջին պառլամենտը՝ մեջլիսը (ազգային ժողով) 1907 թվին ընդունեց Իրանի կոնստիտուցիան (դրա առաջին մասը՝ «Իրանի հիմնական

օրենքը» անունով մեջլիսն ընդունել և շահն էլ հաստատել էր 1906 թ. վերջում)։ Իրանում 1925 թ. Փեհլեվիների դինաստիայի տիրապետության հաստատման կապակցությամբ կոնստիտուցիայի մեջ մտցվեց նոր դինաստիան օրինականացնող փոփոխություն։ Օրենսդրական իշխանությունը պատկանում է շահին և պառլամենտին, որը փաստորեն միպալատանի էր մնացել, որովհետև կոնստիտուցիայով նախատեսված երկրորդ պալատը (սենատ) փաստորեն չէր ստեղծվել։ Շահին է պատկանում օրենսդրական նախաձեռնության և օրենքների հաստատման իրավունքը։ Մեջլիսին պատկանում է նաև օրենսդրական նախաձեռնության իրավունքը, բացի այդ, միայն նա ունի օրենքներ պարզաբանելու ու մեկնաբանելու, ինչպես նաև պետական եկամուտների ու ծախսերի մասին օրենքներ հրատարակելու և հավանություն տալու իրավունքը։

Գործադիր իշխանությունը պատկանում է շահին, որի անունից և գործում են մինիստրներն ու պետական ատենաբանները օրենքի սահմաններում։ 1941 թվից Իրանի շահը՝ Մոհամմեդ-Ռիզա Փեհլեվին է։ Փադիշահն ազատ է պատասխանատվությունից։ Շահի ստորագրած օրենքները «միայն այն ժամանակ են ենթակա կատարման, երբ դրանց վավերացնի համապատասխան մինիստրը, որը և պատասխանատու է այդ օրենքների բովանդակության ճշտության համար» («Հիմնական օրենքի» 45-րդ հոդվ.)։ Մինիստրներն իրենց վրայից պատասխանատվությունը գցելու համար չեն կարող վկայակոչել շահի գրավոր կամ բանավոր հրամանները (հոդվ. 64)։ Պատերազմ հայտարարելու և խաղաղություն կնքելու իրավունքը պատկանում է շահին (կոնստիտուցիայի 51-րդ հոդվ.)։ Մինիստրների նշանակումը և հեռացումը կատարում է շահը. մինիստրները պատասխանատու են պառլամենտի առաջ, որը կարող է մինիստրների դեմ մեղադրանք հարուցել և դատի ենթարկել նրանց (հոդվ. 65)։ Եթե մեջլիսը ձայների բացարձակ մեծամասնությամբ անվստահություն հայտնեց մինիստրների խորհրդին կամ որևէ մինիստրին, ապա նրանք պետք է հրաժարական տան։

Մեջլիսն ընտրվում է 2 տարով։ Ընտրելու իրավունքը պատկանում է 20 տարին լրացած, նստակյացության սահմանված ցենզի (ընտրության վայրում 6 ամիս ապրելու) պահանջներին բավարարող տղամարդիկ։ Ընտրվելու իրավունքը պատկանում է միայն 30 տարեկանից ոչ ցածր և 70 տարեկանից ոչ բարձր հասակ ունեցող մուսուլման տղամարդկանց, այն պայմանով, որ նրանք հայտնի անձ լինեն տվյալ վայրում, կարողանան կանոնավոր կարդալ և գրել ֆարսերեն, չլինեն չարանենգ սնանկներ, կրոն ուրացողներ կամ քաղաքական տեսակետից դատապարտվածներ։

Իրանի և ՍՍՌՄ 1941 թվի համաձայնագրից անմիջապես առաջ (տես՝ Պատմական ակնարկ) մեջլիսը շահի կողմից, իջեցված լինելով մինչև իրավազուրկ խորհրդակցական մի օրգանի վիճակը, փաստորեն չէր իրականացնում իր իրավունքները։ 1941 թ. Ռիզա-Շահի գահից հրաժարվելուց հետո մեջլիսի իրավունքները վերականգնվեցին և Իրանի կոնստիտուցիան նորից սկսեց իրականացվել։

Պրովինցիաների կամ մարզերի (էստանների) գլուխը կանգնած են էստանդարները, նահանգների (շեհրեստանների) գլուխը՝ ֆերմանդարները, նահանգները բաժանվում են գավառների (բեխշ), իսկ գավառներն էլ՝ գավառակների (դեհեստան), գավառներին կառավարում են բեխշդարները, գավառակներին՝ դեհդարները, իսկ գյուղերին՝ ատանուտարները (քեթխուդա)։ Էստանդարներին և ֆերմանդարներին նշանակում է կառավարությունը։ Նահանգների և գավառների պետերին կից պետք է լինեն խորհուրդներ։ Քաղաքներում կան մունիցիպալ վարչություններ, որոնց ղեկավարներին դարձյալ կառավարությունն է նշանակում։ Իրանի դատական սիստեմը կառուցված է ֆրանսիական արդարադատական սիստեմի ձևով։ Գյուղերում և ոչ մեծ քաղաքներում գործում են հաշտարար դատարանները, մեծ քաղաքներում՝ բարձրագույն դատարաններ, 8 ամենախոշոր քաղաքներում (այդ թվում՝ Թեհրանում, Թավրիզում, Շիրազում և այլն) հիմնված են բողոքարկման դատարաններ, իսկ Թեհրանում կա վճռաբեկ կամ գերագույն դատարան։ Դրանից բացի, կան զինվորական և առևտրական հատուկ դատարաններ։

VII. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

Զինված ուժերի կազմը։ Իրանի զինված ուժերը կազմված են պամաքային բանակից, ռազմա-օդային ուժերից և ոչ մեծաքանակ ծովային նավատորմիղից։ Նավատորմիղի կազմում կա միայն 8 ոչ մեծ հրետանավակ և 3 պահականավ։ Ցամաքային զորքերը բաղկացած են 9 խառը դիվիզիաներից, մի քանի ա-

ռանձին բրիգադներից, հետևակային ու հրետանային գնդերից, ինչպես նաև զենիթային մարտկոցներից։ Խառը դիվիզիան նեռրառնում է հետևակային, հեծյալ, հրետանային և սակրավոր զորամասեր. բացի այդ, դիվիզիայի մեջ մտնում են զրահամեքենաների և տանկերի ստորաբաժանումներ։

Ռազմա-օդային ուժերը 1942 թ. բաղկացած էին 150 ինքնաթիռից, որոնք միավորված էին մի ավիաբրիգադի մեջ։ Համարյա բոլոր այդ ինքնաթիռները ձեռք էին բերվել Անգլիայում։

Իրանում կան նաև ժանդարմական զորքեր։ 1940 թ. այդ զորքերը բաղկացած էին 7 խառը գնդից և 15 խառը գումարտակից, որոնք կազմում էին մեկ ժանդարմական կորպուս։

1941 թ. օգոստոսին, կառավարության փոփոխումից հետո, իրանական բանակը ենթարկվեց մասնակի վերակազմության։ Սակայն նրա կազմակերպման ու կազմի սխեման հիմնականում մնաց նույնը։

Կոմպլեկտավորումը և ծառայության ժամկետները։ Պետական օրենքների համաձայն, զինվորական ծառայությունը պարտադիր է և սկսվում է 21 տարեկան հասակից։ Զինապարտի ծառայության ընդհանուր տևողությունը 25 տարի է, դրանից 19 տարին՝ պահեստում և տերիտորիալ բանակում։ Զինվորական ծառայությունը բաժանվում է 3 ժամանակաշրջանի.

1) Ծառայությունը կանոնավոր բանակի զորամասերում։ Ծառայությունը կանոնավոր բանակի զորքերում տևում է 6 տարի, դրանից 2 տարին կադրերում և 4 տարին՝ կանոնավոր բանակի պահեստում։ Կրթություն և բակալավրի աստիճան ունեցող զորակոչիկները կադրերում ծառայում են $1^1/_2$ տարի, լիավարտ բարձրագույն կրթություն ունեցող անձինք՝ 1 տարի։

2) Ծառայությունը պահեստում։ Այդ ծառայությունը տևում է 13 տարի և գոյանում է 6 և 7 տարի տևողություն ունեցող երկու ժամանակաշրջանից։ Պահեստում լինելու առաջին ժամանակաշրջանում պահեստայինները մեկամսյա վարժական հավաքի են կանչվում 2 տարին մեկ անգամ, իսկ երկրորդ ժամանակաշրջանում՝ 3 տարին մեկ անգամ։

3) Ծառայությունը տերիտորյալ բանակում—մինչև 47 տ. հասակը, այսինքն՝ 6 տարի ժամանակաշրջանում։

Ցամաքային և օդային ուժերի անձնակազմի խանակը։ Իրանի ցամաքային և օդային ուժերի քանակի մասին ստորև զետեղված աղյուսակում բերված տվյալները վերաբերում են 1934 թվին, երբ Իրանի զինված ուժերի ընդհանուր քանակը համարյա հավասար էր բանակի քանակին 1942 թվին (մոտավորապես 100 հազ. շարքային և սպա)։

Կազմը	Սպաներ և նրանց հավասարեցված ստորաբաժանումներ	Շարքայիններ	Ընդամենը
Ցամաքային ուժեր	3.995	95.829	99.824
Օդային ուժեր	120	755	875
	4.115	96.584	100.699

Ռազմական բյուջեն։ 1934 թվին իրանական բանակի բյուջեն կազմում էր 238,8 մլն. ռիալ, 1940 թվին դա հասավ 415 մլն. ռիալի։

VIII. ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Ժողովրդական կրթություն։ Ժողովրդական կրթության վիճակն արտացոլում է երկրի ընդհանուր նշանակալի հետամնացությունը։ Անգրագետների տոկոսը դեռևս չափազանց բարձր է չափահաս բնակչության ու հատկապես կանանց մեջ։ Թեպետ և օրենքով սահմանված է 6-ից մինչև 13 տարեկան հասակ ունեցող երեխաների ընդհանուր պարտադիր ուսուցում, դպրոցից դուրս դեռևս փաստորեն մնացել են մեծ թվով երեխաներ, առանձնապես աղջիկներ։ Բայց և այնպես, վերջին 20 տարիների ընթացքում Իրանի ժողովրդական կրթության գործում ձեռք են բերված էական նվաճումներ։ Հոգևորական դպրոցների (մեքտեբ և մեդրեսե) ծայրաստիճան հետամնաց և քանակապես անբավականաչափ ցանցն իր գերիշխող տեղն ստորաբաժանում զիջում է աշխարհիկ այնպիսի դպրոցների սիստեմին, որոնք սպասարկում են դպրոցական հասակի շատ ավելի մեծ թվով երեխաների. 1921 թ. Իրանում կար 612 դպրոց՝ 55 հազ. սովորողով, իսկ 1937 թվին 4.939 դպրոց՝ 273.7 հազ. սովորողով։ Դպրոցների մեծ մասը պահվում է պետության միջոցներով, որոշ մասնավոր դպրոցներ ստանում են պետական նպաստներ։ Ուսուցումը դպրոցներում, որպես կանոն, առանձին-առանձին է

տղաների և աղջիկների համար։ Քաղաքներում տարրական դպրոցն ունի վեցամյա, իսկ գյուղական վայրերում՝ չորսամյա դասընթաց։ Միջնակարգ դպրոցները երեխաներին ընդունում են 13 տարեկանից, ուսման տեողությունն այնտեղ տղաների համար 6 տարի է, աղջիկների համար՝ 5 տարի։ Պահպանված հոգևորական դպրոցները պահվում են կրոնական կազմակերպությունների միջոցներով։ Իրանում կան օտարերկրացիներին պատկանող և Իրանում ապրող օտարերկրյա քաղաքացիների երեխաներին սպասարկող դպրոցներ (ամերիկական, ֆրանսիական և այլն)։ Այդ դպրոցները գտնվում են Իրանի ժողովրդական լուսավորության մինիստրության վերահսկողության տակ։

Թեհրանում կա համալսարան (1934 թվից), կան նաև բարձրագույն դպրոցներ՝ իրավաբանական (հիմնված է 1919 թ.), բժշկա-դեղագործական (հիմնված է 1924 թ.)։ Բացի այդ, Թեհրանում, արհեստների ու արվեստների պրոֆդպրոցին կից կան բարձրագույն ուսումնական հաստատություններ համարվող 2 բաժանմունքներ (մեխանիկական և քիմիական)։ 1932 թվից Իրանում կա բարձրագույն գյուղատնտեսական մի դպրոց։

Մինչև համաշխարհային երկրորդ պատերազմը զգալի թվով իրանցի երիտասարդներ կառավարության կողմից ուսման էին ուղարկվում արտասահման։

Մամուլ։ Իրանում առաջին թերթերն երևան եկան XIX դ. 50—60 ական թվականներին՝ Թեհրանում։ Առաջին օրաթերթը («Խոլասիյե-Հեվադես»—«Անցքերի ամփոփագիր») լույս տեսավ 1898 թ.։ Լույս էին տեսնում թերթեր նաև պրովինցիայում (Թավրիզ, Շիրազ, Սպահան)։ Դաժան գրաքննության ճիրաններում լույս տեսնող պարսկական նախահեղափոխական թերթերը լայն տարածում չունեին։ Միևնույն ժամանակ և՝ XIX դ. վերջի մինչև հեղափոխությունը էպոխայում աճեց արտասահմանում լույս տեսնող պարսկական մամուլը («Էխթերը»՝—Ստամբուլում, «Քանունը»՝ Լոնդոնում, «Խաբլ-էլ Մատինը»՝ Կալկաթայում, «Սուրեյան», «Փերվերեջը», «Հեքմեթը»՝ Կահիրեում և ուրիշ թերթեր)։

Իրանում, XX դ. սկզբին, 1905 թ. հեղափոխությից հետո, ինչպես մայրաքաղաքում—Թեհրանում, այնպես էլ պրովինցիայում լույս էին տեսնում շատ (մինչև 100 անուն) թերթեր և ժուռնալներ, որոնք շատ դեպքերում կարճատև հրատարակություն ունեին։

Ժամանակակից պարբերական հրատարակություններից հիմնականները Թեհրանի թերթերն են՝ «Իրան»—պաշտոնական կառավարական օրգան 1921թվից, «Էթթելաաթ» («Տեղեկագիր»)—անկախ, առաջադիմական, պառլամենտական մեծամասնության օրգան, «Թեջեդ-դոդե-Իրան» («Իրանի նորոգում»)—պրոխալամական, «Շեֆեկե-Սորխ» («Կարմիր արշալույս»)—սոցիալիստական թեքումով. «Բուշեշ» («Եռանդ»), «Սեթաթեյե-Զեխան» («Տիեզերքի աստղ»), «Բեյխան» («Տիեզերք»), «Մեհրե-Իրան» («Իրանի արևը»), «Բախթեր» («Արևմուտք»), «Մեյխեն» («Հայրենիք») և ուրիշ թերթեր պարսկերեն լեզվով։ «Yournel de Téhèran», „Messaqer de Tèhéran"—ֆրանսերեն լեզվով, „Ministry of Justice Gazette»—անգլերեն լեզվով։

Ժուռնալներից հարկավոր է հիշատակել՝ գիտական-գրական ժուռնալներ «Էրֆան»-ը («Գիտելիք»), «Էրմեղան»-ը («Պարգև»), մանկավարժական ժուռնալ (լուսավորության մինիստրության-օրգան) «Ամուզեշ-օ-Փերվերեշ»-ը («Ուսուցում և դաստիարակություն»), արաբական նախկին անվանումն էր «Թաալիմ-օ-Թերբիեթ») և ուրիշները։

Պրովինցիալ քաղաքներում լույս տեսնող թերթերից և ժուռնալներից ամենակարևորներն են Թավրիզում—«Թերբիզ»-ը, Սպահանում—«Մեհր»-ը («Արև»), որը լույս է տեսնում ամիսը երկու անգամ, Քերմանում—«Ամենեյե-Զենուբ»-ը («Հարավի հայելի»)—օրաթերթ է, «Բիդարի»-ն («Զարթոնք»)։

Տպարանային տեխնիկային տիրապետելու տեսակետից վերջին ժամանակներս մեծ արդյունքներ են ստացված։ Մայրաքաղաքի լավագույն թերթերը լույս են տեսնում պարզորոշ ձևավորումով, արևմտա-եվրոպական համանման հրատարակությունների տիպի նկարներով։

Լեզու։ Իրանի հիմնական լեզուն պարսկերենն է (կամ «Ֆարսի»-ն), որը դասվում է հնդ-եվրոպական լեզուների իրանական խմբում։ Նրա պատմության մեջ տարբերում են երեք շրջան՝ հին-պարսկական, միջին պարսկական և նոր-պարսկական։

Հին-պարսկական լեզուն, որը հավանորեն առաջացել է Պարսից երկրի (ժամանակակից Ֆարսիստանի, Իրանի հարավարևմուտքում գտնվող մարզի) լեզվից, հայտնի է գլխավորապես այն սեպագիր արձանագրությունների շնորհիվ, որ թողել են Ա-քեմենյան դինաստիայի պարսկական թագավորներ Դարեհը (522—486 թ.թ. մինչև քր. թվ.) և Քսերքսեսը (486—466 թ.թ. մինչև քր. թվ.), որոնք և այդ արձանագրություններում պատ-

մել են իրենց հզորության ու նվաճումների մասին։ Արձանագրություններին կից տրվում էին դրանց թարգմանությունները այդ ժամանակվա մյուս կուլտուրական լեզուներով՝ էլամերենով, բաբելերենով, եգիպտերենով։ Այդ արձանագրություններից ամենակարևորը պատկանում է Դարեհին. դա փորագրված է Բիսիթուն կամ Բիհիստան լեռան (Բերմանշահի մոտ) ժայռի վրա։ Հին-պարսկական սեպագիրն ասորա-բաբելականի կատարելագործումն էր։ Դրանով գրված լեզուն՝ թագավորների ու նրանց ամենամոտիկ շրջապատի լեզուն էր։ Միջազգային հարաբերությունների համար այն ժամանակներում ծառայում էր արամեերենը, որի այբբենները սկսեցին կիրառվել նաև պարսկական լեզվի համար ու գոյություն ունեցան որոշ փոփոխություններով մինչև արաբական նվաճումները։ Հին պարսկական լեզվին իր համակարգությամբ մոտ է մազդեականության «Ավեստա» սրբազան գրքի (տես՝ «Կրոն» բաժինը) հնագույն մասերի լեզվին։ «Ավեստայի» գրված ու մեզ հասած տեքստը սակայն հին չէ Սասանյանների էպոխայից (քր.թվ. III—VII դ.դ.)։ Նրա այբուբենն ունի արամեական ծագում։

Միջին-պարսկական լեզուն սկսեց կազմավորվել դուցե և մինչև քր. թվ. IV դարից սկսած և գոյություն ունեցավ շուրջ 1000 տարի (մինչև արաբական նվաճումը)։ Միջին պարսկական լեզվի ամենից ավելի հայտնի ձևը կրում է «փեհլեվի» անունը։ Այդ լեզուն հանդիսանում է նոր-պարսկական լեզվի անմիջական նախորդը։ Պահպանվել են արձանագրություններ Արշակունիների դինաստիայի (250 թ. մինչև քր. թվ. 226 թ.) ժամանակներից. գրական բազմաթիվ հուշարձաններ ոչնչացել են։ Փեհլեվին՝ պաշտոնական պետական և կրոնական լեզու էր Սասանյանների (224—651 թ.թ.) օրոք։ Ամենից ավելի հայտնի են մազդեական այն տեքստերը, որոնց պահպանել են զորոաստրականներն Իրանում (գեբրերը) և Հնդկաստանում (պարսերը) և որոնք ծագում են մասամբ քր. թվ. III դարից։ Միջին-պարսկական լեզուն հին-պարսկականից տարբերվում է գլխավորապես ձևաբանական հին սիստեմի պարզեցումով և տարաբաժանումով, որի հետևանքն էլ եղավ նոր-պարսկական լեզվի անալիտիկ համակարգության կազմավորումը։ Այսպես կոչված հյուսիսային փեհլեվի և սոգդիական լեզուներով գրված տեքստերը, որոնք այս հարյուրամյակի սկզբին հայտնաբերվեցին չինական Թուրքեստանում և որոնք առաջացել էին սոցիալիստական ու իդեալիստական (մանիքեական, քրիստոնեական և բուդդայական) այլ միջավայրում, շատ նոր ու արժեքավոր բան մատրեցին կուլտուրայի պատմության և պարսկերենի պատմության մեջ։

Նոր-պարսկական լեզու ասելով սովորաբար հասկացվում է արդի Իրանի լեզուն։ Սկզբում նա քիչ էր տարբերվում հարավային փեհլեվիից։ Արաբական նվաճումից հետո (VII դարի կեսերը) իրանական ֆեոդալական ազնվականությունն անցավ գրության արաբական սիստեմին, որը և պահպանվում է մինչև այժմ։ Պարսկերենի մեջ ներթափանցեցին արաբերենից հսկայական քանակությամբ փոխառություններ, որոնք ազդեցին լեզվի ոչ միայն բառային կազմի, այլև նրա հենց կառուցվածքի վրա։ Մոտավորապես IX դ. կեսերին իրանական ֆեոդալները, օգտվելով խալիֆաթի թուլացումից և ձգտելով ազատագրվել արաբների տիրապետությունից, սկսում են դիմել ժողովրդական լեզվին։ Բայց և այնպես, պահպանվեցին հսկայական քանակությամբ արաբիզմներ։ Այդպես, ի տարբերություն մարզերի բարբառների կազմավորվեց «պալատական լեզու» (դեբանե-դերի)։ Դա ծառայում էր որպես գրական լեզու Իրանում մի ամբողջ հազարամյակի ընթացքում և այդ ժամանակամիջոցում կրեց միայն աննշան փոփոխություններ։ Այդ լեզվով գոյություն ունի չափազանց հարուստ գրականություն (տես՝ «Գրականություն» բաժինը) ոչ միայն Իրանի սահմաններում, այլև նրան սահմանակից երկրներում (գլխավորապես Հնդկաստանում, Միջին Ասիայում, Անդրկովկասում, Ավղանստանում, որտեղ նա թափանցել էր մոնղոլական նվաճման ժամանակ) և նա դարձավ իրանական ծագում ունեցող ժողովուրդների համար մի ընդհանուր լեզու։ XIX դ. կեսերից, ֆեոդալիզմի դեմ ուղղված իրանական բուրժուազիայի պայքարի կապակցությամբ, պայքար սկսվեց նաև պարսկական գրական լեզուն խոսակցականին մոտեցնելու համար։ Ներկայումս նոր-պարսկական գրական լեզվի մեջ տարբերում են «բարձր» ոճը, որը մեծ քանակությամբ պահպանել է զորածությունից դուրս եկած մեռացուկներ (նա նաև «պաշտոնական» լեզու է) և քաղաքացիների լեզուն, որն ավելի ու ավելի է թափանցում գրականության մեջ։ Բացի այդ, գոյություն ունեն գլխավորապես գյուղացիական բնակչության մեջ տարածված բարբառներ։ Վերջիններս տրոհվում են Կասպիական ծովափի (դրանցից գլխավորներն են՝ Մազանդարանի, Սեմնանի, Գիլյանի, Թալիշի բարբառները) և Կենտրոնական Իրանի բար-

բառերի։ Համաշխարհային առաջին պատերազմից հետո իրանական կառավարությունը սիստեմատիկ միջոցառումներ էր ձեռք առնում պարսկական գրական լեզուն ոչ իրանական տարրերից մաքրելու համար։ Մի շարք տերմիններ՝ արաբական, մոնղոլական, թյուրքական, արևմտաեվրոպական, փոխարինվեցին պարսկական լեզվի բառերով կամ թե չէ արհեստական նորաստեղծումներով։

Արդի Իրանի բնակչության զգալի մասը խոսում է այլ լեզուներով։ Այսպես, քրդերը խոսում են իրանական լեզուների արևմտյան խմբին պատկանող քրդերենով (կուրմանջի)։ Ժամանակակից պարսկերենից քրդերենը տարբերվում է իր ձևաբանության ու շարահյուսության մեջ պահպանված հնացուկների մեծ քանակով։ Քրդերենը ևս տրոհվում է մի շարք բարբառների։ Իրանում բնակվող թյուրք-մոնղոլական ցեղերը խոսում են թյուրքական լեզուներով (ադրբեջաներեն, թուրքմեներեն և այլն)։

Գրականություն։ Հին-պարսկական շրջանի գրավոր հուշարձանները հասել են մեզ աքեմենյան թագավորների սեպագիր արձանագրությունների ձևով, ինչպես և զորոաստրականների սուրբ գրքի՝ «Ավեստայի» մի մասով, որն ունի քր. թվ. III դարի սասանյան ուշ խմբագրություն։ Աստվածապաշտությանը վերաբերող հարցերից բացի «Ավեստան» պարունակում էր տեղեկություններ փիլիսոփայությունից, տիեզերագրությունից, կենդանաբանությունից և այլ գիտություններից։ Կլասիկ հեղինակների (Հերոդոտ և ուրիշները) վկայությամբ այդ ժամանակներում (V դ. մինչև քր. թվ.) գոյություն ուներ շատ զարգացած ֆոլկլորը՝ ինչպես առասպելաբանական բնույթի, այնպես էլ հերոսական էպիկական ասքեր։

Արշակունիների դինաստիայից (250 թ. մինչև քր. թվ.—226 թ. քր. թվ.) սկսած և Սասանյան ամբողջ ժամանակաշրջանում (224—651 թ.թ.) Իրանում ձևավորվում էր այսպես կոչված միջին-պարսկական հարուստ գրականությունը փեհլևի լեզվով։ Այդ գրականությունն ստեղծում և տարածում էր գլխավորապես զորոաստրական հոգևորականությունը։ Կրոնական գրքերից պահպանվել են «Բունդեհեշ» կոսմոգոնիան, «Դինկարտ» դավանաբանությունների հավաքածուն (Զորոաստրի կենցաղագրությամբ), «Բուրմ Վիրաֆի երկինք բարձրանալն ու նրա իջնելն անդրշիրիմյան աշխարհը» և այլն։ Աշխարհիկ գրականությունից մեծ արժեք ունի «Պապաքի ցեղից սերած Արդաշիրի գործերի գիրքը», որը շարադրում է առաջին Սասանյանի՝ Արդաշիրի (224—241 թ.թ.) բարձրացման պատմությունը։ Փեհլևիական գրականության ծաղկումը տեղի ունեցավ Խոսրով I-ի Անուշիրվանի (531—579 թ.թ.) թագավորության ընթացքում։ Այդ ժամանակ ստեղծվեց «Խոդայ-Նամե»—«Իրանի տերերի գիրք» պատմական գիրքը, որը հայտնի է արաբական կամ նոր-պարսկական շատ ավելի ուշ թարգմանություններով և որը հետագայում նյութ ծառայեց Ֆիրդոուսիի «Շահ-Նամե»-ի համար, հնդերենից թարգմանվեց «Կալիլա և Դիմնա» հայտնի կենդանական էպոսը։ Փեհլևիական ժամանակաշրջանի գիտական գրականությունն իր նյութը վերցնում էր գլխավորապես հունական կլասիկ գրականությունից (Արիստոտելից և ուրիշներից), սիրիական գրականության միջնորդությամբ, որը շատ մոտ էր Սասանյան կայսրության կրթված պարսիկներին։ Կառավարական ու ռազմական գիտությունների էնցիկլոպեդիան՝ «Ային-Նամե»-ն («Կանոնագիրք») արտացոլում էր իր մեջ Սասանյան պետական կառավարման փորձը։

VII դարում արաբները նվաճեցին Սասանյան կայսրությունը։ Միջին-պարսկական գրականությունն զգալի ազդեցություն թողեց Իրանի նվաճողների գրականության վրա։ IX դարից պաշտոնական գրական լեզու դարձավ արաբերենը, որով լայնորեն թարգմանվում էին միջին-պարսկական գործերը։ Փեհլևի լեզուն, որն արդեն վերջին Սասանյանների օրոք դառնում էր գրավոր լեզու, աստիճանաբար փոխարինվում էր խոսակցական պարսկերենով գրականության մեջ։ Արաբների քաղաքական տիրապետության անկման և պարսկական նոր պետականության զարգացման (IX—X դարեր) հետ միասին առաջացավ նաև պարսկական նոր գրականությունն ազգային լեզվով։ Նոր-պարսկական գրական լեզվի հիմքում դրվեց Խորասանի կենդանի բարբառը։ Ընդ որում, պարսկական գրական լեզուն լայնորեն փոխ առավ արաբական լեզվի տարրերը։ Պոեզիայում ընդունվեցին արաբական մի քանի բնորոշ ձևեր, արաբական տաղաչափություն, ինչպես նաև հանգերի սխեմատիկ դասավորումն ըստ կիսատների (աա, բա, վա, գա և այլն)։

Գովասանական ներբողների (քասիդներ) և լիրիկական բանաստեղծությունների ձևով մեզ հասած նոր-պարսկական լեզվով գրված հնագույն ստեղծագործությունները պատկանում են IX դարի սկզբին։ Ոչ մի մեծ հատված պահպանվել է այն քասիդից,

որն իրը թե գրել է Աբուլ-Աբբաս Մերվային 803 թվին։ Հին ժողովածուներն ու բառարանները դեռևս պահպանել են առանձին տողեր մի ամբողջ շարք պոետների՝ Աբու-Հաֆս Սողդիի, Խանզալա Բաղղիսիի, Փիրուզ Մաշրիքիի, Իբն-Վասիֆի և ուրիշների ստեղծագործություններից. այդ պոետներից միքանիսը պատկանում են, հավանաբար, դեռևս VIII դ. վերջին։

X դարը՝ պարսկական պոեզիայի փայլուն ծաղկման էպոխան է։ Գրական կենտրոններ են դառնում զանազան կառավարողների պալատները, որոնց շուրջը հավաքվում են ամենից ավելի ականավոր պոետներն ու գիտնականները։ Բաղդադի խալիֆը կորցրեց իր քաղաքական իշխանությունը և Պարսկաստանում փաստորեն կառավարում էին տեղական պարսկական դինաստիաները։ Այդ ժամանակի համար բնորոշ էին վանդալությունը, կենսուրախության աշխույժ հետաքրքրությունը նյութական աշխարհի նկատմամբ։ Այդ ժամանակներում Միջին Ասիան կուլտուրայի խոշորագույն կենտրոն էր։ Պալատական պոեզիան առանձնահատուկ կատարելության հասավ սամանյանների (875—999 թ. թ) օրոք. նրանց պետության կենտրոնը Բուխարան էր։ Բուխարայում կազմվեց մի մեծածավալ գրադարան իր ժամանակի լավագույն գրքերից (նշանավոր գիտնական Ավիցեննայի վկայությունը)։ Սամանյան պոետների մեջ առաջին տեղը պատկանում է հանճարեղ սամարղանդցուն՝ Ռուդաքիին (վախճ. մոտ. 954 թ.)։ Նրա լիրիկական բանաստեղծությունների ժողովածուից («Դիվան») մեզ կապակցված ձևով հասել է միայն երեք բանաստեղծություն։ Գեղարվեստական առանձնահատուկ արժեքներով աչքի է ընկնում ոչ մեծ այն հատվածը, որը նվիրված է Բուխարայի նկարագրությանը, ինչպես նաև այն փառահեղ քասիդը, որը փառաբանում է Միստանի (մի մարզ հարավարևելյան Իրանում) էմիրներից մեկին, որպես հին ասպետական քաջության ներկայացուցչի։ Ռուդաքին ստեղծեց պարսկական պոետի մի յուրահատուկ կերպար, որին փորձում էին նմանվել նրա հետնորդները։ Այդ պոետը՝ հպարտ է, անապարձ, առատաձեռն, թեթևսոլիկ, սիրահարված, գինու համը շատ լավ իմացող ու գնահատող։ Ռուդաքիի ավելի ուշ գրած դիդակտիկական բանաստեղծությունները համակված են ծանր մտորումներով։ Նրա կարերիայի ողբերգական վախճանը (նա հավանորեն զրկվեց թագավորի ողորմածությունից և կուրացվեց) առիթ ծառայեց ստեղծելու մի շատ ցնցող գրվածք, որի մեջ պոետը ողբում է իր երջանիկ պատանեկությունը։ Ռուդաքին պարսկական ոտանավորի վերածեց «Կալիլա և Դիմնա» էպոսը. դրանից մեզ հասել են իրենց հանգի կլասիկ պարզությամբ և որոշակիությամբ աչքի ընկնող միայն առանձին կտորներ։

Սամանյան պոեզիայի երկրորդ խոշոր անունը՝ Դաքիքին է (սպանված է մոտավորապես 977 թ.) Թուս քաղաքից։ Բուխարայի պալատական շրջաններում նա համարվում էր հին ասքերի (պատմությունների) ամենամեծ ծանոթը։ Էմիրի հանձնարարությամբ Դաքիքին պետք է նախամուսուլմանական Իրանի թագավորների ու դյուցազունների մասին եղած արձակ պատմությունները միավորեր մի մեծ պոեմայի մեջ։ Դրա հիմքում պետք է դրվեր իրանական թագավորների պաշտոնական խրոնիկան, որը կազմվել էր դեռ VII և IX դարերում և թարգմանվել էր արաբերեն։ Դաքիքին գրեց մինչև հազար բեյթ՝ երկտողանի ոտանավոր, սակայն չկարողացավ ավարտել իր աշխատությունը։ Նրա խնդիրը դեռ Սամանյանների օրոք փայլուն կերպով իր վախճանին հասցրեց պարսկական մեծագույն պոետ՝ Թուսեցի Ֆիրդոուսին (934—1020 թ. թ.), որն ապրում և գործում էր Խորասանում։ Ավելի, քան 30 տարի նա ծախսեց «Շահերի գիրքը»՝ «Շահ-Նամեն» ստեղծելու համար, որը գեղարվեստական կատարյալ ձևով պահպանել է իրանական ազգային էպոսի ամբողջ հարստությունը։ Պոեմը պարունակում է մոտ 60 հազ. երկտող։ Պատմելով Թուրանի դեմ Իրանի մղած պայքարի մասին, պոետը կարմիր թելի նման անց է կացնում այն միտքը, որ հաղթանակը կտրվի միայն այն ժամանակ, երբ իրանական ազնվականությունը, մոռանալով երկպառակչական կռիվները, համախմբված կերպով հակահարված տա թշնամուն։ Գեղարվեստական ուժգնությունը վերցնելով ֆոլկլորից, պոետն ստեղծեց այնպիսի կերպարներ, որոնք մտան համաշխարհային գրականության գանձարանը (դարբին Կավեն, իշխանազն Ռոստեմը և ուրիշները)։

«Շահ-Նամե»-ի առաջին խմբագրությունն ավարտվեց 994 թ., իսկ 999 թ. սամանյան պետությունը կործանվեց թյուրքնվաճողների՝ կարախանյանների և դաղնեվյանների հարվածների տակ։ Պոետն իր ստեղծագործությունը նվիրեց նվաճողին՝ սուլթան Մահմուդ Ղազնեվյանին, որն արհամարհական վերաբերմունք ունեցավ դեպի պոեման։ Զայրացած պոետը գրեց մի լրացում պոեմին՝ երգիծանք սուլթան Մահմուդի մասին, և ինքն իր գլուխը փրկեց դիմելով փախուստի։ Բաղդադում Ֆիր-

դուսին գրեց իր երկրորդ ստեղծագործությունը՝ «Յուսուֆ և Զուլեյխա» պոեման—Հովսեի Դեղեցկի մասին եղած սյուժեով։

Սամանյանների անկումից հետո գրական կենտրոնը տեղափոխվեց Ղազնու (այժմյան Ավղանստանի տերիտորիայում) սուլթան Մահմուդի (998—1030 թ. թ.) և նրա հաջորդների պալատը։ Հռչակավոր գիտնական, փիլիսոփա-բժիշկ բուխարացի Աբու-Ալի-Իբն-Սինը (Ավիցեննա, 980—1037 թ. թ.) ցանկանալով ազատվել ղազնեվյան պալատում ունեցած իր կախյալ դրությունից, փախավ Արևմտյան Իրան և հետագայում դարձավ Համադանի կառավարողի վեզիրը։ Ավիցեննայի գլխավոր աշխատությունը «Բուժման գիտության կանոն»-ը բժշկական մի մեծածավալ էնցիկլոպեդիա է։ Վիթխարի կուլտուրական դեր խաղացին նաև նրա փիլիսոփայական աշխատությունները, ինչպես օրինակ «Ապաքինման գիրք»ը, որն ընդգրկում էր այդ ժամանակվա համարյա բոլոր գիտական դիսցիպլինները։ Ավիցեննայի աշխատությունները կանուխ հայտնի դարձան Արևմտյան Եվրոպայում և մեծ ազդեցություն թողեցին միջնադարյան փիլիսոփայության վրա։ Մահմուդի պալատում հիմնական տոնը տալիս էր քասիդի խոշոր վարպետ բալխեցի Օնսուրին (վախճ. մոտ 1049 թ.)։ Մահմուդի արշավանքները գովերգող նրա քասիդները հանդիսանում են պալատական պոեզիայի օրինակներ։ Դրանց հիմնական նպատակն էր՝ ֆեոդալական ազնվականության կարգը կազմակերպել հօգուտ Մահմուդի և նրա զորախմբում ներգրավել ընտիր կովողներ։ Աչքի էին ընկնում նաև Օնսուրիի երկու ժամանակակիցները՝ իր բանաստեղծություններում գինի ու զգայական հաճույքներ երգող Մենուչեհրին (վախճ. մոտ 1050 թ.) և ընության նկարագրման վարպետ Ֆեռոխին (վախճ. մոտ 1038 թ.)։ Նա միաժամանակ և պարսկերեն լեզվով պոետիկայի առաջին կազմողն էր։ Խոշոր հետաքրքրություն է ներկայացնում Ասադիի (վախճ. 1030 ու 1041 թ. թ. միջև) ստեղծագործությունը, որը պոեզիայի մեջ մտցրեց հարավ-ֆրանսիական տենցոնները հիշեցնող «բանավեճերի» («Մոնազերե») առանձնահատուկ ժանրը («Արաբներ և պարսիկներ», «Ծերկինք և երկիր», «Նիզակ և աղեղ» և այլն)։ Ասադին գրեց նաև «Գերշասպ-Նամե» էպիկական պոեմը։ Ավելի ուշ շրջանի ղազնեվյան պոետներից արժանի են հիշատակման պանեգիրիստ Աբուլ Ֆարաջ Ռունին (վախճ. XII դ. սկզբին) և նրա աշակերտ Մաս ուդ-Սաադ-Սելմանը (վախճ. 1131 թ.), որն անմահացրեց իրեն բազմամյա բանտարկության ժամանակամիջոցում գրած իր բանտային էլեգիաներով։ Արձակն այն ժամանակներում շատ հատեստ տեղ էր գրավում։ Պահպանվել են՝ Սամանյանների վեզիր Աբու-Ալի Բալյամիի (վախճ. 996 թ.) արաբերենից վերամշակած համաշխարհային պատմությունը, Բեյհաքիի (մոտ 996—1077 թ. թ.) գրած՝ իր կենցաղային մանրամասնություններով բացառիկ հարուստ Ղազնեվյանների պատմությունը, ինչպես նաև յուրօրինակ պարսկական ծնավարության գիրքը՝ Քեյ-Քաուսի խրատների գիրքը, որը հայտնի է «Քաբուս-Նամե» անունով (սկսված է 1082 թ.)։

Սելջուկների օրոք (1035—1300 թ. թ.) պարսկական լիրիկան մեծ վերելք ապրեց։ Սելջուկների նվաճումներն ուղեկցվում էին դաժան և հյուծող պատերազմով, որը և որոշեց XI դ. գրականության հոռետեսական տոնը։ Լիրիկայում զարգանում է բանաստեղծությունների վարպետային տեխնիկան, օգտագործվում էին ժամանակի գիտության տարբեր ընագավառները՝ էֆեկտավոր համեմատությունների և մետաֆորների համար։ Սելջուկների օրոք լիրիկան ավելի ու ավելի է դեկորատիվ դառնում. առանց ընդարձակ ծանոթագրությունների՝ այդ ժամանակվա շատ ստեղծագործությունները պարզապես անհասկանալի են։ Պոեզիայի քաղաքական բովանդակությունն զգալիորեն նվազում է։ Չնայած որ սելջուկյան զինասիրական թյուրքական ծագում ուներ, գրական լեզուն պարսկերենն էր, որը մշակել էին Բուխարայի և Խորասանի պոետները դեռևս X դարում։ Իր մեծ փայլով աչքի էր ընկնում սելջուկների սիրելի էմիր Մոիզզիի (1058—1148/49 թ. թ.) պոեզիան։ Մոիզզիի «Դիվանը», որը շուրջ 15 հազար երկտող է կազմում, պարունակում է հանդիսավոր այնպիսի քասիդներ, որոնք նա նվիրում էր սուլթաններին ու նրանց մերձավորներին։ Նախորդ շրջանի փառահեղությունից հեռանալը մեծ չափով բացատրվում է նրանով, որ իրանական բնակչությունը շատ ավելի չափով, քան երբևիցե, հեռու էր կանգնած երկրի քաղաքական կյանքից։ Իր համար մեծ հռչակ վաստակեց «Սիրո արվեստի» մասին գրած իր պոեմով պոետ Ազրաքին (վախճ. 1130 թ.), ինչպես նաև պոետ Էդիբ Սաբիրը, որը բանաստեղծական գործունեությունից բացի՝ լրտեսի դեր էր կատարում խորեզմ-շահերի պալատում (մահապատժի է ենթարկված 1141 ու 1151 թ. թ. միջև)։ Պալատական քասիդը տեխնիկական կատարելության հասցրեց Աուհադ էդ-Դին Էնվերին (վախճ. 1189—1191 թ. թ.

միջև)՝ զուզերի կողմից Խորասանը կողոպտելու թեմայով հայտնի էլեգիայի հեղինակը («Խորասանի արցունքները»—ձոն առ սուլթան Սանջարա, որն այն ժամանակ գտնվում էր գերության մեջ)։ Խորեզմի պոետներից այդ նույն էպոխային են պատկանում պոետ և հանդարանության տեսաբան Ռեշիդ-Վետվաթը (ծն. մոտ 1090 թ.—վախճ. 1182 թ.), սամարղանդցի պոետ Սուզենին (վախճ. մոտ 1173 թ.), որն իր երգիծանքների մեջ չափից շատ սրամտությունների կողքին թույլ էր տալիս նաև պոռնոգրաֆիա։ Լեռնային Գուր շրջանում էր գործում Նիզամի Ասուզին, որն իր «Զորս զրույց»-ում արժեքավոր տեղեկություններ է թողել այդ ժամանակվա պալատի կյանքի մասին։ Սելջուկյան ժամանակաշրջանում էին գործում Զահիր Ֆարյաբին (վախճ. 1202 թ.), որի բանաստեղծություններն իրենց տեխնիկական ամբողջ կատարելությամբ հանդերձ ցուցաբերում էին անկման ցայտուն նշաններ, և «իմաստության ստեղծող» Քեմալ-էդ-Դին-Իսմայիլը (վախճ. 1237 թ.), որն իր կյանքի վերջում ճգնավոր դարձավ։ Արձակի բնագավառում սելջուկյան կայսրության միասնականության ժամանակաշրջանի ականավոր զրողը վեզիր Նիզամ-օլ-Մուլքն էր (վախճ. 1092 թ.)՝ «Սիասեթ-Նամեի» («Պետական կառավարման գրքի», 1091 թ.) հեղինակը, որը փայլուն գեղարվեստական ձևով շարադրեց պետական կառավարման հարցերը, իլյուստրացիայի ենթարկելով այդ պատմական օրինակներով։ Պարսկերենով, որը դարձել էր այդ ժամանակ համարյա ամբողջ Մերձավոր Արևելքի գրական լեզուն, XII դարում փայլուն կերպով սկսում է զարգանալ գրականությունն Ադրբեջանում։ Ադրբեջանական զրողներից հարկավոր է առաջին հերթին նշել Նիզամի Գյանջևիին (1141—1203 թ.թ.)՝ «Հնգյակ»-ի («Խամսե») հեղինակին, որը շատ երկար ժամանակով որոշեց էպիկական պոեզիայի զարգացման ուղին համարյա ամբողջ Մերձավոր Արևելքում։ Քասիդի մեծ վարպետ էր պոետ Խաքանին (վախճ. 1199 թ.). աչքի էին ընկնում նաև Աբուլ-Ալան, Ֆիլեքին և ուրիշները։

Այդ ժամանակաշրջանի պարսկական գրականության վրա հսկայական ազդեցություն գործեց սուֆիզմի միստիկական ուսմունքը, որն առաջանալով արաբական հողի վրա, Իսլամի հետ միասին անցավ Իրան և հաստատվեց գլխավորապես քաղաքային միջավայրում։ Սուֆիների միստիկան ստացավ կրոնական բնույթ և չէր վերածվում մի որոշակի քաղաքական շարժման։ Գոյություն ունեցող ֆեոդալական կարգերի նկատմամբ սուֆիական պոեզիայում եղած պասսիվ անբավականությունն ստանում էր իր «ես»-ի, իր «սիրո» պանթեիստական հաստատման ձևեր, ընդ որում դեպի աստվածությունն ունեցած ձգտումն արտահայտվում էր սիրո կարոտի կամ գինով արբենալու ձևով։ Սուֆիզմին բնորոշ է հոռետեսական շեշտված անտարբերությունը դեպի հասարակական կյանքը, դեպի նյութական աշխարհը։

Սուֆիզմի դեմ ուղղափառ իսլամի մղած սուր պայքարի ժամանակաշրջանից հետո սուֆիական պոեզիան սկսեց աստիճանաբար յուրացվել և կամաց-կամաց նույնիսկ պալատական պոեզիան ստացավ սուֆիական գունավորում։

Պոեզիայի մեջ սուֆիզմի առաջին ցայտուն արտահայտումները դիտվում են այն քառյակներում (ռուբայաթ), որ գրել էր Աբու-Սայիդը Խորասանի Մեյխենե քաղաքից (967—1049 թ.թ.). նա համառոտ գեղարվեստական ձևով հանրամատչելի էր դարձնում իր ուսմունքը։ Իր լիրիկայում բարձր գեղարվեստական վարպետության հասավ Հերատացի Էնսարին (1006—1088 թ.թ.)։ Նրա գլխավոր ստեղծագործությունը՝ ռիթմիկ արձակով գրված «Աղերսանքները» («Մոնաջաթ») լայն չափով տարածված էին ամբողջ Մերձավոր Արևելքում։ Պոետ Սենաիին է (1048/49—1141 թ. թ.) պատկանում «Ճշմարտության պարտեզ» դիդակտիկական պոեմը, որի մեջ փիլիսոփայական զրույցներն իլյուստրացիայի են ենթարկվում ոչ մեծ առակներով։ Էնսարիին ժամանակակից էր նշանավոր ճանապարհորդ, փիլիսոփա և պոետ Նասիրե-Խոսրովը (1004/05—1088 թ.թ.), որը նաև իսմայիլական միսիոներ էր (իսմայիլականների մասին տես՝ «Կրոն» բաժինը)։ Սիրիայում, Եգիպտոսում և Արաբիայում կատարած նրա ճանապարհորդությունները նկարագրող նրա «Ճանապարհորդությունների գիրքը» («Սեֆեր-Նամե») նշանակալի է որպես էպոխայի թե գրական և թե պատմական մի հիշատակարան։ Իր «Գիրք պայծառության» և «Գիրք երջանկության» պոեմներում Նասիրե-Խոսրովը զայրարար քննադատում է ֆեոդալական ազնվականությանը և կյանքի իդեալը տեսնում է արհեստավորների ու գլխավորապես՝ գյուղացիության կենցաղում։ Նասիրե-Խոսրովի քաղաքիդները ոչ ոքի չեն փառաբանում. նրանք շարադրում են իսմայիլական ուսմունքը և պարունակում են խստապահանջ բարոյականության քարոզ։ Նասիրե-Խոսրովի լայնորեն կրթված լինելը և նրա մեծ տաղանդը նրան դարձրին ֆեոդալական

աղնվականության վառնդավոր հակառակորդը։ Ուղղափառ իսլամի դրույթների հետ իր անհամաձայնությունն արտահայտելու համար սուֆիական ոճ էր օգտագործում նաև քաղաքային գրականության ամենից ավելի վառ ներկայացուցիչ, XII դարի ամենատաղանդավոր պոետ Օմար Խայամը (ծնվել է 1038—1048 թ. թ. միջև, վախճանվել է 1123 թ.)։ Օմար Խայամի անմահ քառյակներում (ռուբայաթ) վառ կերպով երևում է ազատամիտ պոետի, սխոլաստիկայի դեմ պայքարողի կերպարը, որի դեպի կյանքն ունեցած կրքոտ սիրուն հաջորդում են հոռետեսությունը, հուսահատության մռայլ կացությունը։ Պոետն առաջարկում է քանի տեղ չդնել կյանքի հակասությունները և վայելել կյանքի ամբողջ բերկրանքը։ Օմար Խայամի պոեզիան չափազանց լայն տարածում ստացավ Եվրոպայում ու Ամերիկայում՝ անգլերեն լեզվով է. Ֆիցջերալդի (վախճ. 1883 թ.) կատարած շատ հանճարեղ թարգմանությամբ։ Քաղաքային մյուս պոետ՝ սամարկանդցի Սուզենին, որի մասին հիշվել էր առաջ, իր ծերության հասակում դիմեց իր երիտասարդական շրջանի «մոլորություններից» հրաժարվելուն, հոռետեսությանը և մռայլ միստիցիզմի։ Չհաշտվելով իրականության հետ, նա առաջարկում էր երեսը շուռ տալ այդ իրականությունից և զբաղվել ինքնակատարելագործմամբ։ Իրական աշխարհից սուֆիական հեռացման տենդությունն ամենից ավելի լրիվ շարադրեց իր ալլեգորիկ պոեմներում («Թռչունային զրույցներ» և ուրիշները) Ֆերիդեդդին Ատթարը (1119—1230 թ. թ.), որն այդ պոեմներում լայնորեն օգտագործեց ֆոլկլորի հարստությունները։ Նա հեղինակել է նաև «Նմուշներ սրբերի մասին» (ճգնավոր սուֆիների կենցաղագրություն) գիրքը։

Սուֆիական պոեմն իր ամենաբարձր կատարելության հասավ Փոքր Ասիայում՝ ականավոր լիրիկ Ջելալ-էդ-Դին Ռումիի (1207—1273 թ.թ.) գրվածքներում։ Նրա հռչակավոր «Մեսնեվի»-ն (երկտողանի պոեմը) համակված է ջերմ սիրով դեպի կյանքը և միաժամանակ հանդիսանում է գրականության մեջ սուֆիական պանթեիզմի գաղափարների ամենից ավելի լրիվ արտահայտությունը։ Ջելալ-էդ-Դին Ռումիի լիրիկան համարյա ամբողջապես նվիրված է իր ընկեր և ուսուցիչ Շեմսեդդին Թերրիզիի հիշատակը ողբալուն։

Այդ ժամանակաշրջանի արձակ ստեղծագործությունների մեծ մասը գիտական և դիդակտիկական աշխատություններ են։

Կարելի է նշել «Կալիլա և Դիմնա»-յի վերամշակումը, որը Թաբարիստանի բարբառով կատարել էր Մերզբան-իբն-Ռոստեմը (X դ. վերջ)։ Օրիգինալը մեզ չի հասել, պահպանվել է միայն Սաադ Վերավինիի (մոտավորապես 1210—1215 թ. թ.) կատարած նոր-պարսկական թարգմանությունը։ Դիդակտիկան նոպատակներ էր հետապնդում նաև «Կալիլա և Դիմնա»-յի այն մշակումը, որը կատարել էր Աբուլ-Մեալի Նասրոլլահանը։ Նույն այդ ժանրին է պատկանում նաև Հոսեյին-ալ-Մուայադիի «Աղետից հետո ուրախություն» գիրքը (գրված է 1155 թ.), որը պատմում է փորձանքներից ազատվելու միքանի դեպքերի մասին։ XII դ. վերջում ստեղծվեցին նախախալամական ավանդությունները մասամբ օգտագործող ֆանտաստիկական մի շարք վեպեր, ինչպես, օրինակ, Սաադաք Շիրազացու «Գիրքը Սամաք Իյարի մասին» (գրված է 1189թ.), Էմիրե Խամզայի վեպը մարգարեի քեռու մասին, որն օգտագործեցին վրացական հեղինակները Ամիրանի վեպում, հեքիաթը արքայազն Բախտիարի մասին և վիպակը Թայ ցեղից սերող առատաձեռն բեդուին Խաթիմի մասին։ Մոնղոլական տիրապետության տարիները ծանր հարված հասցրեցին պարսկական գրականությանը։ Ենթարկեցման երկարատև պրոցեսն (1219 թվից) ուղեկցվում էր երկրի ավերումով։ Պարբկաստանում մոնղոլական դինաստիայի հիմնադիրը՝ Հուլաղուն էր, որի զորքերը 1258 թ. քարուքանդ արեցին և այրեցին Բաղդադը։ XIII դ. վերջում մոնղոլների վրա ավելի զարգացած հասարակական հարաբերությունների և պարսկական ավելի բարձր կուլտուրայի ազդեցությունը վերջնականապես պարզորոշվեց։ Պարսկերենը շարունակում էր մնալ որպես գրական լեզու։ Սակայն գեղարվեստական գրականությունը թույլ էր զարգանում։ Մանր թագավորությունների անհետացման հետ միասին ավելի է պակասում պալատական պոետների գործունեությունը։ Հոգևորականության թուլանալը նրան հնարավորություն չէր տալիս հետապնդելու սուֆիական պրոպագանդիստներին և սուֆիական պոեզիան ավելի ուժեղ էր զարգանում։ Սպանությունների, դաժանությունների ու ավերումների ենթարկվող ընակչությունը մխիթարությունը փնտռում էր միստիկայում, երկրային ամեն ինչի մասին եղած ունայնության ուսմունքի մեջ։ Ջելալ-էդ-Դին Ռումիի (չնայած որ նա գործում է մոնղոլներից հեռու՝ Փոքր Ասիայում) բանաստեղծությունների մեջ տրված են «ահեղ դատաստանի» վառ պատկերները։ Իրանում և նրան մերձակա երկրը-

ներում բացառիկ ժողովրդականություն ձեռք բերեց այդ ժամանակաշրջանի խոշորագույն պոետ Սաադին (1184—1292 թ. թ.)։ Սաադին ծնվել է Շիրազում, եղել է դերվիշ, շատ թափառել է, եղել է գերության մեջ Սիրիայի խաչակիրների ձեռքին։ Ծերհասակում, Շիրազ վերադառնալուց հետո, նա գրեց իր գլխավոր ստեղծագործությունները՝ «Գյուլիստանը» («Վարդերի պարտեզ», 1257 թ.) և «Բուստանը» («Պաղատու այգի»)։ «Գյուլիստանը» խրատական այնպիսի պատմվածքների ժողովածու է, որոնք գրված են բանաստեղծական կարճ կտորներով ընդմիջվող ռիթմիկ արձակով։ Սաադին, կենցաղային իմաստության ուսուցիչ է։ Նրա ստեղծագործությունները ցույց են տալիս, թե քաղաքացին աշխատավորն այդ ծանր ժամանակներում ինչպիսի ծուռ ու մուռ ճանապարհներով կարող էր աղահովել իր հարաբերական անվտանգությունը։ Ամենաբազմազան կենցաղային անցքերից հետևեցնում էր մի իմաստուն խրատ, մի ուղեցույց՝ ծանր ու խղճուկ կյանքում։ «Բուստանը» համակված է պանթեիզմով, ամբողջապես գրված է ոտանավորներով։ Սաադիի լիրիկան հոյակապ է՝ վերին աստիճանի երաժշտական ու անբասիր ձևի։ Գաղելների նրա չորս ժողովածուն նշեցին պարսկական լիրիկական պոեզիայի հետագա ուղին։ Արաբական լեզվով նրա բանաստեղծությունների նշանակալի է քասիդի ձևով գրած էլեգիան՝ մոնղոլների կողմից Բաղդադը գրավելու առթիվ։ XIII դարի երրորդ առաջնակարգ պոետը՝ պարսկական լեզվով գրող հնդկահայ պոետ Էմիր-Խոսրով Դեհլեվին է (1253—1325 թ.թ.)։ Իր «Հնդյակ» ռոմանտիկական պոեմներում նա ակներևորեն նմանվում էր Նիզամիին։ Մոնղոլների օրոք մեծապես զարգացավ պատմագրությունը։ Իրանական մոնղոլների վեզիր Ռեշիդեդդինը (1245—1318 թ.թ.) պարսկերեն լեզվով կազմեց և խմբագրեց հայկական մի «Տարեգրությունների հավաքածու» 1310 թվին, որն ընդգրկում է մոնղոլների և նրանց հետ կապված ժողովուրդների պատմությունը։ Գովասանական տոնով է կազմված նաև մոնղոլական ժամանակաշրջանի խոշոր աստիճանավոր Ջովեյնիի (1226—1283 թ.թ.) «Աշխարհակալի պատմությունը», որը մոնղոլական անցքերի տարեգրությունը հասցրեց մինչև 1265 թ.։ Ջովեյնիի շարունակողն էր՝ Զինգիս-խանի արշավանքները նկարագրող Վեսսաֆը։ Սաադիի ժամանակակիցներից աչքի էր ընկնում Իրաքին (վախճ. 1289 թ.) հռչակավոր «Սիրահարվածների գրքի» հեղինակը։ Թիմուրի օրոք՝ XIV դ. երկրորդ կեսում նրանից աշխուժանում է պալատական պոեզիան։ Բանաստեղծական գործունեությունը կենտրոնանում է տեղական դինաստիաների պալատներում։ Էպոխայի տաղանդավոր երգիծաբանը Օբեյդ-Զաքանին էր (վախճ. 1371 թ.)։ Նա հեղինակել է երգիծական համարձակ ստեղծագործություններ, որոնք ուղղված էին արտոնյալ դասակարգերի դեմ, հոգևորականության, ներառյալ նաև սուֆիական դերվիշների դեմ։ Նրա երգիծանքներից մեկը՝ «Մուկն ու կատուն», զայրույթով ծաղրում է սուֆիական սուտ ճգնավորությունը։ XIV դարի խոշորագույն պոետ, սիրո, զեղեցկության և գինու երգիչ, մեծագույն լիրիկ Հաֆիզը (վախճ. 1389 թ.) շատ ժամանակով պարսկական պոեզիայի մեջ հաստատեց գազելի (սիրերգ) ժանրը։ Փայլուն կերպով օգտագործելով սուֆիական պոեզիայի ընդհանուր բառապաշարը և մետաֆորները, Հաֆիզն ստեղծեց ամենանուրբ կրքով, կենդանի ու անկեղծ զգացմունքներով համակված, միստիկայից համարյա զուրկ պոեզիայի կատարյալ օրինակներ։ Նրա պարզ ու հասկանալի լեզուն պահպանեց ժողովրդական երգի վճիռությունը։ Հաֆիզի գազելները տարածվեցին ամբողջ Մերձավոր Արևելքում և առաջացրեց մեծաքանակ նմանողություններ ամբողջ XV դարի ընթացքում։ XV դ. վերջում գազելի ընդունված մետաֆորները ու համեմատությունները կամաց-կամաց վերածվեցին շտամպի, տեխնիկական վարպետությունը ձեռք բերեց ավելի մեծ չափով ինքնարժեք նշանակություն։ Լայնորեն տարածվեցին խրոնոգրամմաները (թարիխ) և հանելուկները (մուամմա)։

Հերատում, Թիմուրի հետնորդների օրոք, գործում էր պարսկական վերջին փայլուն պոետը՝ Ջամին (1414—1492 թ. թ.), որը թողել է երեք լիրիկական «Դիվան», յոթը մեծ պոեմ, որոնց նա անվանում էր «Յոթը գահ» (Մեծ Արջ աստղային համակարգության անվանումը) և աստվածաբանությանն ու սուֆիական փիլիսոփայությանը վերաբերող մի շարք աշխատություններ։ Ջամին նմանվում էր պարսկական պոեզիայի կլասիկ օրինակներին (Նիզամի, Ֆիրդուսի, Ավիցեննա)։ Ջամիի լիրիկան գտնվում է Հաֆիզի ազդեցության տակ. նրա սիրային գազելները նրբագեղ են ու վարպետորեն կատարյալ։ Այդ ժամանակվա արձակում լայն չափով տարածվեց սեթևեթ գունագեղ ոճը՝ նույնքան շինծու և խճողված, որքան որ մոնղոլական ժամանակաշրջանի պատմաբանների ոճը։ Այդպիսի ոճի ամենից ավելի ցայտուն նմուշը՝ «Կալիլա և Դիմնա»-յի այն մշակումն էր, որը կատա-

րել էր Հոսեյին Վաիզ Քաշեֆին (վախճ. 1504 թ.)։ «Բանուփաստղի լուսատու» անունն ստացած այդ մշակումը, որ բացառիկ դժվար էր ընթերցանության համար, Արևելքում ընդհուպ մինչև XIX դարը համարվում էր կատարելության գագաթ։ Դուուլեթշահի (վախճ. մոտ 1494—1495 թ.թ.) «Թուղթ բանաստեղծների մասին» մեծ աշխատությունը տեղեկությունների մի հավաքածու էր պարսկական ամենից ավելի հայտնի պոետների մասին և պարսկական գրականության ուսումնասիրության աղբյուր։

Կլասիկ ժամանակաշրջանի (X—XV դարեր) պարսկական գրականությունն ունի համաշխարհային նշանակություն. նա հսկայական ազդեցություն թողեց թուրքական, հնդկական և այլ գրականությունների վրա։

Հետևյալ XVI դարի պոետական ստեղծագործությունն ավելի շատ կրկնում էր պարսկական կլասիկ գրականությունը։ Պարսկերեն գրող ամենից կարկառուն պոետները խմբավորվում էին Մեծ Մոգոլների պալատի շուրջը Հնդկաստանում։ Այդ պոետներն էին՝ Օրֆին (վախճ. 1591 թ.), Ֆեյզին (1547—1595 թ.թ.), Թալեբ-Ամոլին (վախճ. 1626 կամ 1627 թ.) և մինչև այժմ էլ իր ժողովրդականությունը պահպանած Մայեբ Թերբիզին (վախճ. 1677 թ. կամ 1678 թ.)։ Սուֆիզմը, որը Սեֆեվյան դինաստիայի էպոխայում (1502—1736 թ.թ.) հալածանքների էր ենթարկվում, իր տեղը զիջեց շիիթական կղերամտությանը։ Ֆանատիկական հոգևորականության հալածանքներից շատ մեծ դժվարությամբ էր թաքնվում Իրանի վերջին խոշոր փիլիսոփան՝ մոլլա Սադրան (վախճ. 1640 կամ 1641 թ.)։

XVIII դ. վերջում ամրապնդված Կաջարական դինաստիան առերևույթ առաջացրեց պալատական պոեզիայի նոր աշխուժացում։ XIX դ. կեսերից Պարսկաստանն ավելի մեծ չափով է շփվում եվրոպական կուլտուրայի հետ։ XIX դարում ավելի մեծ չափով են վերացվում տրադիցիոն ձևերը, պարսկական գրականության մեջ առաջանում են ռեալիստական հոսանքներ։ Պոետական լեզուն պարզանում է, մաքրվում է սեթևեթությունից և ալեգորիզմի մշուշապատությունից։ Ռեալիզմի ձգտումն արտահայտվում է նույնիսկ տրադիցիոն ձևերի շրջանակներում քաղաքացած պալատական այնպիսի պոետների ստեղծագործություններում, ինչպիսին էր ամենատորաքարշ ներբողներ գրող Քաանին (վախճ. 1854 թ.), ինչպիսին էր Սաբան (վախճ. 1823 թ.), ինչպիսին էր Վեսալը (վախճ. 1846 թ.) և ուրիշները։ Կաջարական ադմինիստրացիայի կամայականություններն իր կաշվի վրա զգացած Շեյբանին (վախճ. 1891 թ.) հանդես է գալիս որպես կաջարական ռեժիմի խիստ մեղադրող և բացահայտ կերպով մատնանշում է իշխանավորների քայքայումը։ Յաղման (վախճ. 1860 թ.) սկսելով ֆեոդալական ազնվականության հայցեին լուսանքներով լի երգիծանքից, վերջացրեց մռայլ հոռետեսությամբ ժխտելով երջանկության հնարավորությունը երկրում։ Գրականության համար մեծ նշանակություն ուներ Թեհրանում «Դարյոլ-Ֆոնունա» հիմնելը (1852 թ.). դա ուսումնական առաջին այն հաստատությունն էր, որը դասավանդելու համար հրավիրեց եվրոպացիներին։ Նոր դիսցիպլիններ մտցնելն առաջացրեց դասագրքեր թարգմանելու անհրաժեշտությունը։ Թարգմանվում էին նաև վեպեր, առավելապես ֆրանսական վեպեր, և թարգմանական այդ գրականությունը մեծ ազդեցություն թողեց պարսկական գրականության վրա։ XIX դ. վերջին քառորդում քաղաքական և հասարակական մեծ դեր էին խաղում միքանի թերթեր. դրանից ամենից ավելի նշանակալին է «Բանուն» թերթը, որը հրատարակում էր իրանական հայտնի գործիչ Մալքոմ-խանը (վախճ. 1908 թ.) Լոնդոնում 1890 թվին։ Արժանի է առանձնահատուկ ուշադրության նրա ունեցած ձգտումը՝ ռեֆորմի ենթարկելու գրական լեզուն։

Պարսկական գրականության մեջ բեկում առաջացավ 1905—1911 թ.թ. ռևոլուցիայի կապակցությամբ, որը որոշեց պարսկական գրականության հասարակական բնույթը։ Ռևոլուցիոն պայքարի հետևանքով ծաղկեց մամուլը։ Այդ ժամանակաշրջանի առանձնահատկությունն էր՝ գրական լեզվի մոտենալը ժողովրդական խոսքին։ Գրականությունն ավելի առաջ գնաց իրականության ռեալիստական նկարագրության ուղղությամբ։ Արձակագիրների և պոետների մեջ առանձնապես աչքի էր ընկնում ժողովրդական ռևոլուցիոն օրգանի՝ «Իսրաֆիլի փող»-ի (1907—1908 թ. թ.) աշխատակից, ֆելիետոնիստ Ալի-Էքբեր-Դեխ-Խոդան, որի գրվածքներն իր ժամանակի անցքերի վառվռուն և համարձակ արձագանքներն էին։ Նրա արտակարգ կենդանի և դիպուկ լեզուն, անհատներ և բնավորություններ ուրվագծելու ժամանակ նրա ցուցաբերած դիտողականությունը, դրելու նրա առանձնահատուկ ոճը բավականին նմանողություններ առաջացրեցին (Էշրեֆ Դիշյանի և ուրիշները)։ Այդ ժամա-

նակաշրջանում հանդես եկած գրողներից հարկավոր է նշել պոետ Արեֆին, Մոհամմեդ Թաղիին, Յախյա Դավլեթաբադիին, Լահութիին։ 1912—1914 թ.թ. ռեակցիան վերջ տվեց ռևոլուցիոն ազատ մտմուլին։

Գրական հին ձևերի դեմ մղած պայքարը կապված էր նաև պարսկական դրամատուրգիայի առաջացման հետ։ Պարսկական լեզվով թարգմանվեցին ադրբեջանական մեծ երգիծաբան Միրզա Ֆաթալի (Ֆեթ-Ալի) Ախունդովի կոմեդիաները, որոնց և հաջորդեցին Մալքոմ-խանի քաղաքական փայլուն կոմեդիաները։ Մշտական թատրոնի բացակայությունը խանգարում էր դրամատուրգիայի զարգացմանը։ 1926 թվից սկսած երևան են գալիս Խալխալիի, Նեֆիսիի և Հիդայեթի պատմական առանձին դրամաները։

Գրական աշխուժ գործունեության վերսկսումը 20-ական թվականներին սերտորեն կապված է պարսկական վեպի և վիպակի հանդես գալու հետ։ 1922 թվին լույս տեսավ Զեմալ-Զադեի երգիծական փայլուն նովելների ժողովածուն՝ «Եղած ու չեղած բաներ», որի մեջ նա մեծ վարպետությամբ, ժողովրդական կենդանի լեզվով նկարագրում էր իր ժամանակվա պարսկական իրականության տեսարաններն ու տիպերը։ Նույն 1922 թվին սկսեց տպագրվել Մոֆշեքե-Քազեմիի «Թեհրանի խուլ անկյունները» վեպը, 1925 թվին՝ Աբբաս-Խալիլիի «Դաան բախտավիճակ» վեպը։ Երկու վեպերն էլ համակված են բողոքով իրանական կնոջ իրավազրկության դեմ և տալիս են իրանական ազնվականության նեխման ցայտուն պատկերները։ Այդ վեպերն առաջացրեցին մեծ քանակությամբ նմանողություններ (Զուգիի «Բռնի ամուսնությունը», Շերիֆի «Խոմայ և Խոմայուն»-ը, Յախյա Դավլեթաբադիի «Շեհրնազը» և այլն)։

Մեծ հաջողություն ունեցան Իրեջ Միրզայի (վախճ. 1926 թ.) բանաստեղծությունները, որոնց մեջ նա ծաղրանքով նկարագրում էր պարսկական կյանքի մի շարք հիվանդոտ կողմերը՝ հոգևորականների կեղծ բարեպաշտությունը, կենցաղի անշարժությունը, ֆանատիզմը և կրոնական մոլեռանդությունը, կնոջ ճորտացումը։ Նովատորների մեջ կարելի է նշել տաղանդավոր պոետ Ռեշիդ Յասեմիին (ծն. 1897 թ.), որը հաղորդում էր պարսկական կենցաղի պոեզիան։ Պոետների մեջ աչքի են ընկնում նաև—իր բանաստեղծություններն իրանական գյուղացիությանը նվիրած Նիման, «Էրմեղան» ժուռնալի հրատարակիչ Վահիդ Դեստ-Գերդին, պոետեսսա Փերվինը և «Իդեալ» պոեմի հեղինակ Միրզադե Էշքին (1894—1924 թ.թ.)։ ՍՍՌՄ-ում գործող պոետ Լահութին (ծն. 1887 թ.) պարսկերեն լեզվով գրեց այնպիսի ստեղծագործություններ, որոնք նրան կանգնեցրին ինչպես պարսկական, այնպես էլ սովետական պոետների առաջին շարքերում։

1919 թվից սկսած լույս տեսան մի շարք պատմական վեպեր, որոնց մեջ առավել հետաքրքրություն են գրավում Բադիի, Սենյեթի-Զադեի և Խոսրեվիի գրվածքները։ Գյուղացիական հարցին է նվիրված Խոդադադի «Գյուղացու սև բախտը» վեպը (հրատ՝ 1927 թ.)։ Ֆեոդալիզմի յուրօրինակ քննադատությունը տվեց Սենյեթի-Զադեն իր «Ռոստեմը XXII դարում» ֆանտաստիկական վեպում։ 1934 թվին լույս տեսավ Մեսյուդի «Ամենօրյա հացի որոնումների մեջ» նշանավոր տրիլոգիան, որը նկարագրում է գործազուրկների դրությունն Իրանում։ Նովելլիստներից աչքի են ընկնում՝ Ս. Հիդայեթը, Աղա Բոզորգ Ալեվին և ուրիշները։

Արվեստ։ Իրանի տերիտորիայում եղած արվեստի հնագույն հուշարձանները վերաբերում են մինչև քր. թվ. 4-րդ հազարամյակի վերջին և 3-րդ հազարամյակի սկզբին (Սարպուլի ժայռային քանդակները, Կուրանդունի բարձրաքանդակները, ինչպես նաև նախապատմական կերամիկան)։ Սակայն պարսկական արվեստը բառիս բուն նշանակությամբ, առաջացավ միայն Աքեմենյան կայսրության (550—331 թ. թ. մինչև քր. թվ.) մեջ։ Այդ արվեստի տարբերիչ գիծը՝ նրա աշխարհիկ, պալատական քնույթն էր։ Նույնիսկ տաճարներ չկային Պարսկաստանում, կային միայն զոհասեղաններ։ Թագավորի համար արվեստագործը կառուցում էր պալատներ կամ դամբարաններ, քանդակագործությամբ նկարագրելով նրա սիրագործությունները կամ նրա կյանքից առանձին տեսարաններ։

Աքեմենյան շրջանի ճարտարապետությունը բնորոշվում էր մեծ փառահեղությամբ (օրինակ՝ Պասարգադում կառուցած Կյուրոսի դամբարանը՝ քարե աստիճանաձև հիմքի վրա զետեղված երկլանջանի սարկոֆագի ձևով)։ Պալատները (Պերսեպոլիսում, Սուզում) կառուցվում էին քարե բարձր հարթակների վրա, շինվում էին հում աղյուսով և միայն մասնակիորեն էին երեսապատվում քարով։ Յուրատեսակ ճարտարապետական մի ձև էր ապադանան (բազմասյուն դահլիճներ թագավորի ընդունելությունների համար), ինքնատիպ էին խոյակները, որոնք կառուցվում էին երկու զույգ ոլորազարդերի ու դրանց վրա դրված

կամրջասյունակների ձևով և լոտոսանման ձև ունեցող պատվանդանը։ Արվեստի մյուս տեսակներից մեծ չափով զարգացավ բարձրաքանդակը (ռելեֆ)։ Առանձնապես նշանակալի են Պերսեպոլիսի պալատի բարձրաքանդակները, որոնք նկարագրում են պարսկական թագավորին նվերներ բերող զանազան ժողովուրդների թափորը, գազանների կռիվ և այլն։ Սուզում հայտնաբերված են ողորկված աղյուսներից պատրաստված բարձրաքանդակներ, որոնց վրա պատկերված են աղեղնավորներ, քայլող առյուծներ և թևավոր եղներ։

Պարթևական կամ արշակունյան էպոխայում (մինչև քր. թվ. III դ.—քր. թվ. III դ.), որը դեռևս բավականաչափ ուսումնասիրված չէ, դիտվում է հելլենական տարրերի ուժեղացում։ Սակայն պարսկական արվեստի յուրօրինակությունը չի անհետանում։ Ճարտարապետական հուշարձաններից առանձնապես նշանակալի է Խաթրայի քարակերտ պալատը (քր. թվ. I—II դ. դ.), որն ունի հելլենական դեկորատիվ տարրեր (կառնիզներ, պրոֆիլներ)։

Իրանի արվեստը համաշխարհային նշանակություն ուներ Սասանյան կենտրոնական ֆեոդալական միապետության ժամանակաշրջանում (224—651 թ. թ.)։ Ֆիրուզաբադի (III դ.) և Սեթվեստանի (V դ.) պալատներում պատահում են գմբեթաձև ծածկեր։ Հոյակապ էր Սասանյանների մայրաքաղաք Քթեսիֆոնի պալատն իր վիթխարի մուտքի կամարով, որը նախատիպ դարձավ իրանական ավելի ուշ կառուցումների մուտքի կամարների համար, և իր հսկայական ընդունարանով։ Քթեսիֆոնում, Դամգանում և Քիշում կատարած վերջին պեղումների ժամանակ հայտնաբերվեցին բարձրաքանդակներ, որոնց վրա պատկերված են որսորդություն, կանացի կիսապատկերներ, արջ, հովազ, թռչուններ շրջանակների մեջ և այլն։ Արևմտյան Իրանում գտնվող Թաք-ե-Բուստանի (V դ. վերջը) որսորդական տեսարաններում մշակվել էր միանդամայն ինքնօրինակ մի ոճ, որը հագեցված էր շարժումով և նրբանկատ դիտողականությամբ կենդանիների պատկերման ժամանակ։ Նշանակալի են արծաթից և բրոնզից պատրաստված այն իրերը, որոնց վրա պատկերված կային տեսարաններ ինչպես թագավորի կյանքից (որսորդություն, արքունիքի տեսարաններ), այնպես էլ առասպելաբանությունից։ Սասանյան արծաթյա իրերի աշխարհում եղած լավագույն ժողովածուն գտնվում է Լենինգրադի Պետական էրմիտաժում։

Սասանյան արվեստի տրադիցիաները շարունակում էին մի շարք դարերի ընթացքում ապրել Իրանի արվեստի մեջ արաբական նվաճումներից հետո։ Բյուզանդիայի միջոցով նրանք տարածվեցին Արևմուտքում, արաբների կողմից Իրանը նվաճելու ժամանակ՝ Արևելյան Անդրկովկասում։ Կենտրոնական Ասիայի միջոով սասանյան ազդեցություններն իրենց համար ճանապարհ հարթեցին նաև դեպի Հեռավոր Արևելք։

Պարսկական արվեստի զարգացման նոր էտապը կապված է արաբական նվաճումների և իսլամի տարածման հետ։ Երևելի կրոնական նշանակություն ունեցող շենքեր՝ մզկիթները՝ Որպես շինանյութ ամենից հաճախ ծառայում էր աղյուսը։ Վաղ հուշարձանները կարելի է բաժանել երկու խմբի։ Առաջին խմբին են վերաբերում վաղ-արաբական տիպի հատակագիծ ունեցող շինությունները (ներքին բակով), որոնք կառուցված էին սասանյան Իրանից ժառանգած տրադիցիաների հիմունքներով։ Այդպիսին էր Թարիխ-Խանեն Դամգանում, Ռեի և Դեմավենդի մզկիթները։ Երկրորդ խումբը կազմում են կամարակապ բաց դահլիճ ունեցող մզկիթները (Նեյրիզում—951 թ., Ղազվինում, Էրդեստանում)։ Այդ շինությունների հիմքում դրված է կառուցումների բուն իրանական տիպը. բաց դահլիճը մի նմանություն է սասանյան դահլիճին, բայց զորոաստրական տաճարներում այնտեղ փոխարինված է միհրաբով։ Վաղ մզկիթներից հետաքրքրական են՝ Շիրազի մզկիթը (894թ.), Նաինայի մզկիթը (IX դ.), որը ներսից շքեղ զարդարված է, և «Մեսջեդե-Ջամենն»՝ ժողովային մզկիթը Սպահանում։ Իրանական ճարտարապետության մի յուրահատուկ տիպը դամբանական աշտարակներն են՝ Գոմբեդե-Կաբուսը (997 թ.), որն ունի կոնաձև ծածկ և ուղղահայաց շատ խոշոր ելուստներ կլոր աշտարակի կողմերում. Թաղկանում կառուցած կոնաձև ծածկով աշտարակը (ունի զարդանկարային աղյուսե երեսապատում և որի արտաքին պատերը մշակված են կիսասյուներով), ինչպես նաև նորից հայտնագործած աշտարակներն Էրբերքուհեում (1056 թ.—հատակագիծն ութկողմանի է, ունի կլոր գմբեթ և ստալակտիտային ֆրիզ), Հյուսիսային Իրանի Լաջիմե քաղաքում (1022 թ.)։ Գմբեթային մավզոլեյներից հարկավոր է նշել Սուլթանիեում կառուցած Ուլջայթու (1304—1316 թ. թ.) մավզոլեյը—ութկողմանի մի շինություն, որն ունի սլաքավոր գմբեթ։ Կենտրոնական գմբեթ և իր ներսում մի քանի շարք կամարակապ սրահներ ունեցող մզկիթի ցայտուն մի ն-

Ի XV դ. կառուցած մզկիթը Թավրիզում։ Որպես ներքին բակ և իր չորս կողմերից յուրաքանչյուրում սլաքավոր պորտալ ունեցող Սեֆեվյան էպոխայում (XVI—XVII դ. դ.) իր վերջնական զարգացումն ստացած մզկիթի օրինակ կարող է ծառայել շահի մզկիթը Սպահանում՝ որը կառուցված է XVII դ. սկզբում։ Վաղ ժամանակաշրջանում ճարտարապետական դեկորացիայի մեջ կիրառվում էին ադյուսե երեսապատումները և սվաղի վրա կատարած փորագրությունները (ստուկկո), XII դարից սկսած հանդես եկավ հախճապյուսե երեսապատումը, որը շքեղ զարդացման հասավ XVI—XVII դարերում։

Այդ ժամանակվա քանդակագործությունը շատ չզարգացավ Իրանում։ Բայց և այնպես, կարելի է նշել մարդու պատկերներ ունեցող ստուկկոների մանր քանդակագործության գոյությունը XII—XIII դարերում և XI—XII բարձրաքանդակները դաղանների պատկերումներով (Սավելի քանդակ-ստուկկային ֆրիզը, որը ներկայացնում է պալատականներին՝ գահի վրա նստած թագավորի շուրջը, Ռեյի պանտեոն)։

Ֆեոդալական էպոխայի իրանական նկարչությունը գոյություն ուներ որպես գրքային մանրանկարչություն և որմնանկարչություն։ Գրքային մանրանկարչությունը միմիայն արքունիքի և բարձր աղնվականության համար էր և այդ պատճառով էլ այնտեղ չէր պահպանվում իսլամի այն պատվիրանը, որն արգելում էր նկարել շնչավոր էակներ։ Նկարազարդվում էին բացառապես աշխարհիկ բովանդակություն ունեցող գրքերը։ Ղուրանը զարդարվում էր միմիայն զարտավկաներով և կանցովկաներով։ Ֆեոդալական Իրանի մանրանկարչությունը կարելի է բաժանել խրոնոլոգիական հինգ հիմնական խմբի՝ նախամոնղոլական (XII դ. սկզբին), մոնղոլների տիրապետության ժամանակաշրջանի (1258—1335 թ. թ.), Թիմուրական (XIV—XV դ. դ.), վաղսեֆեվական (Թավրիզի մանրանկարները, XVI դ.), սեֆեվական (XVII դ. Սպահանում)։ Մոնղոլական ժամանակաշրջանի մանրանկարչությունը կարելի է բաժանել հետևյալ երեք հիմնական խմբի՝ 1) չինական արվեստի գերակշռող ազդեցություն ունեցող (լավագույն օրինակներն են՝ Լոնդոնում և Էդինբուրգում պահվող XIV դ. սկզբի Ռեշիդեդդինի խրոնիկանները, մոնղոլական խանների պալատական արվեստանոցների աշխատությունները Թավրիզում), 2) Զուտ իրանական տարրեր ունեցող (լավագույն օրինակն է՝ «Շահ-Նամեն» 1333 թ., Լենինգրադում՝ Հանրային

գրադարանում և 3) այնպիսի մանրանկարները, որոնց մեջ հինիրանական ոճը միաձուլվելով չինականին ստանում է ինքնուրույն գեղարվեստական լեզու։ Թիմուրյան էպոխայում հայտնի էին մանրանկարչության երկու դպրոցներ՝ մեկը Հերատ կենտրոնով, մյուսը՝ Շիրազ կենտրոնով։ Առաջինի տարբերիչ գծերն էին՝ բազմապատկերությունը, դույների առանձնակի նրբությունը, տարածության պայմանական ըմբռնումը, սակայն դրանց հետ միասին նկատելի էր հետաքրքրությունը դեպի պեյզաժը և ռեալիստորեն մեկնաբանված մանրամասնությունները։ Սպահանում զարգացած ուշ-սեֆեվյան դպրոցում XVI դ. վերջից սկսած արդեն արտահայտվում են արևմտա-եվրոպական արվեստի ազդեցության գծերը։ Պաշտամունքային շենքերի որմնանկարները ունեին զուտ օրնամենտային բնույթ, պալատների որմնանկարները պատկերանում էին պատմությունից վերցրած թեմաներ, ինչպես նաև պալատական կյանքի տեսարաններ։ Դրա հնագույն նմուշները, որոնք գտնվում են Սպահանի Ալի-Քանու և Չեհել-Սոթուն պալատներում, պատկանում են XVII դարին։

Իրանում մեծ չափով զարգացան կիրառական արվեստները (գորգեր, գործվածքներ, ասեղնագործություն, կերամիկա, մետաղից, ապակուց և կաշվից պատրաստված իրեր, փորագրություն փայտի վրա և այլն)։ Գեղարվեստական առանձնահատուկ արժեք են ներկայացնում XVI դարի արքունի ոճի մետաքսյա գորգերը, որոնց վրա պատկերված են որսորդական տեսարաններ, դաղաններ, վազեր, պարտեզներ։ Գեղարվեստական տեսակետից ամենից ավելի կարևորը հյուսիս-իրանական խումբն է, որի արտադրության կենտրոնը Թավրիզն էր։ XVI—XVII դարերի Հարավային Իրանի գորգերն իրենց նատուրալիստական մանրամասնություններով և բուսական մոտիվների հարստությամբ հանդերձ կրում էին իրենց վրա հնդկական ազդեցության գծերը։ Արևելա-իրանական գորգերի վրա դիտվում է բուսական օրնամենտի չինական մոտեցման ընդհանրապես չինական այնպիսի առանձին մոտիվների կիրառումը, որոնք հաճախակի էին պատահում այդ ժամանակվա իրանական գորգերի վրա։ Իրանական գործվածքներից ամենից ավելի հետաքրքրական էին XVI—XVII դարերի պատկերավոր գործվածքները, որոնք նման էին մանրանկարներին, որովհետև գործվածքի և մանրանկարների պատկերների էսքիզները հաճախ հենց միևնույն նկարիչն էր կատարում։ Իրանական կերամիկայի ծաղկումը տեղի ունեցավ XII—XIII դարերում

գրում։ Կերամիկական արտադրության գլխավոր կենտրոններն էին Ռեյ և Քաշան քաղաքները։ XII—XIII դարերի հախճապակյա իրերը պատվում էին կամ անթափանցիկ սպիտակ ջնարակով (глазурь) մետաղյա փայլ ունեցող ջահային նկարազարդումներով կամ թե չէ սպիտակ անթափանցիկ ջնարակի վրա բազմագույն (այսպես կոչված մինաի տիպի) նկարազարդումներով։ XIV—XV դարերից սկսած իրանական հախճապակիներն (առանձնապես սպիտակ ֆոնի վրա կապույտ նկարազարդվածները) ընկնում են չինական արվեստի ազդեցության տակ։

XVIII—XIX դարերում Իրանը վերապրեց սոցիալ-տնտեսական և քաղաքական անկման մի շրջան։ Անկումային բնույթ էր կրում նաև այդ ժամանակաշրջանի արվեստը։ Արևմտա-եվրոպական օրինակների ազդեցության տակ նկարչությունն սկսում է նոր ձևեր ընդունել։ Զարգանում է գործասեղանների վրա յուղաներկերով կատարվող եվրոպական ոգով նկարչությունը, ժանրը, պորտրեն։ XIX դ. առաջին կեսի պորտրետիստներից առավել խոշորը՝ Միրզա Աբուլ-Հասան-խան Գաֆֆարին էր, որն ուներ Սենի-օլ-Մոլք տիտղոսը (1815—1865 թ. թ.)։ Նա իր գեղարվեստական կրթությունն ստացել էր արտասահմանում. նկարել է Թեհրանի պալատական հասարակության ներկայացուցիչների շատ գիպուկ մի շարք պորտրեները։ Յուղաներկերով նկարվում էին նաև գեղեցկուհիներ, պարողուհիներ պատկերող դեկորատիվ նկարներ, փորձեր եղան նկարելու կենցաղային տեսարաններ և ճարտարապետական պեյզաժներ (օրինակ՝ XIX դ. 60—70-ական թվականներին նկարիչ Մահմուդի աշխատասիրած Թեհրանի տեսարանները)։ XX դարում Իրանում առաջ եկավ զուտ եվրոպական ոճի նկարչություն։ 1935 թ. Լենինգրադում կազմակերպված իրանական ցուցահանդեսում ներկայացված էին երկու երիտասարդ իրանական նկարիչների, արդի Իրանի խոշորագույն նկարիչ Քեմալ-օլ-Մոլքի աշակերտների՝ Հասան Վազիրի և Մոհսեն Մոքադդամի գործերը. նրանք հետագայում սովորում էին Փարիզում։ Թեալիստորեն մեկնաբանված նրանց պեյզաժներն ու պորտրեները պահպանում են իմպրեսիոնիզմի ազդեցության որոշ գծերը։

Թեհրանում գործում է գեղեցիկ արվեստների մի ինստիտուտ, որն ունի ճարտարապետական և նկարչական բաժանմունքներ։ Թավրիզի գեղարվեստական դպրոցը պատրաստում է մանրանկարիչներ։

Ժամանակակից Իրանի ձեռքի գեղարվեստական արտադրության մեջ ամենից ավելի խոշոր նշանակությունը գորգագործությունն ունի։ Գորգերի օրնամենտներում նկատելի է եվրոպական գորելենների ազդեցությունը։ Առանձին քաղաքները մասնագիտանում են գեղարվեստական արհեստների առանձին տեսակների մեջ. Ղազվինը հնուց հռչակված է փայտի վրա կատարած փորագրություններով, Շիրազը՝ ոսկորով զարդարված տուփերի և արկղիկների արտադրությամբ, Սպահանը՝ մետաղյա (մասնավորապես՝ արծաթյա) նախշած ու փորագրված իրերով և այլն։

Երաժշտություն։ Իրանական երաժշտական ոճի հիմքերը դրվել են մինչև քր. թվ. առաջին հազարամյակում (Աքեմենյան ժամանակաշրջան, մինչև քր. թվ. 550—331 թ. թ.)։ Այդ ժամանակ Իրանում գոյություն ուներ բազմազան ժանրերով հարուստ ժողովրդական երաժշտություն։ Այդ ժամանակաշրջանին են վերաբերում ազգային երաժշտական-պոետիկական այն էպոսի պատմությունները, որոնք բավականին հետո մտան Ֆիրդուսիի «Շահնամե»-ի սկզբնական բաժինների մեջ։ Այդ ժամանակաշրջանում կազմավորվեցին զորաստրական պաշտամունքի մեհենական երաժշտության բազմազան ձևերը։ Կանոնավորվեց զինվորական գործիքային երաժշտությունը։ Վերջապես, հենց այդ նույն ժամանակ դրվեցին պրոֆեսիոնալ այն երաժշտության զարգացման ամուր հիմքերը, որն զգալի չափով պալատական էր։ Աքեմենյան ժամանակաշրջանի իրանական երաժշտությունը պատմականորեն կապված էր առաջավոր-ասիական հնագույն քաղաքակրթությունների—Ասորեստանի և Բաբելոնի երաժշտության հետ, որոնց կուլտուրան իրանցիները ժառանգել էին։ Իրանի ազգային երաժշտական կուլտուրայի բարձր ծաղկման առաջին շրջանը Սասանյանների (226—651 թ. թ.) ժամանակն էր։ Այդ մասին են վկայում ինչպես գրավոր հիշատակարանները, այնպես էլ կերպարվեստի հուշարձանները, ինչպես օրինակ՝ Թաքեբոստանի երաժշտական տեսարանների ժայռաքանդակները Քերմանշահի մոտ։ Դրանք ցույց են տալիս, որ այդ ժամանակ արդեն առաջանում էին գործիքային անսամբլների այն բոլոր տեսակները, որոնք մինչև այժմ էլ գոյություն ունեն Իրանում։ Առանձնահատուկ շքեղությամբ աչքի էր ընկնում ազգային գարնանային տոնը՝ Նոուրուզը—նոր տարին։ Այդ տոնը տևում էր մի ամբողջ ամիս շարունակ։ Եվ տոնի ամբողջ այդ ընթացքում

կատարում էին երաժշտական գործեր։ Արաբ գրող Քեսրեվին հիշատակում է հետևյալները՝ ա) «երգեր դիմումի» առ աստվածությունը բերք պարգևելու համար, բ) գարնանային երգեր, գ) էպիկական երգեր «հսկաների որդիների մասին», դ) անձրևաբեր համաստեղությունները գովերգող երգեր, այսինքն, անձրևի հմայման երգեր, ե) ոֆերին (վեհապանծ) երգեր, խոսրեվանի (արքայական), մադարաստանի և ֆահլաբադ (Բաբբեղի երգեր)։ Բաբբեղի (կամ՝ Ֆահլապատի)՝ Խոսրով II Փարվեզի (590—628 թ. թ.) պալատական այդ երգչի հռչակն Իրանում հասավ մինչև մեր օրերը։

Սասանյան էպոխայի իրանական ասպետի դաստիարակության սիստեմի մեջ ռազմական գիտությունների կողքին մրցանում էր պարտադիր կերպով նաև երաժշտության ուսուցումը։ Երբ զորոաստրիզմը հայտարարվեց պետական կրոն, մեծապես զարգացավ մեհենական երաժշտությունը։ Դրա պահպանողները զորոաստրական մոգերն էին։ Երաժշտության տեսության բնագավառում սասանյան Իրանում արդեն դրվեցին իրանական մատնատեղային սիստեմի հետագա, ընդհուպ մինչև մեր օրերը կատարած, մշակման բոլոր հիմքերը։ Արաբները, որոնք VII դ. կեսերին նվաճեցին Իրանը, իրենց հետ այնտեղ բերեցին երաժշտական նոր տարատեսակներ, այնպես, ինչպես որ բերել էին իրենց լեզուն, իրենց գիրը և տարածել էին իրենց կրոնը՝ իսլամը կամ մուսուլմանականությունը։ Սակայն նրանց երաժշտական տարատեսակները ոչ միայն դուրս չմղեցին իրանցիների ազգային երաժշտությունը, այլ ընդհակառակը, վերջինիս ազդեցության տակ այդ տարատեսակներն իրենք կրեցին էական փոփոխություններ, որովհետև իրանցիները շատ ավելի բարձր էին իրենց նվաճողներից երաժշտական, ինչպես նաև ընդհանրապես կուլտուրական տեսակետից։ Իրանական երաժշտական կուլտուրան ազդեցություն էր գործում արաբական երաժշտության վրա դեռևս մինչև արաբների Իրան ներխուժելը։ Իսկ հետո՝ արաբական խալիֆաթի գոյության ժամանակաշրջանում այդ ազդեցությունն առանձնակի չափերով մեծացավ։

Շուաբիյաների շարժումը, որն իրենով արտահայտում էր իրանական ժողովուրդների բողոքը մուսուլմանական Արևելքի երկրներում արաբների հեգեմոնիայի դեմ, նախապատրաստեց իրանական կուլտուրայի երկրորդ վերածնունդը։ Դրա կենտրոնը Սամանյան ժամանակաշրջանի (875—999 թ. թ.) Բուխարան էր։ Այդ վերածնունդն սկսվեց նրանով, որ վերականգնվեցին պարսկական լեզվի նախկին իրավունքներն սկզբում պոեզիայի և ոկալ երաժշտության մեջ, իսկ հետո նաև գիտական գրականության մեջ։ XIII դարից սկսած հենց պարսկական լեզվով սկսեցին գրել նաև իրանական երաժշտական տեսաբանները, ինչպես օրինակ՝ Էշ-Շիրազին (1236—1310 թ. թ.), Աբդալ-Քադերը (վախճ. 1435 թ.) և ուրիշները։

Սամանյան ժամանակաշրջանում կազմավորվեցին իրանական պրոֆեսիոնալ ոկալ արվեստի հիմնական ձևերը։ Քասիդի (պանեգիրիկ ներբողի) արաբական ձևը, որն իրանական պոետական ստեղծագործության մեջ գործածվում էր արաբական տիրապետության առավելապես առաջին շրջանում, իր տեղն սկսում է զիջել ուրիշ ձևերին (գազել և այլն)։ Լիրիկական պոեզիայի ստեղծագործությունները գրվում էին ոչ թե ընթերցանության, այլ ոկալ կատարման համար՝ իրանական պրոֆեսիոնալ երաժշտության զարգացած և մշակված այնպիսի ձևերով, որոնց կառուցվածքը սերտորեն կապակցված էր դրանց հիմքում դրված պոետական ձևերի կառուցվածքի հետ։

Մուսուլմանական էպոխայի իրանական երաժշտական արվեստի զարգացման գործում խոշոր նշանակություն ունեցող մի գործոն հանդիսացավ սուֆիական շարժումը։ Ի հակակշիռ օրթոդոքս իսլամի ծայրահեղ ներկայացուցիչների, որոնք թշնամաբար էին վերաբերվում աշխարհիկ ու ժողովրդական արվեստին, սուֆիզմի քարոզիչներն իրենց ուսմունքը տարածելու համար օգտագործում էին ժողովրդական և պրոֆեսիոնալ երգի ձևերը։ Սուֆիական պոետների՝ Ջելալ-էդ-Դին Ռումիի (1207—1273 թ. թ.), Սաադիի (1184—1292 թ. թ.), Հաֆիզի (վախճ. 1389 թ.), Աբդեռահման Ջամիի (1414—1492 թ. թ.) գազելները մինչև մեր օրերն էլ ոկալ ստեղծագործությունների համար ծառայում են որպես տեքստեր։

Եթե սուֆիական պոետների ստեղծագործությունը պոեզիայի և երաժշտության բնագավառում զարգացնում էր իրանական ազգային տարատեսակները որպես աշխարհիկ արվեստներ, ապա դերվիշական օրդենների երաժշտական պրակտիկան վերակենդանացնում էր իրանական ոկալ և գործիքային երաժշտությունը որպես պաշտամունքային արվեստ, որպես դերվիշական սեանսների ծիսակատարության արվեստ։ Ոկալ գործերի կատարումը և արարողական պարերի գործիքային ուղեկցումը գլխավոր միջոցներ էին հանդիսանում դերվիշներին էքստազային վիճակին

հասցնելու, որը և այդ սեանսների նպատակն էր։ Դերվիշական կրոնական երգերի մի առանձնահատուկ ձևը՝ թելքիններն էին՝ հոգևորական սյուժեով երգասացությունները, որոնք կատարվում էին ժողովրդի կուտակման վայրերում՝ քաղաքների հրապարակներում, շուկաներում և այլն։ Դրանց երգում էր դերվիշների խումբն առանձին նախերգիչի հետ միասին։ Թելքիններն ձևն ու նրանց եղանակներն իրենց վրա կրում են նախաիսլամական պաշտամունքային երաժշտության հիմներից առաջանալու հետքերը։

Իրանական ինչպես ժողովրդական, այնպես էլ պրոֆեսիոնալ երաժշտական արվեստը մինչև մեր օրերը բանավոր տրադիցիայի արվեստ է։ Ժողովրդական երգը և գործիքային, գլխավորապես պարային երաժշտությունն Իրանում սերտորեն կապված էին կենցաղի հետ։ Տների պատերից դուրս գալով, երաժշտությունն ամուր կերպով հաստատվում էր քաղաքների և գյուղերի շուկաների հրապարակներում որպես պրոֆեսիոնալ պարողների և պրոֆեսիոնալ կատակարանների, ծաղրածուների ու լարախաղացների ներկայացումների երաժշտական անհրաժեշտ ուղեկցություն։ Երաժշտությունը ժողովրդական տոնախմբությունների անհրաժեշտ պետությունն էր և նրանց տալիս էր փայլ ու աշխուժություն։ Շեփորներից (կառնա), հոբոյներից (զուռնա) և ծնծղաներից (նաքքարա) բաղկացած իրանական ազգային գինվորական նվագախմբերն իրենց հիմնական դերից բացի կատարում են տոնական նվագախմբերի հասարակական դերը, որոնք քաղաքագլուխների կամ քաղաքի կենտրոնում գտնվող միջնաբերդերի դարպասների մոտ կառուցած տաղավարներում՝ նաքքարախանեներում նվագում են հատուկ ծրագրով։ Իրենից ժամանակակից իրանական երաժշտական ստեղծագործության գագաթ է ներակայացնում ոկալ և գործիքային պրոֆեսիոնալ երաժշտությունը։ Այդ երաժշտության համար որպես հիմնական երաժշտական գործիքներ օգտագործվում են՝ պլեկտորային թառը, կանտոցավոր քյամանչան և դայրեն՝ զավալը։

Թատրոն։ Տեղեկություններ իրանական հին թատրոնի մասին (մինչև Իրանի նվաճումն արաբների կողմից քր. թվ. VII դարը) չեն պահպանվել։

Ավելի ուշ ժամանակվա միստերիալ թատրոնը սերտորեն կապված էր շիիթականության տարածման հետ. այդ թատրոնն առաջացավ ժողովրդական այն ներկայացումներից, որոնք կազմակերպվում էին շիիթների նահատակ՝ Օմեյադների կողմից, 680 թվին սպանված իմամ Հուսեյինի (Մուհամմեդի թոռի) մահվան հիշատակին։ XVI դարից սկսած, երբ շիիթականությունը դարձավ Իրանի պետական կրոնը, այդ օրը որպես ազգային սգի օր նշվում էր թատերականացված ճոխ թափորներով, որոնք աստիճանաբար զարգանալով դարձան կրոնական միստերիա՝ «թազիե» (բառացի—ողբ հանդուցյալի վրա)։ Միստերիալ այդ ներկայացումը դրամատիկական կատարյալ ձև ընդունեց XVIII դ. վերջում—XIX դ. սկզբում։ Հուսեյինի մահվան պանտոմիմիկ ներկայացումից բացի ցուցադրվում էին նաև Իսլամի պատմությունից վերցրած ու շիիթականության հետ կապ ունեցող մյուս էպիզոդները։ Այդ ներկայացումները տեղի էին ունենում սովորաբար հրապարակներում—հատուկ տախտակների վրա սարքված տաղավարներում։ Չնայած կահավորանքի ու կոստյումների պայմանականությանը, դեկորացիաների բացակայությանը, դերասանների խաղը միանգամայն ռեալիստական էր և աչքի էր ընկնում զարգացած դերասանական իր տեխնիկայով։ Միստերիաների հասարակական ներկայացումները 1925 թվին արգելվեցին, ներկայումս դրանք ներկայացվում են միայն որոշ մզկիթներում և միայն մուսուլմանների համար։

Իրանական թատրոնում մեծ չափով զարգացավ «Շահ-Նամե»-ի առանձին էպիզոդների դրամատիզացիան։ Դրա մասնակիցները բեմ էին դուրս գալիս դիմակներով՝ փակցրած մորուքներով, թիկնոցներով կամ զրահաշապիկներով։

Տիկնիկային թատրոնն Իրանում ունի երկու հիմնական տեսակ. մեկը՝ «Փեհլեվան քեչելն» է (ճաղատ հերոս), որտեղ տիկնիկները խեղկատակային թատրոնի տիպով հագցնվում են ձեռքերին, և մյուսը՝ մարիոնետների թատրոնը (հեյմեչեբազի)։ Տիկնիկային թատրոնն աչքի է ընկնում կոմիկական տեսարանների և դիալոգների առատությամբ, այնտեղ բավականին ցայտուն արտահայտված է երգիծանքի տարրը։ Ժողովրդական թատրոնի այլատեսակներն են հանդիսանում թափառաշրջիկ խեղկատակների՝ «լութիների» ներկայացումները, որոնք տարածում են ժողովրդական զավեշտախաղը՝ ծաղրածության և լարախաղացության հետ միասին։ Յուրօրինակ է գլխավորապես արհեստավորներից կազմված դերասանական կամավոր ընկերությունների շատ քիչ ուսումնասիրված թատերական աշխատանքը. նրանք երեկոները թատերական ներկայացումներ են տալիս ժողովրդական տներում կամ մասնավոր

անձանց մոտ։ Նրանց ռեպերտուարը՝ կոմեդիա-վավեշտախաղը, որպես կանոն, ներկայացվում է այնպիսի սցենարիայով, որը լայն ասպարեզ է տալիս դերասանական իմպրովիզացիային։ Ամեն մի դերասան մասնագիտանում է մի սցենարիայից մյուսն անցնող, մի որոշ այս կամ այն պերսոնաժ-գիմակի դերը կատարելու մեջ։ Երգելն ու պարելը պարտադիր են։

XIX դ. երկրորդ կեսից և հատկապես XX դ. սկզբում եվրոպական թատրոնի ներթափանցումն առաջացրեց իրանական դրամատուրգիա, որը զարգանում էր գլխավորապես ֆրանսիական դրամատուրգիայի (Մոլիեռ և ուրիշն.) ազդեցության տակ։ Մեծ ժողովրդականություն էին վայելում ազրբեջանական նշանավոր դրամատուրգ Միրզա-Ֆաթալի-Ախունդովի (1812—1878 թ. թ.) պարսկական լեզվով թարգմանված կոմեդիանները։ Դրանց հաջորդեցին իրանական հայտնի գործիչ Մալքոմ-խանի (վախճ. 1908 թ.) քաղաքական փայլուն կոմեդիաները։ 1926 թվից հետո լույս տեսան Խալխալիի, Նեֆիսիի և Հիդայեթի պատմական դրամաները։ Թեհրանում XX դ. 20-ական թվականներին կառուցվել է մշտական թատրոնի մի շենք և կազմակերպվել է թատերական դպրոց։

IX. ԻՐԱՆԻ ԵՎ ՍՍՌՄ-Ի ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

Ռուս մարդկանց ծանոթությունն Իրանի հետ մինչև XIX դ. կեսը կրում էր պատահական բնույթ, թեպետ և դեռ XV դարում առանձին վաճառականներն առևտրական նպատակներով եղել են Պարսկաստանում։ Հատկապես հետաքրքրական է Տվերի վաճառական Աֆանասիյ Նիկիտինի ճանապարհորդությունը. Նիկիտինը 1465—1472 թ. թ. եղել է Պարսկաստանում և Հնդկաստանում ու թողել է «Երեք ծովից անցնելը» գրվածքը։ Պարսկաստանի հետ XVI դարում (Բորիս Գոդունովի օրոք) Մոսկովյան Ռուսիայի քիչ թե շատ կանոնավոր հարաբերությունների հաստատումը չփոխեց դրությունը։ Բայց արդեն XIX դ. առաջին կեսում լույս տեսան Պարսկաստանում լինելու մասին Դյուգամելի (1838 թ.), Մուրավեվի (1839—1840 թ. թ.) հոդվածակնարկները, Զիբիկովի (Ռուսաստանի ներկայացուցիչը 1849—1852 թ. թ. թյուրք-պարսկական սահմանագծման ժամանակ) «Ճանապարհորդական ժուռնալը»։ Կ. Բոդեն նույնիսկ երկհատորանոց մի աշխատություն թողեց Իրանի արխեոլոգիայի մասին, որը լույս տեսավ անգլերեն լեզվով «(Travels in Luristan and Arabistan», 1845 թ.), և մի քանի հոդվածներ «Ռուսական աշխարհագրական ընկերության զեկուցագրերում» և «Դրաղարան ընթերցանության համար» սերիայով լույս տեսնող հրատարակություններում։

Հետաքրքրությունը դեպի Իրանը աշխուժանում էր քաղաքական լարված ժամանակաշրջաններում՝ Ավգանստանի դրության կապակցությամբ, Հերատի արշավանքների (1830 թ. և 1840—1850 թ. թ.) կապակցությամբ։ Համապատասխանորեն աճում էր նաև առանձին դերատեսչությունների շահագրգռվածությունը։ Դրա արդյունքն եղավ ֆինանսների մինիստրության գծով դեպի Իրան կատարած մի շարք գործուղումները (օրինակ Մ. Հ. Տոմարի գործուղումը 1893—1894 թ. թ.)։

XIX դ. կեսերին ռուսական արևելագիտության դպրոցի առաջացման ժամանակ սկսվեց Իրանի ավելի սիստեմատիկ ուսումնասիրությունը։ Առաջին պրոֆեսոր-իրանիստներն էին Ա. Վ. Բոլդիրեվը (Մոսկվայի համալսարանում, 1811-ից մինչև 1842 թ. թ.), Օ. Ի. Սենկովսկին (Պետերբուրգի համալսարանում, 1828-ից մինչև 1847 թ. թ.), Ա. Կ. Կազեմ-բեկը (Կազանի համալսարանում—1826-ից մինչև 1849 թ. թ. և Պետերբուրգի համալսարանում—1849-ից մինչև 1870 թ. թ.)։ XIX դ. կեսերից նախաձեռնվեցին մի շարք գիտական էքսպեդիցիաներ դեպի Իրան՝ Ն. Վ. Խանիկովի էքսպեդիցիան դեպի Խորասան 1858 թ. (արդյունքները հրապարակվեցին ֆրանսերեն լեզվով՝ Փարիզի աշխարհագրական ընկերության աշխատությունների մեջ). Զարուզնու ճանապարհորդությունն Իրանին սահմանակից Արևելքում. Կազանի համալսարանից 1842—1845 թ. թ. կազմակերպած Ի. Ն. Բերեզինի գիտական գործուղումը, որը հրապարակվեց «Ճանապարհորդություն Արևելքում» (2-րդ հատորը նվիրված է Պարսկաստանին). 1860—1861 թ. թ. ակադեմիկոս Բ. Ա. Դորնի և Մելգունովի ճանապարհորդությունը դեպի Պարսկաստանի Մերձկասպյան պրովինցիաները, որի արդյունքն եղան այդ մարզերի պատմության, լեզվի և աշխարհագրության մասին մինչև այժմ իրենց արժեքը չկորցրած հետազոտությունները։ Պրոֆեսոր Վ. Ա. Ժուկովսկու այցելությունը Պարսկաստան շատ նյութ տվեց պարսկական բարբառների և ժողովրդական զրականության ու-

սումնասիրության համար։ Այդ աշխատանքը շարունակեցին Ա. Ա. Ռոմասկևիչը և Վ. Ա. Իվանովը։ Ռուս գիտնականներին են (Տումանսկուն, Կազեմ-բեկին, Բաուլինին, Բատյուշկովին, Սեմյոնովին, Վ. Ա. Ժուկովսկուն և ուրիշներին) պատկանում Իրանում ազանդավորական շարժման (բաբիականներ, իսմայիլականներ և այլն) ուսումնասիրությանը վերաբերող ամենաարժեքավոր, հիմնական աշխատությունները։ Մեծ նշանակություն ունեցան նաև Կ. Ա. Ինոստրանցևի աշխատությունները Պարսկաստանի կուլտուրայի՝ գլխավորապես սասանյան Պարսկաստանի կուլտուրայի մասին։ Վերջապես, ակադեմիկոս Վ. Վ. Բարտոլդը (1869—1930 թ. թ.) նախամոնղոլական և մոնղոլական էպոխայի Թյուրքեստանին նվիրած իր հիմնական աշխատություններում շատ բան կատարեց նաև հատկապես Իրանի պատմության և կուլտուրայի պատմության բնագավառում. նրա «Իրանի պատմա-աշխարհագրական տեսություն» աշխատությունը վերջերս թարգմանվել է պարսկերեն։

Մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ ռևոլուցիան Ռուսաստանի և Իրանի միջև կային քիչ թե շատ ամուր գիտական-կուլտուրական կապեր, չնայած որ շատ խոշոր գիտնականներ զբաղվում էին Պարսկաստանի ուսումնասիրությամբ, և չնայած, որ շատ իրանցիներ, այդ թվում նաև կաջարական դինաստիայի արքայորդիները, իրենց կրթությունն ստացել էին Ռուսաստանում։

ՍՍՌՄ և Իրանի միջև քաղաքական սերտ բարեկամությունը հաստատելուց հետո, սիստեմատիկ ու ամուր կուլտուրական համագործակցություն հաստատվեց նրանց միջև։

Սովետա-իրանական բարեկամության հենց առաջին տարիներից համագործակցությունն հաստատվեց երկու երկրների գիտնականների միջև էպիդեմիաների ու էպիզոոտիաների դեմ պայքարելու բնագավառում, գյուղատնտեսության վնասատուների դեմ մղվող պայքարում, որը և ամրապնդվեց Թեհրանում 1935 թ. սովետա-իրանական հատուկ համաձայնությամբ։ Այդ առաձնահատուկ հարցերի շուրջը հաճախակի գումարվել են սովետա-իրանական կոնֆերանսներ։ Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ ռևոլուցիայից հետո զգալիորեն մեծացավ Ռուսաստանի գիտական շրջանների հետաքրքրությունն Իրանի կլասիկ կուլտուրայի նկատմամբ։ 1920 թվին ստեղծվեց Պետական էրմիտաժի Արևելքի բաժինը։ Նրա կազմակերպած ցուցահանդեսների («Սասանյան հնություններ» 1922 թվին, «Մուսուլմանական հախճապակիներ»—1923 թ., «Իրանի Կովկասի և Միջին Ասիայի միջնադարյան հուշարձանները»—1925 թ., «Արևելքի կուլտուրան և արվեստը»—1931 թ.) սերիան սովետական ինտելիգենցիային ծանոթացրեց Իրանի պատմության տարբեր էպոխաներում նրա կուլտուրայի ամենաբազմազան նմուշների հետ։

Դեպի իրանական գրականությունը եղած հետաքրքրությունն արտահայտվեց Սաադիի, Հաֆիզի, Օմար Խայամի, Ֆիրդուսիի և իրանական պոեզիայի մյուս կլասիկների ստեղծագործությունների ռուս. լեզվով կատարված բազմաթիվ թարգմանություններով։ Այդ թարգմանություններից լավագույնները հրատարակվեցին առանձին գրքերով, ինչպես և հրապարակվեցին „Антология иранской поэзии" ժողովածուի մեջ։

ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Արևելագիտության Ինստիտուտը գլխավորեց արևելյան կուլտուրաների, այդ թվում իրանական կուլտուրայի ուսումնասիրության գործը։ Սովետական գիտնականներն ուսումնասիրում են Իրանի նաև ժամանակակից կուլտուրան։ ՍՍՌՄ-ի առանձին ուսումնական հաստատություններում մտցվեց Իրանի ժամանակակից գրական լեզվի դասընթաց։

Սովետա-իրանական բարեկամության մի ցուցադրում էր 1934 թ. մայիսին Ֆիրդուսիի ծննդյան 1000-ամյակի առթիվ Մոսկվայում տեղի ունեցած հանդեսները։ Հոբելյանի կապակցությամբ լույս տեսան մի շարք գրքեր և մոնոգրաֆիաներ։ Լենինգրադում և Մոսկվայում բացվեցին ցուցահանդեսներ՝ «Շահնինդրադում և Մոսկվայում բացվեցին ցուցահանդեսներ՝ «Շահնամեն և Իրանի, Կովկասի ու Միջին Ասիայի կերպարվեստը»։ Նույն այդ տարվա աշնանը Թեհրանում Ֆիրդուսիի հիշատակին նվիրված առնահանդեսներում պատվավոր տեղ էր գրավել սովետական գիտնականների պատգամավորությունը. այդ պատգամավորությունը գլխավորում էր ակադ. Ի. Ա. Օրբելին, որն այնտեղ ավեց մի զեկուցում «Շահ-Նամե»-ի մասին։

Սովետա-իրանական կուլտուրական կապերի մի կարևոր կետն էր իրանական արվեստին և արխեոլոգիային նվիրված III Միջազգային կոնգրեսը, որն անցկացվեց Լենինգրադում՝ 1935 թվին։ Պետական էրմիտաժում բացվեց իրանական արվեստի ցուցահանդես, որը կազմված էր սովետական հարուստ հավաքածուներից, ինչպես նաև Իրանի կառավարության ուղարկած արժեքավոր էքսպոնատներից։

Գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ մղած Հայրենական Մեծ պատերազմը, որը ՍՍՌՄ-ին կանգնեցրեց ֆաշիստական բարբարոսության դեմ հանուն ժողովուրդների անկախության և նրանց ազգային կուլտուրայի համար պայքարող մարդկության գլուխը, ամբողջ աշխարհում, այդ թվում նաև Իրանում առաջացրեց լայն ու խորը հետաքրքրություն դեպի սովետական կուլտուրան։ Ջերմ համակրանքներ էին արտահայտում իրանական ինտելիգենցիայի առաջավոր ներկայացուցիչների այն արձագանքները, որ նրանք ուղարկեցին «Ամբողջ աշխարհի գիտնականներին ՍՍՌՄ-ի գիտնականների կոչի» առթիվ 1941 թ. հոկտեմբերին, ինչպես նաև կուլտուրայի պաշտպանության համար 1942 թ. դեկտեմբերին Մոսկվայում կայացած սովետական ինտելիգենցիայի միտինգի առթիվ։ Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ հաջողությամբ զարգանում էր սովետական և իրանական գիտնականների գիտական համագործակցությունը։ Դրան օրինակ կարող է ծառայել ակադ. Ե. Ն. Պավլովսկու (հետագայում՝ իրանական գիտությունների Ակադեմիայի պատվավոր անդամ) մեկնելը Իրան. նա գլխավորում էր էպիդեմիոլոգիական մի էքսպեդիցիա, որը հավաքեց գիտական արժեքավոր նյութ և մեծ օգնություն ցույց տվեց իրանական կառավարությանը՝ էպիդեմիկ հիվանդությունների դեմ պայքար կազմակերպելու գործում։ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիան իր պատվավոր անդամ ընտրեց իրանական Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, պարսկական գրականության խոշորագույն մասնագետ, ականավոր հասարակական գործիչ պրոֆ. Մոհամմեդ-Ալի Ֆորուղիին (վախճ. 1942 թ.)։

Վերջին տարիներում լայն թափ ստացավ գրքերի փոխանակությունը ՍՍՌՄ և Իրանի միջև։ 1942 թ. գրքերի ընդհանուր շրջանառությունը հասավ մեկ և կես հազար գրքի։

ՍՍՌՄ և Իրանի միջև հաստատված սերտ բարեկամության վառ ցուցադրում հանդիսացան նաև արվեստի սովետական վարպետների բազմաթիվ համերգային ելույթներն Իրանում։ Հայրենական Մեծ պատերազմի ժամանակամիջոցում Իրան այցելեցին ՍՍՌ Միության Մեծ թատրոնի դերասանների, Հայաստանի, Ադրբեջանի, Տաջիկիստանի և Վրաստանի օպերային թատրոնների անսամբլները, կարմիր բանակային գեղարվեստական ինքնագործունեության կոլեկտիվները, էստրադայի դերասանների անսամբլը։ Իրանում երաժշտական տուրնե կատարեց կոմպոզիտոր Լեվ Կնիպերը։ Ի նշան Իրանի և ՍՍՌՄ արվեստի աշխատողների բարեկամության Թեհրանում 1942 թ. փետր. 15-ին տրվեց սիմֆոնիկ մի համատեղ համերգ։ Իրանական հասարակայնությունը և մամուլը ջերմորեն արձագանքեցին սովետական դերասանների ելույթներին։ Իրանական ազգային երաժշտական նյութը եվրոպական գործիքային տեխնիկայի և մատնատեղային այլ կարգի հետ զուգորդելու այն մեթոդները, որոնց մշակել են սովետական կոմպոզիտորները, բարձր գնահատություն են ստացել Իրանում (տես՝ օրինակ՝ Իրանի ականավոր երաժշտագետ պրոֆ. Ֆաթիմ Սեյահի «Ռուսական երաժշտության օրինակը» հոդվածը, որը տպագրվել է «Ժուռնալ դ՝ Թեհերան»-ի 1942 թ. հունիսի 6-ի համարում)։

Վերջին տարիների ընթացքում սովետական կերպարվեստը նույնպես առանձնահատուկ ժողովրդականություն ձեռք բերեց Իրանում. այդ բանին նպաստեց 1942 թ. հուլիսին Թեհրանում բացված սովետական պլակատի ցուցահանդեսը, որն օրեկան հաճախում էին 1.500—2.000 դիտողներ։ Սովետական պլակատներ և «ՏԱՍՍ-ի պատուհաններ» կարելի է տեսնել Թեհրանի և երկրի գավառային քաղաքների փողոցներում, խանութներում, թատրոններում ու հասարակական զանազան հաստատություններում։

Իրանում աճեց հետաքրքրությունը նաև դեպի սովետական գրականությունը, որը նվիրված է ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի մղած պայքարին։ Սովետական զինվորական թղթակից Ա. Պոլյակովի «Թշնամու թիկունքում» գիրքը թարգմանված է ֆարսերեն և հրատարակված է Թեհրանում։ Մեծացավ հետաքրքրությունը նաև դեպի ռուս կլասիկ գրականությունը։ Այսպես օրինակ՝ Հայրենական պատերազմի առաջին տարվա ընթացքում ֆարսերեն լեզվով լույս տեսան Գորկու, Գոգոլի, Դոստոևսկու մի շարք երկերը։

Հսկայական հաջողություն ունեցան սովետական գեղարվեստական և խրոնիկային ֆիլմերը։ Ռեժիսյոր Պոսելսկու ղեկավարությամբ սովետական մի կինոէքսպեդիցիա երկարատև ուղևորություն կատարեց Իրանում. դրա արդյունքը եղավ զոհուրբեց Իրանի բնության, կուլտուրայի նշանավոր հուշարձանների և տնտեսության հետ, նրա բնակչության կյանքի հետ։

Դեպի Սովետական Միությունը, նրա կուլտուրան ու կենցաղը, դեպի Կարմիր Բանակի հերոսական պայքարն ունեցած Իրանի բնակչության բոլոր խավերի հետաքրքրության վառ ցուցանիշն էր Թեհրանում 1942 թ. նոյեմբերի 7-ին բացված «ՍՍՌՄ 25 տարին» մեծ ցուցահանդեսի և Կարմիր Բանակի 25-ամյակի առթիվ բացված ցուցահանդեսի հաջողությունը։

X. ԿՐՈՆԸ

Իրանի ամբողջ բնակչության մոտ 75%-ը—մուսուլման շիիթներ են, մոտ 18,5%-ը՝ մուսուլման-սուննիթներ։ Ինչին է պարսերի (զորքաստարականների) թիվը, որոնց հիմնական մասը (մոտ 100 հազ.) վերաբնակվեց Հնդկաստանում։ Կան նաև այլ դավանության անձանց՝ հայերի, նեստորականների, ասորիների, քրիստոնյա կաթոլիկների, հրեաների և այլ ոչ մեծ խմբերը։

Ներկայումս մուսուլմանական հոգևորականությունը զրկված է իր վաղեմի իրավունքներից և նրա հողերը (վակուֆները) գտնվում են կառավարության վերահսկողության տակ։ Չնայած դրան, Իրանի կուլտուրայի և կենցաղի վրա դեռևս չափազանց մեծ է կրոնական հասկացողությունների ազդեցությունը։

Շիիթներն սկզբում մի աղանդ էին՝ VII դ. կեսերից Հարավային Իրաքում առաջացած որպես մի քաղաքական պարտիա («Շիա Ալի»—Ալիի պարտիա)։ Այդ պարտիան գլխավորեց նվաճված ժողովուրդների անբավականությունն արաբների կառավարող դինաստիայից։ Շիիթների շարժումը VIII—IX դարերում տարածվեց գլխավորապես Իրանում (Պարսկաստանում) և նույնպես ուղղված էր արաբական տիրապետության դեմ։ 1500 թ. շիիթականությունը վերջնականապես հաղթանակեց որպես Իրանի պետական կրոն։ Ի տարբերություն մուսուլման-սուննիթների շիիթները չէին ճանաչում սուննիթական խալիֆներին և նրանց էին հակադրում իմամների իրենց դինաստիան՝ Ալիի ժառանգներին։ Ընդունելով Ղուրանը որպես գլխավոր կրոնական գիրք, շիիթները ժխտում էին նրա սուննիթական մեկնությունն ըստ ավանդությունների (հադիսների) և մշակեցին իրենց սեփական սուրբ ավանդությունը (խաբարի)։ Շիիթական իմամների մասին եղած ուսմունքի մեջ արտացոլված է հոգիների վերաբնակեցման պատկերացումը։ Իմամների դինաստիայի վերջանալուց հետո նրանք ոկսեցին հավատալ «քողարկված իմամի» գոյությանը, որի կերպարը շուտով միաձուլվեց մաքդիի կերպարի (մուսուլմանական մեսիայի) հետ։ Հիմնական հոսանքի կողքին շիիթների մեջ գոյություն ուներ լայն աղանդավորական շարժում։ Աղանդներից ամենագլխավորը՝ իսմայիլականների աղանդն իր անունը ստացել է Իսմայիլից՝ Ալիի 7-րդ ժառանգից։ Իսմայիլիզմն առաջացավ VII դարում, նա IX դարի երկրորդ կեսում դարձավ գաղտնի մի կազմակերպություն և իր ծայրահեղ հոսանքներում՝ կարմատների մեջ X դարում, տոսասիների մեջ XI—XIII դարերում զարգացրեց տեռորիստական գործունեություն նվաճողների, գլխավորապես թյուրք սելջուկների դեմ։ Շիիթ-իսմայիլականների գոգմայական մշակած ուսմունքը դարձավ Ֆաթիմիդյան խալիֆաթի (909—1169 թ.թ.) պաշտոնական դավանանքը։ Մեսիայական սպասումներն իսմայիլիզմը զուգորդում է իրանական և սիրիական աղանդներից փոխ առած միստիկական և պանթեիստական ուսմունքների հետ։ Ներկայումս իսմայիլիզմ գոյություն ունի Հարավային Իրանում, Ավղանստանում, Հնդկաստանում։ Բոմբեյում գտնվող իսմայիլականների ժառանգական գլխավոր (աղա-խանը) պաշտոնապես ճանաչված է բրիտանական կառավարության կողմից և ունի «Նորին մեծություն» տիտղոսը։ Բոլոր երկրների իսմայիլական համայնքները մշտական հարկ են վճարում աղա-խանին։

Շիիթական մյուս աղանդներից ամենից ավելի հետևորդներ ունի բաբիզմը։ Դրա հիմնադիրը Միրզա-Ալի-Մուհամմեդն էր (1821—1850 թ.թ.)՝ Շիրազից, որն իրեն կոչեց «Բաբ» (դարպաս),—որտեղից և առաջացան աղանդի անունը,—այսինքն մի միջնորդ՝ աստծու և մարդկանց միջև։ Բաբիզմը ձգտում էր իսլամը մաքրել սնոտիապաշտությունից՝ ֆանատիզմից և առաջադիմությունը խափանող զանազան նստվածքներից։ Բաբիզմի միստիկական կրոնական ուսմունքը զուգորդվում էր այդ ժամանակվա համար առաջավոր սոցիալական հայացքների հետ (կանանց իրավահավասարության հարցում, դաստիարակման հումանիստական մեթոդների, եվրոպական կուլտուրայի առաջադիմական կողմերին և տեխնիկային մերձենալու հարցերում)։ Պաշտոնական հալածանքների և մահապատիժների հետևանքով բաբիզմն Իրանում հնարավորություն ուներ զարգանալու միայն

անվեղալ կերպով. սակայն նա լայնորեն տարածվեց Իրանի սահմաններից դուրս՝ գլխավորապես բեխաիզմի (Բեխա-օլլահի անունով, իսկական անունը՝ Միրզա-Հուսեյին-Ալի-Նուրի, 1817—1899 թ. թ.) ձևով, որին հետևողներ կան նաև Ֆրանսիայում, Անգլիայում և Նույնիսկ Ամերիկայում (XX դ. սկզբին նրանց թիվը մոտավորապես 1 մլն. մարդ էր)։

Շիիթների ուսմունքը ներառավ Իրանի հին կրոնի՝ զորոաստրականության շատ տարրերը։ Վերջինիս հիմնադիրը համարվում է կիսաառասպելական Զորոաստրը (կամ Զարատուշտրա=Զրադաշտ) VII դարում մինչև քր. թվ.։ Զորոաստրականների սուրբ գիրքը՝ «Ավեստա»-ն մեզ է հասել քր. թվ. III—IV դ. դ՝ խմբագրությամբ, սակայն նրա հնագույն մասերը (գոտեր՝ կրոնական բանաստեղծական հիմներ) շատ ավելի հին են։ Զորոաստրականության համար բնորոշ է շատ հին այն պայքարի պատկերացումը, որը մղվում է՝ սկզբում հավանաբար լույսի աստված եղած, իսկ ավելի ուշ ժամանակներում համընդհանուր աստված ու աշխարհի արարիչ դարձած Ահուրա-Մազդայի (այդտեղից էլ զորոաստրականության մյուս անունը՝ մազդեականություն) և չարության աստված Ահրիմանի ու նրա դևերի միջև։ Մազդեականությունը մշակեց անդրշիրիմյան կյանքի, աշխարհի վերջի, մեռածների հարություն առնելու ու Ահուրա-Մազդայի վերջին դատաստանի մասին եղած ուսմունքը։ Մեսսիայի՝ աշխարհի փրկիչի մասին եղած ուսմունքն ընկալվեց հրեաների, քրիստոնեության և պարսիկ-շիիթների կրոնների մեջ։ Զորոաստրականությունն իր տեղը սկսեց զիջել մուսուլմանականությանը VII—VIII դարերում, XVIII դ. վերջում բազմաթիվ զորոաստրականներ ոչնչացվեցին Կաջարների նոր դինաստիայի կողմից։ Մազդեականության արդի ձևը, այսպես կոչված պարսիզմը, պահպանում է դուալիստական հին հայացքներ, թեպետ և նրա մեջ զգալիորեն ուժեղացան ամենազոր մեկ աստվածի պատկերացումները։ Պարսերի երկրպագությունը կրակին հիմք հանդիսացավ նրանց «կրակապաշտներ» անվանելու համար։ Երկիրը չպղծելու համար պարսերն իրենց մեռելներին թաղում էին հատուկ «լռության աշտարակներում», թողնելով որ նրանց դիակներն ուտեն գիշատիչ թռչունները։ Իրանում ապրող պարսերը կոչվում են գեբրեր։

Մազդեականության ուժեղ ազդեցության տակ քր. թվ. III դարում ձևավորվեց մանիքեականությունը (ուսմունքի առաջնորդական հիմնադիր Մանիի անունով)։ Այդ ուսմունքն ընդունում էր բարու և չարի միջև եղած պայքարը, աստծու ու սատանայի միջև եղած պայքարը, աշխարհի վերջը, արդարներին դրախտում պարգև տալը և մեղավորներին դժոխքում պատժելը։ Իր մեջ վերցնելով խալդա-բաբելական և քրիստոնեական որոշ առասպելներ, մանիքեականությունն իր հերթին խոշոր ազդեցություն գործեց միջնադարյան հերձվածների (աստվածասերների, ալբիգոյականների, պավղիկյանների) կազմավորման վրա։

Центр Восстановления АН Арм. ССР
БИБЛИОТЕКА
ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկություններ 3
2. Ֆիզիկական աշխարհագրություն 3
Ռելիֆ 3
Կլիման 7
Հիդրոգրաֆիա 8
Ծովածոցերը, գետերը, լճերը 9
Հողերը 11
Իրանի բուսականությունը 11
Կենդանական աշխարհը 13
3. Տերիտորիան և բնակչությունը 13
4. Էկոնոմիկան 16
Տնտեսության ընդհանուր բնութագիրը 16
Գյուղատնտեսությունը 20
Ագրարային հարաբերություններ 20
Արդյունաբերություն 24
Արդյունահանող արդյունաբերություն 24
Թշակով արդյունաբերություն 26
Տրանսպորտ 29
Արտաքին առևտուրը 30
Իրանի և ՍՍՌՄ-ի տնտեսական կապերը 32
Ֆինանսներ և դրամային սիստեմ 34
5. Պատմական ակնարկ 35
Իրանը հին դարերում 35
Իրանը միջին դարերում 37
Իրանը XIX դարում 43
Իրանը XX դարի սկզբին 47
1906—1911 թ. թ. ռևոլուցիան 48
Իրանը համաշխարհային առաջին պատերազմի նախաբյակին և պատերազմի ժամանակաշրջանում 51
Իրանը համաշխարհային առաջին պատերազմից հետո (1919—1939 թ. թ.) 52
Իրանը համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ 59
6. Պետական կարգը 65
7. Զինված ուժերը 67
Զինված ուժերի կազմը 67
Կոմպլեկտավորումը և ծառայության ժամկետները . . . 68

Ցամաքային և օդային ուժերի անձնակազմի քանակը . 68
8. Կուլտուրան 69
Ժողովրդական կրթություն 69
Մամուլ 70
Լեզու 71
Գրականություն 74
Արվեստ 89
Երաժշտություն 95
Թատրոն 98
9. Իրանի և ՍՍՌՄ-ի կուլտուրական կապերը 100
10. Կրոնը 106

ՎՖ 00783, պատվեր № 1, տիրաժ 500, 7 տպագր. մամուլ

Հեռակա Մանկավարժական Ինստիտուտի տպարան, Երևան, Տերյան 123